

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԻՆՉԵՆՈՐԶՈՒՄԻ ԵՎ ԻՏԻՆՈՐԶՈՒՄԻ

Վերջին տարիներին իրար են հաջորդում տարբեր պետությունների և միջազգային կազմակերպությունների՝ Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերը: Միևնույն ժամանակ իրար են հաջորդում հայ-թուրքական «հաշտեցման» տարաբնույթ նախաձեռնությունները. հանձնաժողովներ, քաղաքագետների և պատմաբանների հանդիպումներ, գիտաժողովներ...

Ի՞նչ կապ կա այս երևույթների միջև: Մեր կարծիքով՝ այս ամենի բուն նպատակը «Հայ դատ» հասկացությունը իմաստափոխելը, աղավաղելը և այն սոսկ Հայոց ցեղասպանության ճանաչման-չճանաչման խնդրի վերածելն է՝ որպես նախաքայլ մի օր այն «լուծելու» թուրքիայի՝ Հայոց ցեղասպանության ճանաչումով և հայոց վնասների դիմաց դրամական փոխհատուցմամբ: Սա լիովին համատեղվում է աշխարհում ամեն ինչ ֆինանսական արժեչափերով գնահատելու համատարած երևույթի հետ...

Այս դավադիր ծրագիրը, դժբախտաբար, հայկական միջավայրում (և՛ ՀՀ-ում, և՛ սփյուռքում) ունի իր կատարածությունները՝ քաղաքական գործիչներ, դիվանագետներ, պատմաբաններ, այլ բնագավառների աշխատողներ: Սրա մեկ օղակն էլ Համաաշխարհային հայկական կոնգրեսի կազմակերպած ու Երևանում ս.թ. մայիսի առաջին օրերին կայացած գիտաժողովն էր, որի խորագիրն իսկ դավադրություն էր հոտում...

Ցավոք, Հայոց ցեղասպանության հարցում նույնիսկ հայկական միջավայրում չկա միասնական մոտեցում: Դրա համար, իհարկե, անհրաժեշտ է գիտաժողովների գումարումը: Պետական և ակադեմիական շրջանակներում առ այսօր հստակ չեն Հայոց ցեղասպանության ժամանակային ու տարածքային ընդգրկումները, զոհերի թիվը, պատասխանատուների շրջանակը, ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման ռազմավարությունը, թե՞ մարտավարությունը լինելու խնդիրը և այլն: Սակայն ակնհայտ է, որ նման հանդիպումների բուն խնդիրը սրանք չեն, այլ հայությանը թուրքերի հետ «հաշտեցնելու» հոգեբանական մշակումը: Դա վերջերս պարզորոշ խոստովանեց այսպես կոչված «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի» անդամ, մոսկվաբնակ քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանը՝ հայտարարելով, թե թուրքերը կճանաչեն Հայոց ցեղասպանությունը, եթե նախօրոք իմանան հայոց հատուցման պահանջների նշածողը: Ընդ որում, լռելյայն հասկացվում է, որ թուրքերը տարածքային հատուցման մասին լսել անգամ չեն ուզում...

Մի՞թե այնքան մոռացկոտ ենք դարձել, որ չհիշենք այսօրվա աշխարհի հանկերգը, թե «պետությունների տարածքային ամբողջականությունը սուրբ սկզբունք» է: Թուրքերը, բոլոր թուրքերը՝ ամենաֆաշիստական ազգայնամուլներից մինչև «հումանիստներն» ու Հայոց ցեղասպանությունը ճանաչողները, հստակորեն հայտարարում են, որ անգամ մեկ թիզ հող չունեն

ենց հայերին վերադարձնելու: Ադրբեջանցի թուրքերն իսկ, արցախյան պատերազմում խայտառակ պարտություն կրելուց հետո, մինչ օրս, կրկնում են, որ իրենք ևս հայերին տալիք հող չունեն, թեև երբեմնի բռնագրավյալ հայկական որոշ հողակտորները, արյան գնով, վերագտել են իրենց տիրոջը՝ ավելի քան տասը տարի:

Նման պայմաններում հայ-թուրքական «հաշտեցման» մասին խոսելն իսկ ավելորդ է, մինչդեռ ակտիվանում են «հաշտեցման» նախաձեռնությունները՝ օտարների բացահայտ քաջալերանքով...

Մեզ համար «Հայ դատ» հասկացությունը Հայոց ցեղասպանության հետ ունի հետևյալ առնչությունը՝ երկրորդի միջոցով թուրքերը փորձեցին լուծել առաջին խնդիրը: «Հայ դատը», ըստ մեզ, բաղկացած է բովանդակային հետևյալ եռամիասնությունից.

ա) հայոց Հայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի ամբողջության վերատիրումը.

բ) այդ տարածքի վրա հայկական ամբողջական գերիշխանության հաստատումը.

գ) այդ տարածքում ազգահավաքը:

Կրկնում ենք՝ **Հայոց ցեղասպանության ճանաչման-չճանաչման հարցը, ըստ մեզ, այսօր կապ չունի Հայ դատի հետ:**

Այստեղից էլ՝ մեր համոզումները.

- Այն բոլոր պետությունները, միջազգային կազմակերպությունները և նույնիսկ հայանուն մարդիկ, ովքեր ճանաչում են հայ ազգի օրինական իրավունքներն իր Հայրենիքի տարածքների նկատմամբ, հայ ազգի բարեկամներ են, ովքեր գործնականում աջակցում են այդ իրավունքների վերատիրմանը՝ դաշնակիցներ: **Իսկ նրանք, ովքեր ճանաչում են միայն Հայոց ցեղասպանությունը և ժխտում հայոց հողային իրավունքները կամ լռում այդ մասին, ավելի վատ թշնամիներ են, քան թուրքերը,** քանի որ նրանց նպատակն է բթացնել հայության զգոնությունը և Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը շահարկել իրենց զանազան հաշիվների համար (ի դեպ, բացի Լիբանանից, մյուս բոլորի «ճանաչում»-ներում ակնարկ իսկ չկա հայոց հողային, օրինական իրավունքների մասին):

«Հայ դատը» ցեղասպանության ճանաչմանը հավասարեցնելու փորձերին հակադարձելը ինքն իրեն հարգող յուրաքանչյուր հայրենասեր ու պատվախնդիր հայի պարտականությունն է: Դեռ կա վրեժը...

Հայ դատը առաջին հերթին Հողի՝ դատ է, հայոց Հայրենիքի վերատիրման խնդիր, որն իրագործվում է մարտի՝ դաշտում: «Սահման քաջաց՝ զենն իւրեանց» պատգամել են մեր նախնիները՝ հազարավոր տարիներ առաջ: Հավատարիմ լինենք այս պատգամին և չտարվենք ցեղասպանության ճանաչմամբ հողեր «ազատագրելու» անիրական և հիմար պատրանքներով: **Հողը չեն նվիրում, այն նվաճում են...**

1918 ԹՎԱԿԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐ

1918 թ. հունվարի վերջերին, խախտելով Երզնկայի զինադադարը, թուրքական զորքերը գրավեցին Արևմտյան Հայաստանը, այնուհետև ներխուժեցին Արևելյան Հայաստան: Մայիսի 15-ին թուրքերը մտան Ալեքսանդրապոլ և առաջ շարժվեցին դեպի Էջմիածին ու Երևան:

Մայիսի 19-ին թուրքական 36-րդ դիվիզիան, որը Դարդանելում տարած հաղթանակների համար անվանվում էր Դարդանեյան կամ Գելիբոլլու, Շևքի փաշայի գլխավորությամբ ներխուժում է Արարատյան դաշտ և հաջորդ օրը գրավում Սարդարապատից 10 կմ հեռու գտնվող Արաքս կայարանը: Այստեղով էր անցնում Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգիծը: Թուրքական մյուս զորամասը, Լուռնի ու նրա շրջակայքը կործանելով, հասել էր Դարաքիլիսա, որտեղից պետք է անցներ Թիֆլիս: Երրորդ զորամասը խնդիր ուներ գրավել Բաշ Ապարանը և շարժվել դեպի Երևան, ապա՝ Բաքու:



Թ. Նազարբեկյան

Ողբերգական այս օրերին հայկական զորքերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանը և Երևանյան զորամասի հրամանատար, գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը հաշտվել էին զենքը վայր դնելու մտքի հետ՝ հետագա դիմադրությունը համարելով ոչ միայն անօգուտ, այլև կործանարար: Ավելին՝ գեներալ Նազարբեկյանը հեռագրերով հորդորում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին անմիջապես, առանց վայրկյան իսկ կորցնելու, դաշինք կնքել թուրքերի հետ: Փորձառու զորավարը, որ հոգեմաշ խուճապի մեջ էր ընկել, այլևս կարևորություն չէր տալիս հաշտության պայմաններին, միայն թե փրկեր ժողովրդին, այլևս արյուն չհեղվեր: Նա կարգադրել էր Արաքսի ափին գտնվող իր զորքերին ետ քաշվել ճակատից և դիրքավորվել Կոտայքի ու Սևանի բարձունքներում: Իսկ Երևանյան զորախմբի հրամանատար, գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը, Երևանի ապա-



Կ. Կանյան



Գ. Գևորգ Ե

նի շրջան: Պատվախնդիր կաթողիկոսի պատասխանը հնարավոր չէ կրկնել առանց ակնածանքի. **«Եթե հայկական ուժերն ի վիճակի չեն պաշտպանելու այս սրբազան վայրը, - ընդվզում է ծերունագարդ Գևորգ Ե-ն, - ապա ես ինքս կանեմ դա, հոգ չէ, թե կզոհվեն հազարամյա Մայր տաճարի շենին»:**

Նույն այդ գիշեր Սարդարապատում հայկական զորքը նախապատրաստվում էր ճակատագրական մարտի, ճշգրտում ռազմավարությունը: Սարդարապատի ճակատամարտի օրը՝ մայիսի 22-ի վաղ առավոտյան, Էջմիածնի ճեմարանի տեսուչ, ականավոր հայագետ, հոգևոր և մշակութային գործիչ Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանցը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս) ոգեշունչ խոսքով դիմում է Հայկական հրաձգային 5-րդ զնդի զինվորներին, բացատրում վտանգի օրհասականությունն ու մեծությունը, հաղթելու կամ հայրենի սրբազան հողի վրա մեռնելու միակ արժանապատվությունը, որովհետև չկար օգնական ուժ, չկար նաև նահանջի ճանապարհ:




Գ. Հովսեփյանց

- **Դուք կանգնած եք թուրքերի հարձակման սուր անկյան դեմ և ձեր վրա պիտի առնեք նրանց հարվածի ծանրությունը, -** ասել է Գարեգին Եպ. Հովսեփյանցը: - **Դուք պետք է ոչ միայն փշրեք այդ հարվածը, այլև առաջ շարժվեք: Դա ձեր պարտքն է մեր մահամերձ ազգի առաջ: Ազգը փրկելու համար դուք պետք է հաղթեք կամ մեռնեք: Ուրեմն, մահապարտներ եք դուք և միայն հաղթանակով պիտի նվաճեք ձեր ապրելու իրավունքը:**

Հայկական կորպուսի զորամասերից ստեղծված Երևանյան զորախումբը՝ գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ, դիմագրավեց Սարդարապատը գրաված թուրքական 36-

րդ դիվիզիային: Այս զորախմբի Սարդարապատի ջոկատը՝ գեներալ Դանիել Բեկ-Փիրունյանի ղեկավարությամբ, պաշտպանում էր թուրքական հնարավոր առաջխաղացումը դեպի Երևան և Արարատյան դաշտ:

Սարդարապատում հայկական զորքերի կազմում մարտնչում էին Հայկական 2-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը, Դարաքաղի հատուկ ջոկատը՝ գնդապետ Պավել Մելիք-Շահնազարյանի գլխավորությամբ, կապիտան Սակիյարիի հրետանային մարտկոցը, Հայկական 5-րդ (մահապարտների) հրաձգային գունդը՝ գնդապետ Պողոս Բեկ-Փիրունյանի գլխավորությամբ հեծելազորային գունդը՝ գնդապետ Նիկոլայ Դորդանյանի հրամանատարությամբ, պարտիզանական գունդը՝ գնդապետ Պերեկրյոստովի գլխավորությամբ, և ուրիշներ, աշխարհազորայիններ:



Ս. Մանուկյան

Մայիսի 22-ին վրեժով և հաղթելու կամքով մարտի ելած զինվորականների հուժկու հարվածներից անակնկալի եկած հակառակորդը, որը ոչ մի դիմադրության չէր սպասում բաց դաշտում, չկարողանալով դիմակայել, խուճապահար նահանջում է 15-20 կմ հսկայական կորուստներ տալով:

Թուրքական հրամանատարությունը ծրագրել էր իր զորամիավորումները Երևան մտցնել նաև Բաշ Ապարանով: Թուրքական 9-րդ դիվիզիան փորձեց Եսադ փաշայի գլխավորությամբ, հյուսիսից դուրս գալ Սարդարապատում հակահարձակման անցած հայկական զորամասերի թիկունքը՝ նրանց կորելով Երևանից: Հայկական հրամանատարությունն անմիջապես Դրոյի գլխավորությամբ ուժեր տեղափոխեց Բաշ Ապարան: Հայկական կանոնավոր զորամասերին այստեղ մեծ աջակցություն ցուցաբերեցին ինչպես հայ, այնպես էլ եզդի աշխարհազորայինները՝ Ջահանգիր աղայի գլխավորությամբ: Մայիսի 23-29-ը տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքում թուրք հրոսակները ջախջախվեցին և հետ շարժվեցին Բաշ Ապարանից արևմուտք:

Մայիսի 24-28-ը ռազմական գործողություններ տեղի ունեցան նաև Դարաքիլիսայում: Մայիսի 20-ին թուրքերը գրավել էին Ջաջու- → էջ 10

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵԾԵԼԱԶՈՐԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, ԳՆԴԱՊԵՏ ՆԻԿՈԼԱՅ ԿՈՐԳԱՆՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՄԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

1918թ., 4-րդ հուլիսի, Դիլիջան

Մայիսի 24-ին Ղարաքիլիսայում էր գտնվում միացյալ հեծելազորային ջոկատը, որը բաղկացած էր առաջին հեծյալ ու Ղարսի գնդերից և կամավորների ջոկատից: Երկու հազար թուրք և չորս թնդանոթ շտաբ-կապիտան Մովսեսովի տնօրինության տակ էին:

Համաձայն Ղարաքիլիսայի ջոկատի պետի մայիսի 24-ի հեռագրի՝ իմ առջև խնդիր էր դրված առաջ շարժվել Արջուտ - Սարալ - Քուրսալու գծով, որտեղ անհրաժեշտ էր պահակային հսկիչ զորամաս դնել՝ ունենալով հսկիչների պահեստազոր: Մայիսի 25-ի առավոտյան շտաբի պետ, պորուչիկներ՝ Եղիազարովի և Նժդեհի հետ (վերջինս՝ իր քառասուն ծիավորներով) դուրս եկանք հետախուզության: Արջուտ կիսակայարանի մոտ հեռադիտակով նկատելի էին խճուղու աջ և ձախ կողմերից սարերով շարժվող հակառակորդի ոչ մեծ խմբեր՝ 10-15-ական մարդուց բաղկացած: Ենթադրեցի, որ դրանք հակառակորդի հետախույզներն են:

Վերադառնալով Ղարբազ (այժմ՝ Վանաձորի թաղամաս)*՝ ջոկատի մոտ, ես մեկ հեծելավաշտ (եսկադրոն) առաջ մղեցի դեպի Արջուտ, որի առաջ խնդիր դրեցի Արջուտ - Սարալ - Քուրսալու գծում իրականացնել հետախուզություն՝ ապահովելու համար այդ գյուղերի գրավումը: Հեծելավաշտն ուղարկելու պահին ես Նժդեհից տեղեկացել էի, որ իմ աջ թևում՝ սարերում նա ձերբակալել է հակառակորդի մոտ հարյուր հայդուկների: Երբ առաջ շարժվող հեծելավաշտը մոտեցավ Արջուտին, հակառակորդը նրա վրա թնդանոթային կրակ բացեց, որից հետո ինձ զեկուցեցին, որ հակառակորդի հետևակազորը շարժվում է Արջուտ - Քուրսալու ճակատով: Ակնհայտ էր, որ եթե մեր խնդիրն Արջուտ - Քուրսալու գծով առաջխաղացումն էր, նույնն էր նաև հակառակորդինը: Եվ սկսվեց երկրորդ մարտը՝ Զինարխանլուի ուղղությամբ (750-րդ բարձունք): Շտաբ-կապիտան Մովսեսովի անձնուրաց գործողությունը՝ դիմահար գնդակոծությունը թուրքերի բաց դիրքերին՝ կասեցրին հակառակորդի բուռն գրոհը: Մեր հետևակայինները քաջալերվեցին: Սակայն իմ թևից տագնապալի լուր ստացվեց՝ մեր նահանջի մասին, բայց երրորդ հրաձգային գնդի առաքումն իմ ձախ թևը, կասեցրեց այն:

Այդ օրն իմ ջոկատին հաջողվեց հետ մղել հակառակորդի գրոհը: Բայց վերջինս ամրացավ հրամանատարական ճակատի 750-րդ և ձախ թևի 962-րդ բարձունքներում:

Ջոկատի այդ օրվա զոհերն էին՝ չորրորդ գումարտակի հրամանատարը, առաջին հրաձգային բրիգադի հրամանատարը, շտաբ-կապիտան Մովսեսովը, 25 զինվոր: Վիրավորվել են մեկ սպա և քառասուն զինվոր:

Մայիսի 25-ի երեկոյան իմ տնօրինության տակ անցավ հրաձգային երկրորդ գունդը, որը դիրքեր գրավեց Ղարբազ գյուղի առաջ և հյուսիսային 962-րդ բարձունքի ստորոտում: Գիշերվա ընթացքում իմ տնօրինության տակ անցան շտաբ-կապիտան Վեբիլովի գումարտակը և Երզրումի հետևակային գնդի երկու վաշտերը (մտնելով առաջին միացյալ գնդի կազմի մեջ):

Մայիսի 26-ի առավոտյան իմ առաջ խնդիր էր դրված՝ գրավել Զինարխանլուի 750-րդ բարձունքը: Ինձանից ձախ պիտի հարձակվեր գնդ. Փիրունովի երրորդ հրաձգային գունդը: Քանի որ հակառակորդն իմ ձախ թևում զբաղեցրել էր հրամանատարական 962-րդ բարձունքը, ուստի առաջ մղվելու համար ամենից առաջ անհրաժեշտ էր գրավել այն: Վաղ առավոտյան հրետանին սկսեց ուժգին հրետակոծել այդ բարձունքը: Մոտավորապես ժամը 14-ին բարձունքը գրավված էր, որից հետո հրետանին կրակ բացեց 750-րդ բարձունքի վրա, և հակառակորդը ժամը 17-ի մոտ լքեց այն: Հեծելազորային երկու վաշտ ուղարկվեցին աջ թև: Երզրումցիների երկու վաշտերն այդ օրը գրավեցին Զինարխանլուն: Երեկոյան հակառակորդը գրավեց Արջուտի գիծը՝ 904-րդ բարձունքը: Իմ հետևակազորը գրավեց Զինարխանլուի 750-րդ և 962-րդ բարձունքները:

Երկրորդ օրվա հաջողված մարտի համար պարտական են երկրորդ միացյալ գնդի հրամանատար, գնդապետ Գոծիկին՝ իր գերազանց կարգադրությունների համար և հրաձգային ջոկատի հրամանատար, շտաբ-կապիտան Վեբիլովին՝ իր եռանդի համար: Զինվորները գերազանց դրսևորեցին իրենց: Ձախ թևի հետևակայինները միահամուռ, մի քանի անգամ հետ մղեցին հակառակորդի գրոհները: Մայիսի 26-ի կորուստների ճշգրիտ թիվը ինձ հայտնի չէ, ենթադրում եմ, որ այն մոտավորապես կազմում է հարյուր մարդ:

Մայիսի 27-ին, համաձայն Ղարաքիլիսայի ջոկատի N 16 հրամանի, ես հարձակման անցա աջ թևով՝ Արջուտ գյուղի ուղղությամբ, իսկ ձախ թևում սահմանափակվեցի հրետանային զնդակոծությամբ: Մոտավորապես ժամը 15-ին երրորդ հրաձգային գնդի հրամանատարից տեղեկություն ստացա, որ թուրքերը, բանակի հետևակային շարասյունով և հեծելազորով, շրջանցում են իր ձախ թևը: Հավանաբար հակառակորդը մտադիր էր այդ կերպ խորությամբ շրջանցել նաև մեր աջ թևը: Ես 912-րդ բարձունք ուղարկեցի երկու հեծելավաշտ՝ ամբողջ ձախ թևը հետախուզելու նպատակով: Երզրումի գնդի հարձակումը շարունակվում էր, սակայն զարգանում դանդաղ: Մոտավորապես ժամը 16-ին փոխգնդապետ Աղլոբյանը Բեզդոբլից (Բզովդալ) ինձ տեղեկացրեց, որ հակառակորդը շրջանցել է մեր աջ թևը և թնդանոթներով հրետակոծում է աջ թևի թիկունքում գտնվող 1097-րդ բարձունքը: Նկատի ունենալով հայտնաբերված շրջանցումը՝ ժամը 16:30-ին հրամայեցի Երզրումի գնդին՝ դադարեցնել հարձակումը: Ժամը 17-ին Երզրումի գնդի հրամանատար, փոխգնդապետ Աղլոբյանն անձամբ ինձ զեկուցեց, որ թուրքերի շրջանցումն իմ աջ թևով շարունակվում էր Սիմեդ Աղի յուրտ - Արջուտ սարի ուղղությամբ: Այդ շրջանցումը հետ մղելու համար ես ուղարկեցի երկու վաշտ՝ իմ վերջին պահեստազորը:

Ժամը 24-ին իմ աջ թևում դիրքը զբաղեցված էր դեպի հյուսիս-արևելք: Մայիսի 27-ի՝ լույս 28-ի գիշերը պարզ դարձավ, որ թուրքերը մեծ ուժերով շրջանցել են մեր դիրքերի երկու թևերը: Մայիսի 27-ի՝ լույս 28-ի գիշերը ես հրաման ստացա՝ զբաղեցնել



Գնդապետ Նիկոլայ Կորգանով
(Ղորղանյան)
1878 - 1921

Ահմեդ Աղի յուրտի բարձունքի (1120-րդ) նոր դիրքերը, այնուհետև՝ հարավ-արևմուտքում, Ղշլաղի արևմտյան մասում՝ մինչև 967-րդ բարձունքը ներառյալ: Այս հրամանը (համար 133) տվել էր Ղարաքիլիսայի ջոկատը՝ մայիսի 27-ին: Դրա հետ միասին հրաման ստացա իմ երկրորդ միացյալ գունդը տրամադրել ընդհանուր պահեստագործին. փոխարենը պետք է ստանայի առաջին միացյալ գնդի մի գունդարտակ (առաջին գունդարտակը, փոխգնդապետ Աղլոբյանի հրամանատարությամբ, արդեն ինձ մոտ էր): Բացի դրանից, ինձ մոտ պետք է գար երկու վաշտ երկրորդ և չորրորդ գնդերից և սակրավորների վաշտը:

Մայիսի 28-ի լուսաբացին զբաղեցրի ինձ կարգադրված դիրքերը: Ընդ որում՝ առաջին միացյալ գնդի գունդարտակն ինձ մոտ չեկավ: Նույն գնդի մյուս գունդարտակը, որն աշխատեց ինձ մոտ երկու օր, վերածվեց վաշտի: Այդ պատճառով էլ ինձ մոտ պահեցի երկրորդ միացյալ գնդի երկու վաշտերը, որոնք լուսաբացին ուղարկվեցին ընդհանուր պահեստագործին: Ինձանից ձախ գտնվող երրորդ հրաձգային գնդի հետ ես կապ չեմ ունեցել մայիսի 28-ի կեսօրից, չնայած այն բանին, որ կապը վերականգնելու համար ես ուղարկեցի երրորդ գնդի հրամանատար, առաջին հեծյալ գնդի ենթասպա Թունակին՝ հանձնակատար սպաների հետ: Երկու հեծելավաշտ ուղարկեցի ձախ թև՝ 912-րդ բարձունք: Չնայած գերազանց էի պահպանում կապը ջոկատի հրամանատար, զնդապետ Բեյ-Մամիկոնյանի հետ, բայց ձիով տեղեկություն և հրամաններ հասցնելը դանդաղ էր կատարվում: Պարտք եմ համարում զեկուցել, որ այդ մասին ես տեղեկացրել եմ ջոկատի հրամանատարին և ցույց եմ տվել, թե ինչպես կարելի է կապը վերականգնել: Վստահ եմ, որ եթե լարային կապ ունենայի ջոկատի հրամանատարի և իմ զորամասերի հետ, իմ ջոկատին կհաջողվեր ժամանակին հեռանալ դեպի Դիլիջանի խճուղին: Դեռ մարտի առաջին օրը՝ մայիսի 25-ի երեկոյան խնդրեցի տրամադրել ինձ կապավորների ինչ-որ մի անձնակազմ և մատնանշեցի 8-րդ գնդի կապավորների անձնակազմը: Կրկնում եմ, եթե ունենայի հեռախոսային կապ, աղետը տեղի չէր ունենա:

Մայիսի 28-ի ժամը 9-ին հայտնի դարձավ իմ աջ թևի շրջափակումը: Հակառակորդն արդեն գրավել էր Շարա-Դաղ (Շարայի լեռ) սարը: Ես կնահանջեի՝ հրամանի չսպասելով և դրանով կկանխեի վերահաս աղետը, եթե հաշվի չառնեի երկու հանգամանք. առաջին՝ ես հաշվի առա, որ զնդապետ Բեյ-Մամիկոնյանին տհաճ է, երբ իր ենթակամերը հակառակվում են, անգամ եթե իր տված զինվորական հրամանը ճշգրիտ կատարելն անհնար է: Մայիսի 25-ին՝ մարտի առաջին օրը, զնդապետ Բեյ-Մամիկոնյանը մեծ տհաճությամբ լսեց իմ առարկությունները՝ Արջուտ գյուղի մոտ հրետանու հետ հեծելագործ շանակելու վերաբերյալ և կտրուկ ինձ կարգադրեց ճշգրիտ կատարել իր զինվորական հրամանը:

Այս դեպքում, եթե նահանջեի առանց նրա հրամանի, կմեղադրվեի ժամանակից շուտ նահանջի համար:

Երկրորդ՝ մայիսի 27-ի՝ լույս 28-ի գիշերը զնդապետ Բեյ-Մամիկոնյանից տեղեկություն ստացա, որ առավոտյան գեներալ Անդրանիկի ջոկատը Քոլագերանից՝ Կարաուլ-Թափա (Լեջան) սարով և Տաշքելանով շարժվելու է հարվածելու համար թուրքերի թիկունքին, որոնք հարձակվում էին մեր աջ թևի վրա: «**Ընդունեք սա ի գիտություն՝ Ձեր գործողությունները համակարգելու համար և այս մասին հայտնեք ջոկատին: Մնացեք անուր՝ մինչև Անդրանիկի մոտենալը:**

Գնդապետ Բեյ-Մամիկոնյան:

Մայիսի 27-ին, ցերեկը ժամը 12-ին հրաման ստացա ժամը 17-ից հետո նահանջել դեպի նոր դիրքերը՝ 829-րդ բարձունքի, Յաղուբլի (Մեղրուտ), Վարդանու (Խնձորուտ) գյուղերի և Քյորփաշայի (հեղեղատ) աջ կողմի բարձունքի ուղղությամբ: Չէի հասցրել նահանջի հրաման տալ, երբ Ղարաքիլիսայի խճուղու վրա մեքենայով ինձ մոտեցավ Ղարաքիլիսայի ջո-

կատի շտաբի պետ, փոխգնդապետ Մացնը: Պորուչիկ Եղիազարովի հետ նստեցինք նրա մեքենան:

Փոխգնդապետ Մացնն ասաց, որ հրամանը չկատարենք՝ մինչև նահանջի հատուկ կարգադրություն չլինի, որ անհրաժեշտ է դիմանալ՝ հնարավորություն տալով Ղարաքիլիսայից դուրս բերել ռազմական պաշարները: Ասաց նաև, որ ըուպե առ ըուպե կարող է մոտենալ Անդրանիկի ջոկատը: Փոխգնդապետ Մացնին պատասխանեցի, որ ճակատում դիմանալ՝ ապավինելով միայն հրետանուն, չեմ կարող: Ինձ անհանգստացնում են թևերը: Փոխգնդապետ Մացնն ինձ հավաստիացնում էր, որ Անդրանիկը դուրս է գալու աջ թև, իսկ ձախ թևի շրջանցումը կարելի է կատարել Ղարաքիլիսայից եկող պահեստագործով (զնդ. Սամարցև): Այդ ժամանակ հրամայեցի մնալ դիրքերում. ցերեկը, մոտ ժամը 13-ին ինձ մոտ եկավ հանձնակատարը՝ զնդապետ Բեյ-Մամիկոնյանի հրամանով՝ «Չտապել նահանջել նոր դիրքերը»:

Դրան հետևեց դիվիզիայի շտաբի պորուչիկ Նազարբեկովի երևալը, որը հաստատեց նրա հրամանը: Նույն պահին հանձնակատարներ ուղարկվեցին՝ նահանջի հրամանով: Մոտավորապես ժամը 13:30-ին առաջինն սկսեց նահանջել հրետանին: Ես իմ շտաբով դուրս եկա Ղարաքիլիսա: Այստեղ ինձ մոտեցավ հրետանային դիվիզիայի հրամանատար զնդապետ Վլադիմիրովը և զեկուցեց, որ դեպի Վարդանու ճանապարհը փակ է, զնդակոծվում է հակառակորդի գնդացիներից: Իմ հարցին, թե որքանով է ճիշտ այդ տեղեկությունը, զնդապետ Մացնն ասաց, տեղեկությունը ստույգ է, և անհրաժեշտ է շտապ որոշում կայացնել՝ ո՞ւր շարժվել, քանի որ Ղարաքիլիսայի փողոցները ծանրաբեռնված են ձիասայլերով, և հրատանին չի կարող արագ շարժվել փողոցներով: Այդ ժամանակ արդեն հրետանին զնդակոծում էր Ղարաքիլիսան: Կարգադրեցի հրետանին շարժել Սանահին տանող ճանապարհով: Ինքս նույնպես դուրս եկա այդ ճանապարհը: Իմ ետևից շարժվում էր հետևակը, որը բարձունքից վազելով՝ նահանջում էր դեպի Ղարաքիլիսա: Հետևակը շարժվում էր երկաթգծի ճանապարհով, իսկ հրետանին՝ ճանապարհի եզրով: Ինչքան շատ էինք հեռանում Ղարաքիլիսայից, այնքան ճանապարհը դառնում էր ուղրապատույտ՝ որոշ տեղերում վերածվելով արահետի: Այդ ընթացքում հակառակորդը ձախ կողմի սարից իջավ և զնդացիները տեղադրելով՝ կրակ բացեց մեր հրետանու վրա: Այդ ժամանակ մեր հրետանավորները զառիթափից գլորեցին թնդանոթները՝ նախապես նրանց վրայից հանելով փականները և դիտելու հարմարանքները (երեք թնդանոթ՝ չորս մարտկոցով, մեկ թնդանոթ՝ հինգ մարտկոցով և մեկ թնդանոթ՝ վեց մարտկոցով):

Շահալիի (Վահագնի) հեռագրատանը տեղեկացանք, որ Ղարաքիլիսայից՝ երկաթգծի ճանապարհով շարժվում է հակառակորդի հեծելագործը: Չնայած հեծելագործ չէր սպառնում մոտ հազարի հասնող զինվորներին, բայց ստիպել այդ անբոխին ընդունել մարտը, անհմաստ էր: Միայն գիշերը կարող էր կանգնեցնել նահանջը: Քոլագերան կայարանի մոտ ինձ դիմավորեց անհայտ մի երիտասարդ զինվոր և հաղորդեց, որ Անդրանիկն իր ջոկատով Դսեղում է և ինձ՝ իմ ջոկատի հետ, հրավիրում է իր մոտ: Դրանից ուրախացա, քանի որ Անդրանիկի ջոկատի պաշտպանությամբ իմ ջոկատը կարող էր հավաքվել, բայց զինվորներին կանգնեցնել հնարավոր չէր: Նրանք սրընթաց «գլորվում» էին դեպի Սանահին: Այնուամենայնիվ, Քոլագերան կայարանի մոտ հրամայեցի կանգ առնել և սպասել Անդրանիկի մոտից իմ վերադարձին:

Թափառական խմբի հետ բարձրացա Դսեղ և մայիսի 29-ի առավոտյան գնացի Անդրանիկի մոտ: Իհարկե, իմ առաջին հարցն Անդրանիկին այն էր, թե ինչո՞ւ ինքը դուրս չեկավ իմ աջ թևը: Անդրանիկն ինձ ցույց տվեց գեներալ Նազարբեկովի հեռագիրը, որի համաձայն, ինքը պետք է պաշտպաներ երկաթգիծը: Գնդապետ Բեյ-Մամիկոնյանի գրավոր խնդրանքը՝ դուրս գալ մեր աջ թևը, նա իր համար պարտադիր չէր համարում: Ինձ համար խիստ անսպասելի էր Անդրանիկից իմա-

նալ, որ իրեն միայն խնդրել են դուրս գալ իմ աջ թևը, այն դեպքում, երբ իմ առաջ զինվորական խնդիր էր դրված՝ գործողությունները համակարգել Անդրանիկի գործողությունների հետ և անձնատուր չլինել՝ մինչև նրա մոտենալը: Հետևաբար այն, ինչ ջոկատի պետ Բեյ-Մամիկոնյանի համար հնարավոր էր և ցանկալի, վերջինս այն ընդունում էր իբրև անխուսափելի քայլ:

Վաղը գեներալ Անդրանիկի ջոկատը շարժվելու էր դեպի սարերը: Ինչի՞ վրա է հիմնված այս գորաշարժը...

Անդրանիկի հետ իմ գրույցի ժամանակ սենյակ մտավ դիվիզիայի հրամանատար, փոխգնդապետ Մացնևը և ինձ գեկուցեց, որ Անդրանիկի զինվորները գեներալ ուժով, անգամ կրակոցներով, վիրավորելով երկու ձի, ստիպել են իմ ջոկատի մի մասին, որ դեռ չէր հասցրել գնալ Սամահին, բարձրանալ Դսեղ: Իմ սպաներին ու զինվորներին Անդրանիկն ստիպեց բարձրանալ իր մոտ՝ Դսեղից, որից հետո նա այնպես դասավորեց իր զնդացիները, որ դրանք գնդակոծեին Դսեղից դուրս եկող բոլոր ելքերը: Անդրանիկն սկզբում որոշել էր մնալ Դսեղի լեռնային տեղանքում:

Մեր խոսակցությանը ներկա Ազգային խորհրդի անդամ Թումանյանն ինձ հայտնեց, որ շուտով խաղաղություն է հաստատվելու, իսկ մինչև խաղաղությունը Անդրանիկին կհաջողվի կարճ ժամանակով մնալ Դսեղի դժվար հասանելի բարձունքներում և նրա շրջակայքում: Հետո Անդրանիկը փոխեց իր որոշումը և հայտարարեց, որ ինքը գնում է Դիլիջան և պահանջեց, որ ես էլ գնամ իր ետևից՝ միանալու կորպուսին (գորամիավորումներին):

Չէի հավատում Դիլիջանի մոտ կորպուսին մաս-մաս միանալու հնարավորությանը: Որ թուրքերը կհետապնդեին գնդապետ Բեյ-Մամիկոնյանի ջոկատի մնացորդներին Դիլիջանի ուղղությամբ, ավելի քան հավանական էր: Բայց դա տեղի չունեցավ, որքան էլ անսպասելի էր: Այսպիսով՝ չհավատալով Դիլիջանի մոտ մեր կորպուսին միանալու հնարավորությանը, այդուհանդերձ, պետք է համաձայնություն տայի Անդրանիկի ներկայացրած վերջնագրին և հետևեի նրան:

Դսեղից դուրս գալուց առաջ, Անդրանիկն իր ելույթում դիմելով իմ զինվորներին՝ ասաց. **«Ով ուզում է մեռնել շան պես, թող մնա այստեղ: Ով ուզում է ապրել, թող գա ինձ հետ»:**

Մոտ հարյուր հոգի նույն րոպեին միացան նրա ջոկատին: Մեկնելուց հետո հավաքեցի սպաներին և կարդացի լրացուցիչ հրաման: Սպաների ճնշող մեծամասնությունը հայտարարեց, որ իրենք իրենց համար պարտադիր չեն համարում Անդրանիկին հետևելը: Պատճառաբանվեց, որ Անդրանիկը ղեկավարում է անկանոն զորքեր, իսկ պարտիզանական զորքի կեսը՝ թուրքահպատակներ են:

Ազգային խորհրդի անդամ Թումանյանը կենդանի վկա է այն բանի, թե սպաներն ինչպիսի տհաճությամբ էին պատկերացնում, որ մի օր կհայտնվեն հակառակորդի հետ դեմ-դիմաց՝ Անդրանիկի դրոշի ներքո: Թումանյանը կարող է վկայել, թե ինչպես սպաները մի քանի անգամ դիմեցին իրեն, որպեսզի ինքը միջնորդ լինի իմ և Անդրանիկի ջոկատների միջև, որպեսզի մեզ թողնեն մեր ճակատագրի հետ: Դիլիջան մեկնելու մասին հրամանը սպաներին ներկայացնելուց հետո, տեսնելով, որ ճնշող մեծամասնությունն այն չի կատարի, նաև իրավունք չվերապահելով ինձ՝ ստիպել սպաներին միանալ Անդրանիկի պարտիզանական ջոկատին, ընդառաջ գնացի ջոկատի ցանկությանը և կարգադրեցի գնալ Սամահին:

Հետևաբար Դիլիջանում չէի կարող, ավելի ճիշտ՝ հույս չունեի հանդիպել մեր գորամասերին: Իսկ շարժվելով Դիլիջան՝ իմ ջոկատի ճակատագիրը կկապեի Անդրանիկի ջոկատի հետ:

Երբ եկա Սամահին կայարան, այստեղ հավաքվեց մարդկանց խումբ՝ 500 զինվոր և 60 սպա: Բոլորն ուզում էին մի կերպ հասնել Թիֆլիս:

Նույն օրը զինվորների մի մասը՝ շուրջ 500 հոգի, առավոտ-

յան, մինչև իմ Սամահին հասնելը, շարժվել էր դեպի Շուլա-վեր:

Հավաքեցի սպաներին և հայտարարեցի. «Ես անհնար եմ համարում Թիֆլիս հասնելը: Չի կարելի Սամահինում ջոկատը թողնել մարդկանց հետ, ովքեր փամփուշտներ համարյա չունեն, չունեն թնդանոթ և գնդացի: Թշնամու մոտենալու դեպքում սարերը քաշվել նույնպես չի կարելի, քանի որ տեղի միջոցներով մարդկանց կերակրելը հնարավոր է միայն բնակիչների բարի ցանկության դեպքում: Ընդ որում, դեպքեր են եղել, երբ զինվորի մեկ հրացանի դիմաց տվել են երեք հաց: Հետևաբար անխուսափելի է սովը և դիակապտությունը: Այս իրավիճակում ես զինվորներին կարգադրում եմ ցրվել հայկական գյուղերը և կերակրվել՝ սրտացավ բնակիչների հաշվին (20-30 մարդը գյուղի համար ծանր հոգս չի լինի): Սպաներին, որպեսզի գերի չընկնեն, խորհուրդ եմ տալիս բարձրանալ սարերը և սպասել մինչև խաղաղություն հաստատվելը, որը, իմ կարծիքով, անխուսափելի է»:

Այսպիսով՝ ջոկատին ազատ արձակեցի: Այդուհանդերձ, զինվորների մի մասը որոշեց եկատերինֆելդով (Բուլնիս) ճեղքել-հասնել Թիֆլիս:

Նրանց ճակատագրի մասին ոչինչ չգիտեմ: Մյուսները որոշեցին ցրվել գյուղերը:

Երեսուներ սպաների հետ բարձրացա սարերը և գյուղից գյուղ անցնելով՝ հունիսի 8-ին Դսեղում հանդիպեցի առաջին դիվիզիայի շտաբի պետ, փոխգնդապետ Մացնևին, որը ինձ հաղորդեց, որ հունիսի 1-ին թուրքերի հետ խաղաղություն է կնքվել, և որ կորպուսի հրամանատարը գտնվում է Դիլիջանում: Մեր գրույցի ժամանակ փոխգնդապետ Մացնևը հաղորդեց նաև, որ մայիսի 28-ին խճուղու վրա և մեքենայի մեջ մեր խոսակցությունից հետո, այսինքն՝ նահանջի մասին հատուկ հրամանից առաջ, ինքը՝ Մացնևը, արդեն չի կարողացել վարդանուխի ճանապարհով մեքենայով գնալ, քանի որ այն գնդակոծվում էր և պետք է բարձրանար սարերը՝ Յաղուբլի գյուղի մոտ: Նրա խոսքերը շատ կարևոր էին ինձ համար, քանի որ դրանք իրոք հաստատում էին, որ Դիլիջանի խճուղին գնդակոծվում էր Վարդանուխի կողմից՝ նահանջի մասին իմ տված հրամանից անենաշատը 40 րոպե հետո:

Փոխգնդապետ Մացնևի հետ հանդիպման հաջորդ օրն ինձ մոտ գտնվող սպաների խմբի հետ գնացի Դիլիջան, ուր և ներկայացա կորպուսի հրամանատարին:

Մայիսի 23-ից սկսած՝ իմ ջոկատը ղեկավարելու ընթացքում, եղել են՝

- մայիսի 25-ին՝ հաջող հանդիպական մարտ՝ հակառակորդի դեմ:

- Մայիսի 26-ին՝ իմ հավատարիմ ջոկատը ետ շարժեց թուրքերին և ստիպեց թողնել հրամանատարական բարձունքները:

- Մայիսի 27-28-ին, չնայած թուրքերի շրջանցմանը, իմ ջոկատը պահում է գրաված դիրքերը:

Եթե աղետ էլ եղավ, ապա ոչ իմ մեղքով: Տեղեկությունն այն մասին, որ Վարդանուխի ճանապարհը գրավված է, բոլոր միջոցները ձեռք առա, որպեսզի իմ ջոկատը դուրս բերեմ օղակից, որն ամեն րոպե կարող էր քայքայվել Ղայի մոտ: Ջոկատի դուրս բերումը Ղարաքիլիսայից համարել եմ անհրաժեշտ, որովհետև չունեինք փամփուշտ, պարեն, կապ՝ յուրաքանչյուրի հետ: Գերությունից խուսափելու համար ամբողջ ջոկատը ցրեցի գյուղերը, իսկ սպաներին հրամայեցի բարձրանալ սարերը:

Գնդապետ՝ Նիկոլայ Կորզանով

Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 79

(Ուսերեն բնագրից թարգմանել է Արդա Ներսիսյանը: Տպագրվել է չնչին կրճատումներով)

* Փակագծերում նշել ենք մեզ հայտնի այժմյան տեղանունները: Արջուտ և Քուլագերան անվանումները պահպանվել են - խմբ.:

ՀԱՅՈՑ ՈԳՈՒ ՀԱՂԹԱՆԱԿԸ

«Ձինվորական երեք դոկտորիններից՝ նյութապաշտական, իմաստապաշտական և ոգեպաշտական, վերջինը պետք է լինի մերը: Առաջինի համար ամեն ինչ է թիվը, երկրորդի համար կոնիվը շախմատային խաղ է, երրորդի համար՝ դա հոգեկան ակտ է: Հավիտենական է կոնֆլիկտը թվի և որակի, ամբոխի և ընտրամի միջև: Նյութապաշտականը ամբոխների դոկտորինն է: Միշտ էլ պարտվել են այն ազգերը, որոնք ունեցել են մի հատիկ հեմարամ թիվը, քանակը: Կռվադաշտը միշտ էլ պատկանել է որակին: Նրանք են վաղվա հաղթանակները»:

Գարեգին Նժդեհ, «Մեռնելու կամք»

1992թ. մայիսի 8-ին հայ ազատամարտիկները մտան Շուշի բերդ-ամրոցը: Շուշին մեր ոգու հաղթանակն էր, հայկական ոգու հաղթանակը: Այս գնահատականը 10-ամյա վաղեմություն ունի: Շուշին հաղթաթուղթ է: Ռազմական գործի գիտակներն այս գնահատականը տվել են շատ ավելի վաղ՝ 1920-ական թթ. սկզբին:

Բերդաքաղաքի բնական, աշխարհագրական դիրքն է թելադրում նրա ռազմավարական հույժ կարևոր նշանակությունը: Շուշիի ազատագրումից հետո՝ ընդամենը մեկ շաբաթվա ընթացքում, հայ մարտիկներն Արցախը փաստացի միացրին Հայաստանին. բացվեց Լաչինի միջանցքը:

Շուշիի ազատագրմամբ ռազմական գործողությունների մեջ մտցված բեկման և, առհասարակ, այդ գործողության ռազմական, պատմական, բարոյափոխանական նշանակության և դասերի մասին է մեր զրույցը ԼԴՀ բանակի Շուշիի «Առանձնակի» գումարտակի հրամանատար *Ժիրայր Սեֆիլյանի* հետ:



- **Ժիրայր, Ձեր կենսագրությունից քիչ բան է մեզ հայտնի, ավելի միշտ, գրեթե ոչինչ չգիտենք Ձեր կյանքի բեյբլայնի մասին: Տարիներ առաջ Ձեր**

հարցազրույցներից մեկում ասել էիք, որ Լիբանանի պատերազմի պատճառով չկարողացաք բարձրագույն կրթություն ստանալ և զբաղվեցիք ռազմական գործով: Ինչպե՞ս սկսեցիք Ձեր ռազմական գործունեությունը:

- Այո, բարձրագույն կրթություն չստացա: Հայաստան եկա 1990թ. ամռանը: 80-ական թթ. խառնակ վիճակ էր Բեյրութի հայկական թաղամասերում: Ավելի շատ զբաղվել ենք նրանց պաշտպանությամբ, ժողովրդին ինչ-որ չափով օգնելով: 1988թ., երբ շարժումն սկսվեց, դեռ 20 տարեկան էի, երազում էի օր առաջ ոտքս դնել հայոց հողի վրա: Այդ ժամանակվանից արդեն պատրաստվում էի գալ Հայաստան: Ես եղել եմ ՀՅԴ անդամ (այժմ՝ անկուսակցական - խմբ.): Այդ օրերին դաշնակցությունը կոչ ուներ՝ «Դեպի երկիր»: Ինձ բախտ վիճակվեց առաջիններից մեկը հետևել այդ կոչին: Եկել եմ մի հիմնական նպատակով՝ աջակցելու հայկական բանակի կազմավորմանը: Մոտավորապես մեկ տարի՝ մինչև Ղարաբաղ գնալս, որպես ռազմական հրահանգիչ Հայաստանի տարբեր շրջաններում զբաղվել եմ ջրկատներ պարապելով:

- **Ի՞նչ մարտական ուղի եք անցել մինչև Շուշի:**

- Ռազմական գործողություններին

մասնակցել սկսել եմ Շահումյանում: 1991թ. ապրիլի 30-ին փորձել ենք Գետաշենին օգնության հասնել, բայց երբ հասանք Շահումյան, մեզ տեղեկացրին, որ Գետաշենն ընկել է: Ես մնացի Շահումյանում: Հետո կրկին առիթ եղավ մեկնել այս շրջանը: Իսկ 91թ. վերջերից եղել եմ Հաղորթում, Ստեփանակերտում, Կրկժամում և այլուր ու կռվել մինչև պատերազմի ավարտը:

- **Ի՞նչ էր Ձեզ համար Շուշին:**

- Որոշված էր՝ Շուշին պետք է ազատագրվի: Այլ կարծիք չիմեի չէր կարող: Ժամանակի հարց էր՝ ե՞րբ: Գիշտ կլինի ասել, որ հակառակորդը ստիպվում էր օր առաջ ազատագրել Շուշին: 1991թ. դեկտեմբերից Շուշիից հետևողականորեն հրետակոծում էին Ստեփանակերտը: Մինչև դեկտեմբեր դա արվում էր «Ալազանով», հունվարից սկսեցին օգտագործել «գրադ» և մարտական լուրջ հրանոթներ: Կամ Ստեփանակերտի ժողովուրդը պիտի կոտորվեր (գուցե տեղահան լիներ), կամ Շուշին պետք է ազատագրվեր: Շուշին ռազմավարական անչափ կարևոր նշանակություն ուներ իր դիրքի առումով: Դա հակառակորդի ամենալուրջ հեռակետերից մեկն էր. առնելով այն՝ ուժգին հարված կհասցվեր նրա բարոյափոխանական վիճակին: Այդպես էլ եղավ: Որպես հաջորդ գործողություն՝ մեկ շաբաթվա մեջ կարողացանք հասնել մինչև Լաչին՝ գրեթե առանց լուրջ դիմադրության:

Շուշիի ազատագրումը մեզ համար ոգու վերելքի տոն է եղել և է՛, և գնալով ամրանում է: Շատ քիչ է պատահում, որ ինչ-որ գաղափարի շուրջ համախմբվեն բոլոր հայերը: 1992թ. չկար ոչ մի հայ աշխարհում, որ համաձայն չլիներ Շուշիի ազատագրմանը: Հենց այս միասնականությունն էր նաև բարձրացրել մեր

ոգին: Շուշիի ազատագրմանը մասնակցել ցանկացողների թիվը շատ ավելին էր, քան մեր ունեցած զենքը. թիկունքում ունեինք մարտիկներ, ովքեր զենք չունենալու պատճառով չմասնակցեցին Շուշիի ազատագրմանը: Ռազմական տեսանկյունից այս գործողության հաջողությունը տրամաբանությունից դուրս է: Այն սկսեցինք հակառակորդից շատ ավելի նվազ զինուժով, հարձակվեցինք բնական ամրություններ ունեցող բերդի վրա: Եթե անգամ չկարողանայինք բավարար քանակությամբ զինամթերք հայթայթել, տղաները պատրաստ էին թեկուզ 10 փամփուշտով մասնակցել մարտին:

- **Թվում է՝ դա երեկ էր, թվում է՝ այդ ամենը դեռ հուշ չի դարձել, բայց երբ տեսնում ենք, որ մեր կողքին չեն մեր շատ ընկերներ ու զինակիցներ, կորստի ցավը կրկին խոցում է մեր սիրտը: Մեզ մնում է աղոթքի խոսքեր շշմջալ, խունկ ծխալ, մոռ վառել, խոնարհվել նրանց մայրերի, կանանց ու զավակների մեծ վշտի առաջ և ապրողներին հիշեցնել, թե ինչ գնով են ազատագրվել մեր այդ տարածքները: Ի դեպ, ազատագրել ենք յոթ շրջան, բայց, չգիտես ինչու, հանդիսավորությամբ միայն Շուշիի անունն ենք տալիս: Չէ՞ որ մնացած տարածքներն էլ արյան գնով են ազատագրվել, հայի արյան...**

- Շատ տեղին է Ձեր մտահոգությունը: Ամիսներ առաջ մի հարցազրույցի ժամանակ ես նման միտք հայտնել եմ՝ ասելով, որ պետք է նշենք բոլոր այդ տարածքների ազատագրման օրերը: Բերեն մեկ օրինակ: Աղոսան ազատագրելու համար մենք շատ ավելի զոհ ենք ունեցել, ավելի շատ ենք չարչարվել, քան Շուշիի:

- **Ինչո՞վ է դա բացատրվում:**

- Աղդամն Աղրբեջանի, այսպես ասած, հեղինակավոր քաղաքն էր: Այսինքն՝ ինչպես 1992թ. Շուշին կորցնելով՝ հակառակորդը բարոյալքվեց, իսկ Աղդամը կորցնելով՝ նրանք, ասես, դադարեցին պետություն լինելուց: Նրանց համար անհնար էր պատկերացնել կամ հաշտվել այն մտքի հետ, որ մի օր այն կարող է անցնել հայերին: Ճիշտ չէր այդ ժամանակ մեր քաղաքական ղեկավարության որոշումը զինադադարի մասին, որով հետևեալ այդ օրերին հակառակորդի բանակը համարյա կազմալուծված էր: Եվ մի քանի օր կռիվը շարունակելու դեպքում մենք հանգիստ, առանց չարչարանքի հասնելու էինք Կուրի ափը: Աղդամի ազատագրումը հնարավորություն տվեց հեշտությամբ իջնել դեպի Արաքս:

- Դա նրանց Ռուբիկոնն է:

- Կարելի է այդպես ասել: Նրանք անասելի դիմադրություն էին ցույց տալիս Աղդամում: Ես ուզում եմ ևս մի միտք հայտնել՝ հավանաբար կանխելով Ձեր հաջորդ հարցը. պատերազմում հաղթեց մեր ոգին: Ո՛չ մեր զինվածությունն էր համապատասխան մակարդակի, ո՛չ մեր կազմակերպվածությունը: Մեր մարտիկները կամավորներ էին, հակառակորդին՝ ոչ: Ցավոք, հետպատերազմական շրջանում մենք կորցնում ենք մեր ոգեղեն հարստությունը: Մեզ

բոլոր հայ մարտիկներն էլ ունեն մի նվիրական գաղափար, որ անպայման ուզում են տեսնել հետպատերազմյան օրերին: Շատ ավելի պարզ՝ բոլորի գաղափարները կարելի է նույնացնել և արտահայտել մեկ բառով՝ արդարություն: Ինչպիսի՞՞ երկիր ենք ուզում կերտել: Մենք պայքարի էինք ելել արդարության հաղթանակի համար: Մենք ցանկանում ենք, որ մեր երկրում գերիշխի արդարությունը: Հայ մարդու մեջ այդ ցանկությունը, գաղափարը շեշտված է: Բայց, դժբախտաբար, հետպատերազմական օրերին դա տեղի չունեցավ: Նույնիսկ պատերազմի ժամանակ արդեն սկսվեց այդ անարդարությունը և շարունակվում է մինչև այսօր: Եվ քանի որ դրա պատճառը ոգու անկումն է, պետք է բոլորս միասին փորձենք խելքի գալ և վերականգնել այն, որպեսզի կարողանանք գոյատևել այս տարածաշրջանում:

- Ասում ենք՝ Շուշիում հաղթեց հայի ոգին: Դուք այն ժամանակ կարո՞ղ էիք պատկերացնել, որ Շուշիի ազատարարները կհայտնվեն տարբեր ճամբարներում, կունենան տարբեր դիրքորոշումներ: Ինձ համար, օրինակ, ոչ թե անհասկանալի է, այլ դատապարտելի է մեան ջլատումը: Սա ոգեթափում է: Իմ կարծիքով սա ոչ թե անհատների հարց է, այլ բարոյական արժեքների: Թվում

եմ և ասի՝ այս երկրում երկրապահատիպ մեկ կազմակերպություն պետք է լինի՝ որպես բանակի պահեստազոր: Այսօր կան տասնյակ նման կառույցներ, որոնք ստեղծված են իբր ազատամարտիկների սոցիալական հարցերը լուծելու նպատակով: Սոցիալական հարցերով պետք է զբաղվի պետությունը: Ապագայի այդ կազմակերպությունը պետք է զբաղվի սերունդ դաստիարակելով, գորակոչիկների ֆիզիկական պատրաստականության գործերով: Այսօր այդ հասարակական կազմակերպությունների մեջ երկրապահի վերնախավն է օգտվում. ինչ-ինչ անունների տակ փողեր են հավաքում, յուրացնում, բայց իսկական ազատամարտիկների 90 տոկոսը չբավոր վիճակում է: Կարծում եմ՝ մոտ ապագայում այդ դաշտը կմիավորվի, որովհետև այսպես շարունակել այլևս անհնար է:

- Պատմականորեն այնպես է ստացվել, որ մեր բոլոր գլխավոր հաղթանակները տարել ենք մայիսին՝ Ավարայր, 1918թ. Մայիսյան հերոսամարտեր, ֆաշիզմի ջախջախում, Շուշի... Այդ ի՞նչ մոգական ուժ է գործում մեզ համար հատկապես մայիս ամսին: Մեր կամավորական ջոկատները մի տեսակ հաղթական կեցվածքով էին մեկնում ռազմի դաշտ, ասես հաղթանակած էին մեկնում մարտի...

- Իրոք, տղաները երգելով, պարելով էին գնում մարտի: Հայաստանբնակ թե սփյուռքահայ՝ բոլորիս համար էլ երազանք է եղել հայկական հողի վրա զենք վերցնելը՝ Մուշում, Սասունում, Վանում, Արցախում... Չմոռանանք, որ այսօրվա Հայաստանի ժողովրդի մեծամասնությունը գաղթականների սերունդ է, և Դարաբաղի ազատագրմանը 90 տոկոսով նրանց հետնորդներն են մասնակցել: Հողի կարտոը նրանց փոխանցվել է իրենց ավագներից, մեծերից: Հիմնական եռանդի աղբյուրը հենց նրանց ընտանիքներն են եղել:

- Ինչպե՞ս եք գնահատում Շուշիի ազատագրումը:

- Երևի թե կրկնելու են նույն խոսքերը: Առաջին Շուշիի ազատագրմամբ միավորվեց ողջ հայ ժողովուրդը: Երկրորդ՝ Ստեփանակերտը շունչ քաշեց, ժողովուրդն սկսեց նկուղներից դուրս գալ: Երրորդ՝ ցամաքային ճանապարհ բացվեց դեպի Հայաստան, առանց որի անհնար էր շարունակել պատերազմը: Եվ, վերջապես, հակառակորդի բարոյահոգեբանական մեծ անկումը, Շուշին կորցնելու պատճառով, հնարավոր դարձրեց մեր հաջող արշավանքը դեպի Լաչին: Շեշտը պետք է դնել բարոյահոգեբանական գործոնի վրա, որը պատերազմներում ամենակարևոր դերակատարությունն ունի: Խոսում էինք մեր մարտիկների



պետք չէ այսօրվա, այսպես ասած, կազմակերպվածության այս մակարդակը և զինվածությունը, եթե ոգին բացակայում է: Չեմ ուզում հորետես լինել. վստահ եմ, որ կարճ ժամանակում հնարավոր կլինի վերականգնել մեր ոգին:

- Ի՞նչն է ոգու անկման պատճառը:

- Հայ կամավորը պատերազմ է մեկնում հստակ համոզմունքով: Հայ մարտիկի նպատակը պարզապես հող, տարածք պահելը չէ կամ հայկական տարածք ազատագրելը չէ: Իմ կարծիքով

էր, թե այդ տարածքների ազատագրումից հետո մենք պետք է էլ ավելի ուժեղ զգայինք մեզ:

- Մինչև պատերազմի ավարտը արդեն երևում էր մոտալուտ ոչ հաջող ժամանակաշրջանը: Պառակտում չպետք է լիներ: Իմ կարծիքով՝ այն եղավ մեր բաղաբանական ղեկավարության մեջ ճիշտ գործունեության պատճառով, բայց դա չի նշանակում, թե այսպես էլ շարունակվելու է: Կա դրա դեղատոմսը: Պարզապես մի օր պետությունը պետք է լրջա-

ՋՈՐԱՎԱՐ ՎԱՐՂԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ



**ՅՅ ՋՈՒ մայրո
Սուրեն Մարտիկյան**

V դարը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի բախտորոշ ժամանակահատվածներից մեկն է:

Մեծ Հայքի բաժանումը (387թ.) Հռոմի ու Պարսկաստանի միջև, Արշակունիների հարստության անկումը (428թ.), և, որպես դրա հետևանք, տարածաշրջանում ուժերի հարաբերակցության փոփոխությունը հարկադրեցին փոխել ռազմական գործողությունների կազմակերպման ու վարման ձևերը:

Հավանաբար այս հանգամանքով է բացատրվում V դարի աչքի ընկնող ռազմա-քաղաքական գործիչներից մեկի՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանի նկատմամբ դարեր շարունակ պատմաբանների ցուցաբերած հետաքրքրությունը: Մանավանդ որ պետականության կորստից հետո հայոց ռազմարվեստի առաջին խոշոր փորձությունը 450-451թթ. Վարդանանց պատերազմն էր՝ ապստամբական մարտավարությանն անցման յուրօրինակ միջանկյալ օղակը:

Առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ, սակայն այսօր էլ բազմաթիվ վերլուծություններում այս պատերազմի գնահատականը թերի է: Ազատագրական պատերազմի (մեր կարծիքով՝ ռազմարվեստի տեսանկյունից ճիշտ չէ այն ապստամբություն անվանել) ռազմավարությունը «որոնելիս» պատմաբանները բանավեճերի նյութ են դարձրել ոչ թե ռազմարվեստը, այլ կրոնական հարցերը, Վասակ Սյունի-Վարդան Մամիկոնյանի հակասությունը և այլն:

Ժողովուրդը սրբացրել է Ավարայրի ճակատամարտի հերոս-նահատակներին, պատմաբաններն ու բանաստեղծները բազմիցս գովերգել են մարտը, սակայն որքան էլ անուրանալի է Ավարայրում տարած բարոյական հաղթանակի ռազմավարական նշանակությունը, մարտավարության տեսանկյունից այն ավարտվել է պարտությամբ: (Ռազմարվեստում ընդունված է գնահատման հետևյալ սկզբունքը. պարտված է համարվում այն կողմը, որն առաջինն է հեռանում մարտադաշտից, նույնիսկ այն դեպքում, երբ մարտը տեղի չի ունեցել): Դա էլ բազմաթիվ շահարկումների առարկա է դարձել՝ կասկածի տակ դնելով Վարդան Մամիկոնյանի զորավարական տաղանդը: Սուբյեկտիվ մոտեցում է ձևավորվել նաև խաղխաղի (այժմ՝ Ղազախ) ճակատամարտի ուսումնասիրման հարցում: Այն կարծես մնացել է Ավարայրի ստվերում և համարվել անհաջողակ սպարապետի պատահական հաղթանակ, մինչդեռ խաղխաղի ճակատամարտի համակողմանի վերլուծությունը կարող է էապես փոխել հայոց ռազմարվեստի զարգացման աստիճանի ու Վ. Մամիկոնյանի զորավարական տաղանդի մասին եղած տեսակետները:

450թ. ամռանը պարսից զորապետ Միհրներսեղը, Աղվանքի մարզպան Սեբուխտ Նիխորականի զորաբանակին միանալու և միացյալ ուժերով սպասամբությունը ճնշելու նպատակով, խոշոր բանակով մտավ Փայտակարան: Սեբուխտի ու Միհրներսեհի ուժերի միավորումը կանխելու համար Աղվանք շտապեց Վ. Մամիկոնյանը: Սպարապետը հաշվեկատորեն զորքը բաժանեց երեք մասի. երկուսը թողեց երկրում և միայն մեկ մասով շարժվեց դեպի Աղվանք:

Պատմիչների հավաստմամբ՝ Վասակ Սյունուց տեղեկա-

նալով հայոց բանակի ռազմերթի մասին՝ պարսիկները դիրք են գրավում խաղխաղ քաղաքից քիչ հեռու՝ Լուփնաս (Ձեգամ) գետի հովտում:

Սեբուխտի նախապատրաստական միջոցառումներից անտեղյակ՝ հայոց զորքը ռազմերթով խաղխաղի դաշտ է հասնում, որտեղ մարտակարգով նրանց էին սպասում պարսիկները: Սեբուխտը մարտակարգի կենտրոնում և աջ թևում շարել էր պարսկական զորամասերը, ծախում՝ Բաղասական ու Լփնաց զորամասերը: Պարսիկներն արդեն մարտակարգ էին ընդունել, սակայն քանի որ վերջապահ գնդերը դեռևս չէին ավարտել Կուրի գետանցումը, նրանց գրոհը հապաղեց, որն էլ Վարդան Մամիկոնյանին հնարավորություն տվեց արագ կողմնորոշվել և ընդունել մարտն սկսելու որոշումը: Մինչ պարսիկներն անցնում էին Կուրը, նա կարողացավ զորքը բաժանել երեք զորաթևերի, որոնք էլ ինքնուրույնաբար բացառապես իր հասցրին ձևավորել զորքի մարտակարգը:

Ընդհանուր ղեկավարումից բացի՝ Վ. Մամիկոնյանն ստանձնեց նաև կենտրոնի հրամանատարությունը: Սպարապետն աջ թևի հեծելազորի հրամանատարությունը հանձնեց իր փեսա Արշավիր Կամսարականին, ծախ թևը՝ Խորեն Խորխոռունուն: Որոշ ուշացումով մարտադաշտ հասած վերջապահ զորամասերն էլ, փաստորեն, կազմեցին մարտակարգի պահեստազորը: Դեպի Աղվանք շարժվող հայոց զորքի կազմը նկարագրելով՝ Ղազար Փարպեցին խոսում է նաև մարդպետական այրուձիու գնդի մասին: Սակայն մարտի ժամանակ զորաթևերի կազմի մեջ նրանք չեն հիշատակվում: Դրանից կարելի է եզրակացնել, որ մարդպետական հեծյալ գնդերը կազմում էին մարտակարգի պահեստազորը:

Այս ընթացքում գետանցումն ավարտելով՝ պարսիկներն շտապեցին գրոհել դեռևս նախամարտական կարգով շարված հայկական զորքի կենտրոնի զորամասերի վրա: Մարտի ընթացքում մարտակարգ ձևավորելով՝ գրոհի անցան նաև հայկական զորամասերը: Ա. Կամսարականի զորաթևի գրոհին չդիմանալով՝ պարսիկների ծախ թևն սկսեց նահանջել: Նրանց հետապնդելով՝ Ա. Կամսարականի հեծելազունը հայտնվեց մերձկուրյան ճահճուտներում («յանգիտութեն տեղացն դիպեցան թանձրախոր սաստիկ մօրից») և ստիպված դադարեցրեց հաջող սկսած գրոհը: Նման բարդ իրադրությունում արագորեն կողմնորոշվելով՝ Ա. Կամսարականը վերադասավորեց ճահճուտներում խրված ու մարտակարգը խախտած իր զորամասերը: Պարսիկների համար անսպասելի արագությամբ վերադասավորումն ավարտելով՝ աջ թևի հեծելազորը խոր թևանցման զորաշարժով դուրս եկավ Կուրի ափը:

Պարսից զորքի մարտական դասավորությունը նախատեսված չէր թևերում ու թիկունքում մարտ վարելու համար, և հայոց այրուձիու դեմ ամբողջական մարտաշար ձևավորել չկարողանալով՝ սկսեց նահանջել նաև կենտրոնը: Պարսկական բանակի ջախջախումը կատարյալ դարձավ, երբ նահանջող պարսկական զորամասերը սեղմվեցին Կուրի աջ ափին, իսկ գետը լողալով անցնող պարսկական զորքի մի մասը խեղդվեց ջրում: Հատկանշական է, որ մարտի այս փուլում Վ. Մամիկոնյանն առաջ բերեց նետածիգներին, որոնք սկսեցին նետահարել գետը լողալով անցնել փորձող հակառակորդի զինվորներին:

Փորձենք վերլուծել ռազմարվեստին առնչվող որոշ հարցեր, որոնք մեզ հնարավորություն կտան ճիշտ գնահատել Վ. Մամիկոնյանին՝ առաջին հերթին որպես մարտավարի:

Պատմիչները մեզ քիչ նյութ են տալիս ճակատամարտի

մասին՝ հատկապես Սեբուխտի մտահղացման վերլուծության համար, որը նվազեցնում է ճակատամարտը համակողմանիորեն քննելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, կարելի է պատասխանել որոշ հարցերի:

Պատմությունը լռում է պարսիկ զորավարի փայլուն հաղթանակների մասին, սակայն դա չի կարող նրա ապաշնորհության մասին եզրակացությունների հիմք հանդիսանալ: Այս հարցի շահարկումը որոշ դեպքերում նպատակ է ունեցել նսեմացնել հայոց զորքի հաղթանակը: Մասնավորապես, մինչև հայոց զորքի Աղվանք մտնելը, Սեբուխտը հաջողությունների էր հասել աղվան ապստամբների դեմ պայքարում: Նա ընդհանուր առմամբ լավ էր նախապատրաստվել նաև ճակատամարտին: Պարսիկները ճիշտ էին ընտրել մարտադաշտը: Լուվնաս և Կուր գետերի միախառնման վայրից քիչ հեռու գտնվող դաշտում լավ տեսադաշտ էր պահովվում, սակայն հայոց բանակի գլխավոր հարվածող ուժը՝ մեծաթիվ այրուծին, բաց հարթավայրային տեղանքում, ճահճուտների ու դաշտը եզերող անտառի պատճառով չէր կարողանա ազատորեն գործել: Այսինքն՝ հայերը զրկվելու էին իրենց առավելությունից՝ զորաշարժային բարձր ցուցանիշները գործի դնելու հնարավորությունից: Բացի այդ՝ հայոց բանակը մարտադաշտ մտավ երթային կարգով: Այդ պայմաններում բաց տեսադաշտը Սեբուխտին հնարավորություն էր տալիս հետևել հայկական զնդերի բացազատման ընթացքին, գտնել նրանց ամենաթույլ տեղամասը և ուժերը կենտրոնացնել այդտեղ: Ճակատամարտն այդպես սկսելով՝ Սեբուխտը մի շարք առավելություններ էր ստանում: Հանկարծակիության գործոնը մարտի սկզբից և եթե նախաձեռնությունը պարսիկներին տվեց: Դրա համար Վ. Մամիկոնյանը հարկադրված էր բարդ զորաշարժերի ու մի քանի տեղամասերում միաժամանակ հատող գրոհների դիմել, որն, ի դեպ, միջնադարյան ռազմարվեստում չէր խրախուսվում: Եթե նկատի ունենանք պարսկական բանակի քանակական առավելությունը (պարսիկներն առնվազն մեկ ու կես անգամ ավելի պետք է լինեին), կարելի է կարծել, որ Սեբուխտը՝ վստահ իր հաջողությանը, առանձնակի ռիսկի դիմելու անհրաժեշտություն չուներ: Առավել ևս պատմիչներն այդ մասին ոչ մի ակնարկ չեն անում: Ուստի հավանական է, որ պարսիկները կիրառել են ամբողջ ճակատով միաժամանակյա հզոր հարձակում: Մարտի մտահղացման այս տարբերակը լայն տարածում էր ստացել դեռևս Ք.ա. I հազարամյակում և շատ հարմար էր միջին (աչքի չընկնող) ընդունակությունների տեր, սակայն մեծ բանակ ունեցող զորավարների համար:

Միանգամայն այլ է Վ. Մամիկոնյանի գործողությունների պատկերը:

Հակառակորդին հանդիպելով ու մարտի կազմակերպման (դաշտի դիտում, տեղազննում, մարտակարգով զորամասերի շարում և այլն) համար անհրաժեշտ ժամանակ չունենալով՝ սպարապետը կարողություն է ճիշտ գնահատել ստեղծված մարտական իրադրությունը և ընդունել մարտը:

Այս հարկադրված հապճեպությունը չէր կարող չանդրադառնալ մարտի ընթացքի վրա. անձանոթ տեղանքում թևանցում իրականացնող Ա. Կամսարականի զորաթևը հայտնվեց մերձկուրյան ճահճուտներում: Դրանից օգտվելով՝ պարսիկները նոր գրոհով կարողացան նեղել հայերին:

Ավելի քան հազար տարի Առաջավոր Ասիայում իր զորաշարժային հատկություններով փայլող հայոց այրուծիու պատրաստվածության բարձր մակարդակն էր պատճառը, որ նման դժվարին իրադրությունում հաջողվեց աջ թևի վերադասավորումը: Չգիտես ինչու հայոց պատմագրությունը հանիրավի մոռացության է տվել Ա. Կամսարականի զորավարական տաղանդը: Արտակարգ բարդ իրադրությունն արագ գնահատելու և վճռական որոշումներ կայացնելու նրա ընդունակությունը հնարավորություն ընձեռեց անբարենպաստ

պայմաններում սկսած մարտն ուղղակիորեն փրկել անխուսափելի թվացող պարտությունից: Ավելին՝ ճահճուտներին սեղմված աջ զորաթևը, հավանաբար, օգնական զորքեր ստանալով, դիմեց էլ ավելի հանդուգն քայլի՝ խոր թևանցող (փաստորեն շրջանցող) զորաշարժի: Սրա շնորհիվ՝ պարսիկների աջ թևը ջախջախելով՝ Ա. Կամսարականի զորագունդը հայտնվեց նրանց մարտակարգի թիկունքում: Առաջացած խուճապն էլ վճռեց ճակատամարտի բախտը: Պարսկական բանակն սկսեց անկանոն նահանջը, որն ավարտվեց նետերի տարափի տակ ընկած պարսիկ զինվորների կոտորածով:

Նետածիգների զորամասերը մարտի ընթացքում սովորաբար գտնվում են ծանրագնե հետևակի ու հեծելազորի և հետևակի թիկունքում: Ճակատամարտի վերջին փուլում նետածիգներին առաջ բերելը Վ. Մամիկոնյանի ուշագրավ մարտավարական հնարքներից մեկը պետք է համարել, թեև շեշտենք, որ այն ռազմարվեստում նորություն չէր:

Հաջող գրոհով, ապա նաև համառ դիմադրությամբ աչքի ընկավ սպարապետի անմիջական հրամանատարության տակ գտնվող մարտակարգի կենտրոնը: Այն կաշկանդեց



պարսիկների մեծաթիվ ուժերը՝ կապող օղակ դառնալով հզոր գրոհների դիմակայող ծախթևի և նոր գրոհի համար վերադասավորվող աջ թևի միջև: Կենտրոնի մարտակարգի կայունությունն էր, որ կենտրոնի և աջ թևի միջև մխրճված պարսիկներին հնարավորություն չտվեց կտրել նրանց կապը:

Սակայն ինչպես հայոց, այնպես էլ համաշխարհային ռազմարվեստում խաղիսաղոմ ճակատամարտի դերը չի սահմանափակվում մարտի հմուտ կազմակերպմամբ, իրադրության արագ գնահատմամբ ու փայլուն իրականացված շրջանցմամբ: Դրանք ռազմարվեստում վաղուց արդեն նորություն չէին, թեև կարող էին բավարար լինել որևէ զորավարի փառաբանման համար:

Համաշխարհային ռազմարվեստում առաջին անգամ հայոց զորքը խաղիսաղոմ կիրառեց հանդիպական մարտը. մի բան, որ այս ճակատամարտից հետո էլ երկար ժամանակ չէր ընդունվում ռազմարվեստում: Ուշագրավ է, որ Վ. Մամիկոնյանը գրոհն սկսելու որոշումն ընդունել է այն ժամանակ, երբ մարտակարգը դեռևս ձևավորված չէր: Փաստորեն զորքը գրոհն սկսեց նախամարտական կարգով: Ընդ որում՝ եղիշեն շեշտում է, որ պարսիկների դիմադրությունը հաղթահարվեց «յոյժ յանդուզն յարձակման» շնորհիվ:

Վ. Մամիկոնյանի զորավարական տաղանդի վառ արտահայտությունը դարձավ ընթացքից մարտի մեջ մտնելը, որը նույնպես համաշխարհային ռազմարվեստում առաջին անգամ էր կիրառվում (այն այսօր հանդիպական մարտի պար-

տաղիր նախապայմանն է համարվում): Մերժելով գրեթե բոլոր երկրներում միահամուռ ընդունվող տեսակետը՝ Վ. Մամիկոնյանը վերացրեց ռազմերթի ու մարտի միջև պարտադիր դադարը: Հայոց սպարապետի՝ դարակազմիկ նշանակություն ունեցող այս քայլն առայժմ չի արժանացել համապատասխան գնահատականի՝ հատկապես համաշխարհային ռազմարվեստում մարտի ունեցած նշանակության տեսանկյունից: Որպեսզի պարզ դառնա կատարվածի կարևորությունը, նշենք միայն, որ հետագա ավելի քան 13 դարերի ընթացքում զորավարները չէին համարձակվում կրկնել ընթացքից մարտի մեջ մտնելու փորձը:

Խաղխաղում կիրառված այդ նորարարությանն անտեղյակ լինելն է պատճառը, որ մինչ օրս հանդիպական մարտի առաջին օրինակ է համարվում Տրեբիա գետի մոտ 1799թ. հունիսին Ալեքսանդր Սուվորովի գլխավորած ռուս-ավստրիական բանակի ճակատամարտը ֆրանսիացիների դեմ: Հանդիպական մարտերով էր պայմանավորված արագածիզ հրազենի ի հայտ գալը և շարասյունների (կառենների) մարտավարության կիրառումը:

Խաղխաղի ճակատամարտով ոչ միայն հայոց, այլև համաշխարհային ռազմարվեստը հարստացավ ընթացքից (առանց նախամարտական դադարի) մարտի մեջ մտնելու և հանդիպական մարտի գործնական փորձով: Դրանով Խաղխաղի ճակատամարտն իր տեղն է գրավում այնպիսի ճակատամարտերի շարքում, ինչպիսիք են Ք.ա. 371թ. Լևկտրայի (առաջին անգամ զորքը շարվեց ճակատով անհավասար), Ք.ա. 331թ. Գավգամելայի (կիրառվեց բարդ զորաշարժ), Ք.ա. 216թ. Կաննեի (առաջին անգամ փոքր բանակը շրջապատեց

ու ջախջախեց ավելի մեծաթիվ բանակի), Ք.ա. 48թ. Փարսալուսի (առաջին անգամ պահեստազորը մարտադաշտում վճռական դեր կատարեց) մարտերը: Իսկ Վարդան Մամիկոնյանն իր արժանի տեղն է գրավում ռազմարվեստի այնպիսի բարեփոխիչների կողքին, ինչպիսիք ե Էպամինոնդասը, Ալեքսանդր Մակեդոնացին, Հաննիբալը, Հուլիոս Կեսարը և ուրիշներ:

Ցավոք, պետականության կրոստին հետևած զինված ուժերի թուլացումը բացասաբար անդրադարձավ հայոց ռազմարվեստի հետագա զարգացման վրա: Ընդամենը երեք տասնամյակ անց ապստամբական մարտավարությանն անցնելն, անշուշտ, պարտադրված քայլ էր: Սակայն ապստամբական փոքրաթիվ ուժերով հակառակորդի հզոր բանակների հետ բաց դաշտում առճակատումից խուսափելով՝ հետագա շրջանի հայ զորապետերն ստիպված հրաժարվում էին մարտավարական այնպիսի հնարքներից, որոնք դարերով մշակվելով՝ բարձր մակարդակի էին հասցրել հայոց ռազմարվեստը:

Աստիճանաբար մոռացության տրվեց նաև Խաղխաղում ձեռք բերված ուշագրավ և ուսանելի փորձը, իսկ Ավարայրում բարոյական հաղթանակի շեշտումն ու նրա հակադրումը ռազմական հաղթանակին ձևավորեց Վ. Մամիկոնյանի գորավարական տաղանդի շուրջ առկա անորոշության ու կասկածի մթնոլորտը: Սկսեց խամրել տաղանդավոր զորապետի ռազմական փառքն ու հասարակության լայն խավերի գիտակցության մեջ մնաց միայն անձնագրի զինվորականի թերի կերպարը:

Սուրեն Սարտիկյան

1918 ԹՎԱԿԱՆ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐ

← էջ 2

ռը, Աղբուլաղը (այժմ՝ Լուսաղբյուր), Ղալթաղչին (այժմ՝ Հարթազյուղ), մայիսի 21-ին՝ Վորոնցովկան: Ջալալօղլու (այժմ՝ Ստեփանավան) մոտ տեղի ունեցած երկօրյա մարտերից հետո Անդրանիկի ջոկատը կենտրոնացել էր Դսեղ գյուղի մոտ, ապա շարժվել դեպի Դիլիջան: Դիլիջանի մոտ կային հայկական զինված ուժեր՝ թեմերալ-մայրորդ Թովմաս Նազարբեկյանի զվհավորությանը:



Գ. Նժդեհ

Մայիսի 24-ին Դիլիջանում հեծյալ գնդի հրամանատար Նիկոլայ Ղորղանյանը կարգադրում է Նժդեհին իր զորամասով առաջինը «վերադառնալ Ղարաքիլիսա, շփման մեջ մտնել թշնամու ուժերի հետ և սպասել օգնության»: Ձորամասը հավաքվում է եկեղեցու բակում: Ժողովուրդը եկել էր հրաժեշտ տալու նրանց: Ձինվորական բարձրաստիճան այրերը խորհուրդ են տալիս մահապարտների հրամանատար Նժդեհին. «Այլևս ազատ ես և կարող ես բռնել ցանկացած ուղին»: Ի պատասխան պարտվողական տրամադրությամբ համակված զինվորականության Նժդեհը ելույթ է ունենում Դիլի-

ջանի եկեղեցու բակում հավաքվածների առջև. «Վայրկյանը ճակատագրական է, ասում է նա, - ով դեռ չի դավաճանել Հայ ցեղին, թող հետևի ինձ... Սպաները գնում են անձնատուր լինելու: Թող գնան: Իսկ ես գնում եմ մեռնելու: Ով դեռ իրեն բարոյապես մեռած չի համարում, թող հետևի ինձ»:

Գնդապետ Արտավազդ Հարությունյանն իր հուշերում գրել է. «Ղարաքիլիսայի ճակատը, որ բաց էր մնացել, և թշնամին պիտի կարողանար լիկվիտացիայի ենթարկել Արարատի և Սարդարապատի ռազմաճակատները, ապահովվեցավ և զոգվեցավ բաց աչքերով դեպի մահ գացող զորամասերով: Եվ այդ բոլորը՝ շնորհիվ Նժդեհին:

....Այս ճակատամարտը, Սարդարապատի կռիվներում հետ մնաց հայ ժողովրդի գերագույն ծիզերեն մեկը: Մահվան ուրվականը իր աչքին առջև պարզված ժողովուրդի մը օրհասական կռիվն էր ան»:

Բախտորոշ այդ ժամանակների մասին տարիներ անց՝ 1936թ., «Ռազմիկ» թերթում Գարեգին Նժդեհը գրել է. «Կռիվը որքան տարերային, այնքան կարճատև եղավ: Թշնամին տագնապով փախչում էր դեպի Արցուտ: Նա ժամանակ չուներ իր վիրավորները փրկելու: Մենք կշարունակեինք մեր տակտիկական ճռաբաղը: Այդ ժամին

հայ մարտիկն արժանի էր իր ցեղի անուշիկն (ընդգծումը մերն է - խմբ.): Ճակատամարտի առաջին օրն սկսվել էր հայ ոգու փայլուն գերազանցությամբ: Այլևս կար համոզումը, թե պիտի հաջողենք Ղարաքիլիսում կրկնել Ավարայրը և տալ երևանին իր ուզած երեք օրը՝ Բաթումի մեր պատգամավորության գործը հեշտացնելու համար:

Այդ օրը Մայիս 25-ն էր...»:

Մայիսյան հերոսամարտերի պսակը Հայաստանն անկախ հանրապետություն հռչակելն էր: 1926թ. Սոֆիայում լույս տեսնող «Արաքս» թերթում՝ «Օրերի օրը» հոդվածում, Սպարապետը գրել է . «Մեր երջանիկ սերունդի օրով տեղի ունեցավ Մայիսի 28-ի պատմական ակտը - հայ ժողովրդի քաղաքական հարությունը... Մենք կը պատկանինք Հայության այն արի և անձնուրաց մասին, որի գերմարդկային ծիզերի շնորհիվ միայն դարերի ստրկության ճահճից այնքան դուրսագնորեն բարձրացավ մեր Ազգը և արժանաբար տեղ գրավեց օրվա պետությունների կողքին...»

Ահա՛ թե ինչու Մայիս 28-ը պիտի մնա տիրակալորեն միակ քաղաքական աստվածությունը, որին փարած հայությունը պիտ կարողանա ապրիլ և ստեղծագործել ազգորեն»:

Հասմիկ Գուլակյան

ՄՈՐՄՈՆՆԵՐԸ ՄԵՐ ՏԱՆԸ

Տարիել Ղաջոյան
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ



Աստծուն՝ անարգանք և մարդկանց ամոթ կլիներ լրջությամբ նայել հորինվածքների այս խղճուկ շարադրանքին, որի յուրաքանչյուր բառը կամ վերին աստիճանը ծիծաղելի է, կամ վերին աստիճանի սարսափելի:

Լորդ Բոլինգբրոկ, անգլիացի քաղաքական գործիչ, փիլիսոփա, XVII դ.

- Ձեր հանրապետության դռները բացե՛ք, գանք այն ներսից քանդենք...

- Իսկ մեզ ի՞նչ կտաք:
- «Եվրակոնֆետ» և «ամերիկյան մաստակ»:
- Դրանք մեր ժողովրդի ազգային ստամոքսը չի՛ մարսի:
- **Մի՛ անհամբուստացեք: Դրանք մինչև ժողովրդի ստամոքսը չեն հասնի: Իսկ ձեր անսահման տարողունակ ստամոքսը, անկասկած, կմարսի:**
- Եթե այդպես է, համեցե՛ք: Մեր հանրապետության դռները ձեր առջև միշտ բաց կլինեն:

Ահա, մոտավորապես, ՀՀ «անկախ» իշխանավորների, օտարից հրահանգվող, օտարի թափոններով սնվող իշխանամետ և ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդների, Հայ առաքելական եկեղեցու «սուրբ» առաջնորդների, «գրանտներով» կերակրվող հասարակական կոչվող կազմակերպությունների ղեկավարների և համաշխարհային նենգ ու դավադիր «գլոբալիստների» միջև «ազատ շուկայական» երկխոսության բովանդակությունը:

Հնարավոր է, որ օտարի այս պնակալեզուները հարց տան, թե վերջապես ինչի՞ է պետք Հայաստանի Հանրապետության անկախությունը, չէ՞ որ այն չեն խժռի: Դրանց Մեծն Նեֆեղը հետևյալ պատասխանն է տվել. «Անկախ Հայրենիքը անհրաժեշտ է հենց նրա համար, որ ձեզ՝ հոգով թզուկներին, դարձնե կատարյալ մարդ և Հայ, արժանի անկախության...»:

Մեր այն ազգակիցների համար, ովքեր կասկածում են վերը շարադրված երկխոսության հնարավորությունը և դեռ կարծում են, թե ՀՀ-ն անկախ, ազգային շահին ծառայող պետություն է, ներկայացնեն, այսպես կոչված, մորմոնների գործունեությունը հանրապետությունում՝ լիազորված և երաշխավորված իշխանություններից:

Համառոտ տեղեկություն՝ մորմոնների մասին:
«Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին» կամ, որ նույնն է, մորմոնների «եկեղեցին» պաշտոնապես կազմավորել է քրեական անցյալ ունեցող ոմն Ջոզեֆ Սմիթը Ամերիկայում 1830 թվականին (1844թ. նրան սպանել են կալանավայրում): Մորմոնների հիմնական նստատեղին ԱՄՆ-ի Յուտա նահանգի Սոլթ Լեյթ Սիթի մայրաքաղաքն է: Աշխարհում այսօր հաշվվում է շուրջ տասնմեկ միլիոն մորմոն, որոնց մոտ կեսը՝ ԱՄՆ-ում:

Եվրոպայում և նախկին ԽՍՀՄ-ի երկրներում գործում են մորմոնական շուրջ հազար հինգ հարյուր համայնքներ, որոնցից ավելի քան տասը՝ Հայաստանում:

ՀՀ-ում մորմոններն ընդունվել և պաշտոնական գրանցում են ստացել «Դարաբաղ» կոմիտեի անդամների և ՀՀԸ իշխանությունների «անշահախնդիր» աջակցությամբ:

Մորմոնների ազատ և ծավալուն գործունեությունը հանրապետությունում երաշխավորում են իշխանությունները:

Մորմոնական օրինական համայնքներ և եկեղեցիներ են գործում Երևանի Կենտրոն, Շենգավիթ, Արաբկիր, Դավիթաշեն, Հարավ-արևմտյան թաղամասերում, Գյումրիում, Վանա-

ծորում, Արտաշատում, Մասիսում, Աշտարակում և այլուր: Մորմոնական եկեղեցիներում, որոնց քաղաքային և մարզային իշխանությունները շենքեր և տարածքներ են տրամադրել, յուրաքանչյուր կիրակի կատարվում են ժամասացություններ, քարոզներ, տոնական և այլ ծիսակատարություններ: Եկեղեցիներին կից գործում են կիրակնօրյա դպրոցներ: Երևանի նախկին թիվ 1 քաղաքային բաղնիքի (այժմ ոսկեղենի տոնավաճառ) հարևանությամբ գտնվող նորակառույց եկեղեցական համալիրում գործում է մորմոնական համալսարան:

Մորմոնների առաջնորդարանը գտնվում է Երևանի Վրացական փողոցում:

Մորմոնական եկեղեցիների տանիքին քրիստոնեական խաչը փոխարինված է ցցով (սրածայր ծող): Այս պատճառով, նրանք կոչվում են «ցցի եկեղեցիներ»:

Բացի եկեղեցիներում կատարվող կիրակնօրյա քարոզներից, դպրոցներից, դասընթացներից և համալսարանից՝ մորմոնական գաղափարախոսությունը Հայաստանի ողջ տարածքում օր ու գիշեր տարածում են շուրջ 50 միսիոներներ ԱՄՆ-ից: Երանք հիանալի տիրապետում են հայերենին և յուրաքանչյուր մեկուկես-երկու տարին մեկ փոխարինվում են նորերով:

Մորմոն միսիոներները, ի տարբերություն Հայ առաքելական եկեղեցու սպասավորների, ընտրել են ժողովրդի հետ անմիջական շփման տարբերակը: Վաղ առավոտից մինչև ուշ երեկո շրջում են իրենց ապագա հավատացյալների տները, ծանոթանում նրանց ընտանիքներին, խորամուխ լինում նրանց օրախնդիրներին և այդ ամենը հաջողությամբ օգտագործում՝ «մուլոյալներին» իրենց հավատին բերելու համար: Եթե իրոք կա մի բան, որ մեր ժողովուրդը և, հատկապես, Հայ առաքելական եկեղեցու սպասավորները պետք է ընդօրինակեն մորմոն միսիոներներից, նրանց աշխատասիրությունն է և նվիրվածությունն իրենց գործին:

Ո՛ւմ և ինչի՞ է ծառայում մորմոնական վարդապետությունը (գաղափարախոսությունը) աշխարհում և, մասնավորապես, Հայաստանում: Այդ մասին գաղափար կարելի է կազմել՝ ծանոթանալով նրանց հայագիր ծավալուն գրականությանը: Այն տարածվում է արդեն իսկ բազմահազարանոց հայագրի մորմոնների և ներունակ մորմոնների մեջ:

Ստորև կփորձեն մորմոններին ներկայացնել իրենց իսկ Աստծո և մարգարեների խոսքերով՝ քաղվածքներ կատարելով մորմոնական հայալեզու գրականությունից:

«Երբ Ջոզեֆ Սմիթը 14 տարեկան էր, ցանկանում էր իմանալ, թե որ եկեղեցուն պիտի միանա ինքը, և անկեղծ աղոթքով դիմեց Աստծուն» (2, էջ 1): «...Իմ առաջ հայտնվեցին լուսնդեն երկու կերպարանքներ, որոնց փառքն ու պայծառությունը գերազանցում էին արևին» (2, էջ 2):

Դրանք, ինչպես ասվում է «մարգարեի վկայությունում», եղել են Տեր Աստվածն ու նրա որդի Քրիստոսը:

«Սա՛ է իմ սիրեցյալ որդին: Լսի՛ր նրան» (2, էջ 3):
«Աստծուն դիմելու իմ նպատակն էր՝ իմանալ, թե գոյություն

ուՆեցող կրոնական խմբերից ու աղանդներից որն է ճշմարիտ...» (2, էջ 3): «Ինձ պատասխանեցին, որ դրանցից ոչ մեկին հարկավոր չէ միանալ, քանի որ դրանք բոլորն էլ կեղծ են: Ինձ հետ զրուցող անձն այսպես խոսեց. «Այդ բոլոր վարդապետությունները գարշելի են իմ աչքում, իսկ դրանց քարոզիչները՝ կեղծ և մերժելի...»: Ես էլի շատ բաներ ասաց ինձ, որոնք այս պահին չեն կարող գրի առնել» (2, էջ 3):

Հավանաբար Տեր Աստվածը և նրա որդին, պարկեշտությունը վիրավորող բառերով, ավելի հիմնավոր «փաստարկներ» են բերել՝ իրենց միտքը հաստատելու համար:



Վերջին օրերի սրբերի (աստանացիների) եկեղեցու հիմնադիր և առաջին «մարգարե»
Ջոզեֆ Ամիթ

Դե, եթե քրիստոնեական բոլոր եկեղեցիները «գարշելի» են, թող մեր Հայ առաքելական եկեղեցին էլ գարշելի լինի, հավանաբար մտածել են Հայ առաքելական եկեղեցու առաջնորդները և ձեռք թափ տվել Հայաստանում մորմոնների գործունեության վրա. մենք միայն մոմեր վաճառելով այնքան մեծ շահույթներ ենք ստանում, որ եթե մի երկու տասնյակ հազար հավատացյալներ էլ պակաս ունենանք, չենք սնանկանա:

«Հետապնդումը շարունակվեց, քանի որ Ջոզեֆը չցանկացավ ժխտել, որ տեսել է Աստծուն: 1823թ. սեպտեմբերի 21-ին (ճակատագրի հեգնանքով՝ սեպտեմբերի 21-ը մեր Անկախության օրն է - Տ. Ղ.) անկողնում գամված Ջոզեֆն աղոթեց՝ իմանալու համար իր անելիքները Աստծո առջև: Մորոնի հրեշտակը հայտնվեց նրան» (2, էջ 5): « Ես ասաց, որ ոսկյա թիթեղների վրա գրված մի գիրք կա պահված, որը պատմում է այս մայրցամաքի (Ամերիկայի - Տ. Ղ.) հնագույն բնակիչների և նրանց ծագման մասին» (2, էջ 5):

Կանխենք հնարավոր թյուրիմացությունը. խոսքն Ամերիկայի բնիկների մասին չէ: Նրանց գոյության մասին «Երկնային Տերը» բոլորովին գաղափար չի ունեցել:

Հետագայում իբրև «ոսկյա թիթեղների» վրա գրված գիրքը թարգմանել է Ջոզեֆը և կազմել «Մորմոնի գրքի» բովանդակությունը:

Հետագա քաղվածքները «Մորմոնի գրքից» են:
«Հրեաները կխաչեն իրենց Աստծուն: Նրանք կցրվեն, մինչև որ սկսեն հավատալ նրան: Ամերիկյան կլիմի ազատության երկիր, որտեղ ոչ մի թագավոր չի իշխի: Մոտ՝ 559-545 տարի Ք. Ա.» (3, էջ 78):

«Ուստի, ինչպես ես ասացի ձեզ, անպայման պետք է անհրաժեշտ լինի, որ Քրիստոսը, քանզի անցած գիշեր հրեշտակն ասաց ինձ, որ այս պետք է լինի նրա անունը, պիտի գա հրեաների մեջ, նրանց մեջ, որոնք աշխարհի առավել ամբարիշտ մասն են, և նրանք կխաչեն նրան, քանզի այդպես է պետք մեր Աստծուն, և չկա ոչ մի ուրիշ ազգ երկրագնդի վրա, որ խաչի իր Աստծուն: Քանզի, եթե այդ գորավոր հրաշքները գործվեին ուրիշ ազգերի մեջ, նրանք կապաշխարեին և կիմանային, որ նա է իրենց Աստվածը» (3, էջ 78):

«Բայց, ասաց նա (Լեքին հրեաների նախահայրը, որն Աստծո աջակցությամբ իր ընտանիքով տեղափոխվել էր «անմարդաբնակ» Ամերիկա՝ Քրիստոսի ծննդից դեռ 600 տարի առաջ - Տ. Ղ.), չնայած մեր չարչարանքներին, մենք ձեռք ենք բերել խոստումի երկիրը, երկիր, որը բոլոր մյուս երկրներից ավելի ընտիր է» (3, էջ 54):

Նկատենք, որ Աստված «բոլոր մյուս երկրներից ավելի ըն-

տիր» երկիրը նվիրում է հրեաներին՝ «աշխարհի առավել ամբարիշտ» ժողովրդին: Մնում է ակամայից հարց տալ. «Ի՞նչ Աստված ես դու երկնքում, որ էլը կովից չես տարբերում» (ըստ Վարդան Այգեկցու):

«Եվ, ահա, դա իմաստություն է, որ այս երկիրը դեռ պետք է պահվի մյուս ազգերի իմացությունից. քանզի ահա բազմաթիվ ազգեր կհեղեղեն երկիրը, այնպես որ ժառանգության համար տեղ չէր լինի» (3, էջ 55):

Ի՞նչ է, կարծում եք այս ամենը փչո՞ց է: Դուք դեռ շարունակությունը կարդացեք, կտեսնեք, որ ոչ, փչոց չէ, այլ մթազնած ուղեղի զառանցանք:

«Նեփիացիներն իրենց առանձնացնում են Լամանացիներից (Նեփին և Լամանը Լեքի որդիներն են - Տ. Ղ.): Իրենց անհավատության հետևանքով Լամանացիները կտրվում են Տիրոջ ներկայությունից, անհծվում և դառնում խարազան Նեփիացիների համար: Մոտ՝ 588-559 տարի Ք. Ա.» (3, էջ 65): «Եվ նա արեց այնպես, որ մի անեծք գար նրանց (Լամանացիների - Տ. Ղ.) վրա, այդ, նույնիսկ, դառն անեծք նրանց անօրինության պատճառով: ...Քանի որ նրանք սպիտակ էին և չափազանց գեղեցիկ ու հմայիչ, որպեսզի նրանք չկարողանային հրապուրիչ լինել իմ ժողովրդի (Նեփիացիների - Տ. Ղ.) համար, Տեր Աստված արեց այնպես, որ սևամաշկություն գար նրանց վրա: Եվ այսպես է ասում Տեր Աստված. Ես այնպես կանեմ, որ նրանք զգվելի կլինեն քո ժողովրդի համար, մինչև որ նրանք չապաշխարեն իրենց անօրինություններից: Եվ անհծված կլինի սերունդը նրա, ով կխառնվի նրանց սերնդին. քանզի նրանք կանհծվեն հենց նույն անեծքով: Եվ նրանց անեծքի պատճառով, որն իրենց վրա էր, նրանք դարձան մի ծուլ ժողովուրդ՝ լի չարությամբ, և նրանք անապատում փնտրում էին որսի գազաններ» (3, էջ 67):

Հիմա իմացա՞ք, թե ովքեր են Ամերիկայի հնդկացիները: Նրանք բոլորովին էլ Ամերիկայի բնիկները չեն, այլ հրեաներ՝ Աստծո կամոք տեղափոխված Ամերիկա (շուրջ 600 տարի Ք. Ա.) և անհծված Աստծուց: Նրանք ոչ միայն «զգվելի» են իրենց մաշկի գույնի պատճառով, այլ նաև «ծուլ» և «լի չարությամբ»:

Եվ որքա՞ն «իրավացի» էին «աստվածահաճ» անգլիացիները, ովքեր այս դեպքերից 2000 տարի անց, գալով Ամերիկա, անմարդկային, բայց «աստվածային» դաժանությամբ բնաջնջեցին նրանց:

Մի՞թե սա ռասիզմի դասական օրինակ չէ: Մի՞թե այս ձևով մորմոնները չեն ոտնահարում միջազգային իրավական նորմերով և ՀՀ սահմանադրությամբ ամրագրված մարդու ապրելու և արժանապատվության հիմնարար իրավունքները: Մի՞թե սա բավարար հիմք չէ՝ ՀՀ-ում մորմոնների գործունեությունն արգելելու և նրանց հանրապետությունից վտարելու համար:

Այս արցերի պատասխաններն ակնկալելով ՀՀ նախագահից՝ շարունակենք քաղվածքների շարադրանքը:

«Այսպես է ասում Տեր Աստված. Միա, ես կբարձրացնեմ իմ ձեռքը դեպի Հեթանոսները և վեր կհանեմ դրոշա այդ ժողովրդի համար. և նրանք իրենց ձեռքերի վրա կբերեն քո որդիներին և քո դստերը կտարվեն նրանց ուսերին: Եվ թագավորները (հեթանոսների - Տ. Ղ.) պիտի լինեն քո խնամող հայրերը, և նրանց թագուհիները՝ քո ստնտու մայրերը. նրանք երեսնավայր մինչև գետին կխոնարհվեն քեզ և կլիզեն քո ոտքերի փոշին Ուստի, նրանք, ովքեր կրվում են Սիրոնի դեմ և՛ Տիրոջ ուխտյալ ժողովրդի, կլիզեն նրանց ոտքերի փոշին» (3, էջ 68-69):

Ինչպիսի՞ «աստվածային» գռեհկություն:

«Որքան խորանում ես անտառում, այնքան շատ է ցախը»: Որքան խորանում ես «Մորմոնի գրքի» ընթերցման մեջ, այնքան ուժեղանում է «աստվածային» զարշահոտությունը:

«...այսպես է ասում Տերը. Նույնիսկ հզորի գերիները կառնվեն և զարհուրելի ավարը կազատվի. քանզի Հզոր Աստված կազատի իր ուխտյալ ժողովրդին: Քանզի այսպես է ասում»

Տերը. Եվ ես կկերակրեմ նրանց, ովքեր քեզ ճնշում են, իրենց իսկ մտով. և նրանք հարբած կլինեն իրենց իսկ արյամբ, ինչպես քաղցր գինուց. և ամեն մարմին (նկատենք՝ մարմին, և ոչ թե մարդ - Տ. Ղ.) **պետք է իմանա, որ ես՝ Տե՛րս եմ քո փրկիչը և քո քավիչը՝ Դզորը Դակոբի» (3, էջ 70):**

Այո՛, անգլիացի, թուրք, գերմանացի ֆաշիստ ցեղասպանների հրեշավոր դաժանությունները միայն մանկական խաղեր են՝ այս «աստվածային» դաժանությունների համեմատությամբ:

«Ձարթնիր, զարթնիր, հագիր զորությունդ, ո՛վ Սիոն, հագիր գեղեցիկ հագուստներդ, ո՛վ Երուսաղեմ, սուրբ քաղաք. քանզի այսուհետև այլևս քո մեջ չի մտնի անբելիատը և անմաքուրը» (3, էջ 72):

«Եվ այժմ, իմ սիրելի եղբայրներ, ես կարդացի այս բաները, որպեսզի դուք իմանաք Տիրոջ ուխտերի մասին, որ նա ուխտել է ողջ Իսրայելի տան հետ, որոնք նա խոսել է Դրեաներին, իր սուրբ մարգարեների բերանով, նույնիսկ՝ սկզբից ի վեր, սերնդե սերունդ, մինչև զա ժամանակը, երբ նրանք կվերադարձվեն դեպի ճշմարիտ եկեղեցին և Աստծո հոտը. երբ նրանք կժողովվեն տուն՝ դեպի իրենց ժառանգության հողերը և կհաստատվեն բոլորը իրենց խոստումի երկրունը» (3, էջ 73):

Կարծեք թե «Մորմոնի գրքի» էջերը թերթում ես միայն այն բանի համար, որ մի զառանցանքից անցնես մյուսին, մի ստորությունից՝ մյուսին, անմարդկային («աստվածային») մի դաժանությունից՝ մյուսին, ազգատյացության դրսևորման մի օրինակից՝ մյուսին, մարդկության պատմության մի խեղաթյուրումից՝ մյուսին և այլն:

Աստծո անունից բարբաջվող այս ամբողջ գարշանքը, իմ կարծիքով, նախ և առաջ, վիրավորում է հրեա ժողովրդի արժանապատվությունը և նպատակ է հետապնդում համամարդկային ատելություն սերմանել նրանց նկատմամբ՝ սեպ խրել իրեա և մյուս ժողովուրդների միջև:

Ահա թե որտեղ պետք է որոնել հակասեմականության ակունքները:

Դրեա ժողովուրդը, որն իր անվիճելի ավանդն ունի համաշխարհային քաղաքակրթության մեջ, գուցե և հանդուրժում է այս ամենը, չգիտեն: Ես տեղեկություն չունեմ այն մասին՝ Իսրայելում գործո՞ւմ են, արդյոք, մորմոնական համայնքներ և եկեղեցիներ: Կարծում եմ, որ հրեա իշխանավորը հագիվ թե այնքան անհեռատես գտնվի, որ իր երկրի ներսում տաքացնի իր ժողովրդի արժանապատվությունը վիրավորող և իր պետական անվտանգությանն սպառնացող «եղեմական օձին»: Բայց դա, վերջին հաշվով, իրենց՝ հրեաների խնդիրն է: Մերը՝ մեր ժողովրդի ազգային արժանապատվության և ազգային անվտանգության խնդիրն է, որը, ցավոք, չեն գիտակցում ո՛չ հայ մտավորականը, ո՛չ քաղաքական գործիչը և ո՛չ իշխանավորը:

Ունենալով միջազգային և ներազգային բազում չլուծված խնդիրներ և դրանք լուծելու համեստ միջոցներ՝ մեծ շռայլություն չէ՞, արդյոք, այն հանցավոր հանդուրժողականությունն այն բանի նկատմամբ (ով էլ այն պարտադրած լինի), որ մեր տան մեջ՝ մեր աչքի առաջ, դավանափոխ են անում մեր գավակներին, վարկաբեկում թե՛ մեզ և թե՛ մյուս ժողովուրդներին: Եվ սա, իմ հաստատ համոզմամբ, սառցալեռան երևացող մասն է միայն: Ուրիշ ի՞նչ նպատակներ են հետապնդում մորմոնները մեր հանրապետության ներսում և ի՞նչ դավադրություններ են նյութում նրանք մեր դեմ, պարտավոր են

գիտենալ (և անկասկած՝ գիտեն) մեր «ազգանվեր» իշխանավորները:

Ահա մի տեղեկություն՝ վերցված «Գոլոս Արմենիի» թերթից: Մոսկվայի քաղաքային արխիվների միավորման պետ Ա. Կիսելևի այն հարցադրմանը, թե որքանո՞վ են օրինական մորմոնների՝ ռուսական արխիվների միկրոֆիլմավորումները, պրոֆեսորներ Մ. Կուզնեցովի և Ս. Պոնկինի եզրակացության մեջ կարդում ենք. «Նախկին ԽՍՀՄ երկրների պետական արխիվներում կատարվում են մեր նախնիների մասին տվյալներ պարունակող հազարավոր պատմական փաստաթղթերի պատճենահանման, միկրոֆիլմավորման մեծածավալ աշխատանքներ: Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Վրաստանի, Հայաստանի արխիվները պատճենահանվում են, և հավաքված տեղեկատվությունն ուղարկվում է ԱՄՆ»:

Խոսքս ավարտեն Լևոն Շանթի՝ այսօրվա համար առավել քան արդիական հետևյալ խրատականով.

«Հայ ժողովուրդը պահելու մասին մտածողը պետք է մտածե հայու թվական, տնտեսական ու մտավորական ուժերու կենտրոնացման մասին. իսկ ասոնք հնարավոր է միայն այն ժամանակ, երբ կապի հայ հոգիին մեջ իր անկախության համոզումը...»:

ԳԳ-ում տարածվող մորմոնական հայերեն գրականության ոչ ամբողջական ցանկը.

1. «Տեղեկագիր. Դիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին», 2001թ.:
2. «Ջոզեֆ Սմիթ մարգարեի վկայությունը», 2000թ.:
3. «Մորմոնի գիրքը», 2002թ.:
4. «Դիմներ և մանկական երգեր», 1999թ.:
5. «Այցելող ուսուցիչների ուղերձ»,

յուրաքանչյուր ամիս՝ մեկ ուղերձ:

5. «Առաջին նախագահության ուղերձ», յուրաքանչյուր ամիս՝ մեկ ուղերձ:

6. «Լիախոնա», (ամսագիր, ռուսերեն):

Գ.Գ. - Անհամար փաստեր կան, որոնք ապացուցում են մորմոնների պորտալարային կապը սիոնիզմի ու հրեության հետ: Մյուս կողմից՝ Իսրայելում հատուկ օրենքով հիմնովին արգելված է հոգեորություն կատարող աղանդների գործունեությունը: Ըստ այդ օրենքի՝ պատժվում են ոչ միայն «միսիոներները», այլև նույնիսկ նրանց լսողները... Ահա՛ ինչ է պետք սովորել Իսրայելից...

Մորմոնները հայկական հողի վրա հայտնվեցին 1988թ. երկրաշարժի աղետից անմիջապես հետո ոմն «բարերար» Հանթսմանի միջոցով: Ի դեպ, չափազանց հետաքրքրական է այն փաստը, որ սույն մորմոնի՝ ԳԳ բոլոր այցելությունների ժամանակ օդանավակայանում նրան դիմավորում են հանրապետության նախագահները՝ ասես մեկ այլ պետության ղեկավարի (իսկ ո՞վ ասաց, որ մորմոնականությունը համաշխարհային պետություն-կայսրություն չէ...): Մեր հավաստի տվյալներով՝ 90-ական թվականների սկզբի մութ ու խավար տարիներին՝ ամբողջ երկու տարի, մորմոնները հատուկ տրամադրված էլեկտրածին (զեներատոր) և այլ սարքերով պատճենել է ԱՄՆ են տարել Հայաստանի պետական արխիվների տոհմաբանական և այլ փաստաթղթերը՝ կաշառելով արխիվային մի շարք աշխատակիցների: Մորմոնների «բարեփրկական» գործունեությունից իրենց մշտական բաժիններն են ունեցել ԳԳ Կառավարությանն առընթեր մարդասիրական

օժանդակության հանձնաժողովի «ազգանվեր» պարոնները...

Մորմոնները հատկապես թափանցել են ՀՀ կրթական համակարգ և իրենց հայանուն դրածոներն ունեն ՀՀ կրթության և գիտության նախարարությունում: Ըստ մեր տեղեկությունների՝ մորմոնները հատկապես թափանցել են ՀՀ



Մորմոնական «եկեղեցին» երևանում՝ Կրթական փողոցում (ուկու շուկայի՝ նախկին բաղնիքի հարևանությամբ)

ԿԳՆ կրթական բարեփոխումների կենտրոն կոչվող կառույցի և «Հանրակրթության պետական կրթակարգ» անվանվող ապագային փաստաթուղթ-նախագիծը մշակող խմբի մեջ: Ըստ բեյրութահայ իրավաբան Գասպար Տերտերյանի՝ մորմոն է նաև ՀՀ ԿԳ փոխնախարար մի տիկին, որը «փայլում է»՝ ՀՀ-ում հայազգի երեխաների ռուսացում-ուժացումը՝ երկլեզվյան կրթություն կոչվող «գիտափորձ»-չարիքը հովանավորելով և նման «ազգանվեր» ու «պետականամետ» գործունեությամբ: Շարքը շատ երկար է, ո՞ր մեկը թվարկենք:

Ամբողջ աշխարհին, ներառյալ՝ ՀՀ-ին, այսքան չարիք պատճառելուց հետո առնվազն պետք է լիրք լինել՝ հայտարարելու համար, թե «մենք պետք է դիմակայենք աշխարհին» (Մորմոնների Առաջին նախագահության նախագահ Գորդոն Բ. Հիմքլիի «Գրոշ ազգերին, լույս աշխարհին» խոսքից, տե՛ս «Առաջին նախագահության ուղեբժ», նոյեմբեր, 2003թ., էջ 2, հայերեն. իհարկե՛ այդ «դրոշմ» ու «լույսը» հենց իրենք են՝ մորմոնները): Մինչդեռ, ճիշտ հակառակը, աշխարհը պետք է դիմակայի մորմոններին ու նրանց նման Վերջին Օրերի Սատանաներին, մանավանդ որ լուրջ հիմքեր կան կասկածելու, որ ՀՀ-ում էլ «սոցիալական քարտ» անվամբ ընթացող մարդկանց համարակալման ու ստրկացման ծրագրի ետևում կանգնածների առաջին շարքում մորմոններն են:

Խմբագրություն

«Արեւիկ»

ՀԱՅԵՐԷՆ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ԴԱՄԱՆԿՈՒԹՅԱՆ

Հայկապահայ խումբ մը նուիրեալներու հեղինակութեամբ եւ «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան Հայկական Բաժնի նախաձեռնությամբ ու ֆինանսաւորմամբ, այս տարուան սկիզբը իրականութիւն դարձաւ «Արեւիկ» հայերէն համակարգչային դասընթացքի առաջին խտասալիկը (CD): Ինչպէս կ'ընէ խտասալիկին ուղեկցող տեղեկաթերթիկին մէջ Հայկական Բաժնի փոխտնօրէն Աստղիկ Չամբերթեանը, այս նախաձեռնութիւնը մաս կը կազմէ «Գ. Կիւլպէնկեան» Հիմնարկութեան Հայկական Բաժնի առաքելութեան, մղուած անոր մտահոգութենէն՝ սփիւռքահայ կրթարանները ուսումնադաստիարակչական տարբեր ձեռնարկներով ապահովելու անհրաժեշտութեամբ:

Դասընթացքն ունի երեք մակարդակ, որոնցմէ իւրաքանչիւրին պիտի յատկացուի մէկական խտասալիկ: Պատրաստութեան մէջ կը գտնուին յաջորդ երկու խտասալիկները:

«Արեւիկ»-ի առաջին խտասալիկը նախատեսուած է հայերէնին դեռ նոր ծանօթացող փոքրիկներուն համար: Անկիւս ոչ միայն փոքրիկին կը ծանոթացնէ հայոց այբուբենը, անոր տառերու տպագիր ու ձեռագիր, գլխագիր ու փոքրագիր տարբերակները, հնչիւնները, այլեւ հայրենասիրական դաստիարակութեան կարեւոր միջոց մըն է, ուր հաշուի են առնուած նաեւ սփիւռքահայ մանուկի գիտակցական մակարդակն ու հոգեբանութիւնը: Այսպէս, օրինակ, «ա» տառի դասին մէջ, փոքրիկը կը ծանօթանայ նաեւ Արարատին, Մեծ ու Փոքր Մասիսներուն: Եւ այս բոլորը կը կատարուին համակարգչի պաստառին վրայ շարժող պատկերներու եւ պաստառին վրայի բառերու ձայնային ուղեկցութեամբ, ինչը ալ աւելի ընկալելի կը դարձնէ նիւթ-դասը փոքրիկին համար: Աւելին՝ իւրաքանչիւր տառի յատկացուած դասի տարբեր վարժութիւնները երեխային կը սորվեցնեն նաեւ մտածել եւ ճիշդ կողմնորոշուիլ: Միայն կատարելու պարագային, կը լսուի «ճիշդ չէ, նորէն փորձէ» նրբանկատ արտայայտութիւնը, իսկ ճիշդ պատասխանի պարագային՝ երախան կ'արժանանայ գովասանքի:



Հեղինակային խումբը դասերը կառուցած է հետեւեալ յաջորդականութեամբ՝ տառերու ծանօթացում, անոնց գրելաձեւերու եւ հնչիւններու ճանաչում, ընթերցում, վարժութիւններ, դասանիւթին ուղղակիօրէն առնչուած տրամաբանական խաղեր:

Դասընթացքի ու նախաձեռնութեան ընդհանուր պատասխանատուն է Օրդ. Աստղիկ Չամբերթեանը, նիւթերու հեղինակն է Այտա Մինասեանը, գլխաւոր խմբագիրը՝ հայկապահայ վաստակաշատ մանկավարժ, դասագիրքերու հեղինակ, պատմաբան եւ բանասէր Յակոբ Չոլաքեանը: Աշխատանքային խումբին մաս կը կազմեն նաեւ համակարգչային բաժնի պատասխանատու Միքայէլ Սարգիսեանը, համակարգչային ծրագրաւորող Ռուբէն Գեորգեանը, նկարիչ եւ շնչաւորող Բենիկ Միշոյեանը, կողքի եւ ներդիրի ձեւաւորող Արտո Չամբարձումեանը, ձայնային խմբագիր Կարո Քեքիլեանը: Չայները կը հնչեցնեն հեղինակ Այտա Մինասեանն ու Նանոր Մինասեանը:

Հիանալի ու շնորհակալ աշխատանք մըն է կատարուածը՝ նուազագոյն թերութիւններով: Այսուհանդերձ, կ'առաջարկենք յաջորդ դասընթացքներու պարագային նկարները աւելի կենդանի ու աշխոյժ դարձնել. օրինակ՝ թռչուններուն թռիչքը պէտք է աւելի մանրի առնոց բնական, անընդհատ թռիչքին:

«Արեւիկ» դասընթացքը կու գայ համալրելու սփիւռքահայ նոր սերունդի հայերէն-նախօսութեան ու հայեցի դաստիարակութեան միւս ձեռնարկումները եւ կարելոր ներդրում մըն է այս ոլորտներուն մէջ:

Ակնդէտ կը սպասենք «Արեւիկ»-ի միւս երկու երեւումները, որոնցմով սփիւռքահայ երախաներու սիրտերն ու միտքերը ալ աւելի պիտի ջերմանան ու հայանան:

«Շրջադարձ»

ՀԱՅԱՍՏԱՆ.


ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց եկեղեցին, որ հիմնադրվել է մ.թ. 301թ., հավատարիմ է եղել Աստծո ուսմունքին և նրա որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Դարեր ի վեր այն եղել է ազգի ոգեկոչման հիմնական աղբյուրը, գոյատևել և վերապրել է բազմաթիվ փորձություններ, ականատես եղել թշնամի ժողովուրդների ասպատակություններին:

Մարդիկ այստեղ ըմբռնել են կյանքի իրական ճշմարտությունը երկրի վրա և երկնային կյանքի հավիտենականությունը՝ համաձայն Քրիստոսի ուսմունքի: Քրիստոնյա աստվածաբանները բարձր են գնահատել Աստվածաշնչի հայերեն թարգմանությունները՝ բնագրին հոգեհարազատ մնալու համար:

Նախքան Հայ եկեղեցու և նրա հոգևորականության վերաբերյալ դատողություններ կատարելը՝ անդրադառնանք մի շարք պատմական դեպքերի, որոնք առնչվում են այսօրվա «Նոր քրիստոնեություն» հասկացության ձևավորմանը:

Աստծո ճշմարիտ համակարգի դեմ ամենայն հետևողականությամբ հանդես է եկել 1748թ. փետրվարի 6-ին Բավարիայի Ինգոլշտադտ քաղաքում ծնված Ադամ Վեյսհաուպտը: Վերջինս հանդգնած էր, որ մարդկային հասարակությունն անդառնալիորեն կորստյան է գնում, և միակ փրկությունն արմատական վերակառուցումն է: Նա այն առաջին ուտոպիստներից էր, ովքեր ունեին աշխարհի ըմբռնման ընդգրկում մտածողու-



թյուն, և անհամբերությամբ սպասում էր այն օրվան, երբ իր խումբը կյանքի կկոչեր «Համաշխարհային նոր համակարգ» («Novus Ordo Seclorum»): Նրա կազմակերպությունը, որը կոչվում էր «Իլլյումինաթի» («Illuminati»), վեց հիմնական նպատակ ուներ՝

1. միապետության և օրինական վարչակարգերի վերացում,
2. մասնավոր սեփականության և ժառանգության իրավունքի վերացում,
3. հայրենասիրության և ազգայնականության վերացում,
4. ընտանիքի և անունության վերացում,
5. հանրակրթական համակարգի կազմակերպում,

6. բոլոր կրոնների վերացում:
Մինչև 1750թ. Ռոբշիլդների բանկային հաստատությունը, ինչպես նաև աշխարհի բազմաթիվ այլ բանկային կարտելներ, սկսել էին աշխարհի համալսարաններում ֆինանսավորել չաստվածության մտածողություն՝ հակադրելով այն իսկական քրիստոնեական մտքի անաղարտությանը: Խոշոր գումարներն օգտագործվում էին՝ աշխարհով մեկ ստեղծելու թեմական դպրոցներ (սեմինարիաներ)՝ երիտասարդ սաներին ներարկելու սոցիալիստական աստվածաբանության գաղափարախոսություն, որը հետագայում անվանվեց «Սոցիալական ավետարան»:

ԱՔՈՖԻԼԴԻ «ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ»

Սայրես Աքոֆիլդը ծնվել է 1843թ. Ամերիկայում, մահացել է 1921թ.: Նա վերլուծել է Ջեյմս Թագսվորի Աստվածաշնչի բնօրինակը: Նրա ջանքերը նպատակաուղղված էին պարտավորություններից ազատվելու գաղափարների տարածմանը: Աքոֆիլդի Աստվածաշնչի (ինչպես այն անվանվեց հետագայում) համար ֆինանսական օժանդակություն է հատկացրել վեց մտավորականներից բաղկացած գաղտնի խումբը Բոստոնից (Մասաչուսեթս): Աքոֆիլդի Աստվածաշունչը տպագրել է Լոնդոնի Օքսֆորդի համալսարանի հրատարակչությունը 1909 թ.: Աստվածաշունչը խեղաթյուրելու նրա ջանքերը հիմք հանդիսացան «հրեա-քրիստոնեություն» արտահայտության հիմնավորման և տարածման համար, թեև բուն Աստվածաշունչում «հրեա-քրիստոնեությունը» ոչ մի տեղ չի հիշատակվում: Աստվածաշունչը վերափոխելու Աքոֆիլդի փորձերը, հետագա փոփոխությունների և շեղումների նպատակով, նրա մահից հետո բացահայտել են Քրիստո-

սին չհավատացող անձինք:
Ավետարանը քննարկման առարկա էր դարձել նաև հասարակամետ հոգևորականության շրջանակներում:
Նրա առավել համարախայտ ներկայացուցիչներից մեկը՝ Վաշինգտոն Գլադդենը (1836-1918), 36 տարի Կոլումբիայի (Օհայո) միաբանության հոգևոր հովիվն էր, «կիրառական քրիստոնեության» առաջնորդներից: «Սոցիալական Ավետարանի» ճանաչված այլ «մարգարեներից» էր «Ռոչեսթեր» համալսարանի և «Ռոչեսթեր աստվածաբանական սեմինարիայի» (երկուսն էլ բապտիստական ինստիտուտներ էին) շրջանավարտ Վոլթեր Ռաուչենբերը: «Քրիստոնեություն և սոցիալական ճգնաժամ» աշխատությունը, որը տպագրվել էր 1907թ., նրան համաժողովրդական ճանաչում բերեց: 1908թ. դեկտեմբերի 2-ին նա և դոկտոր Հարրի Վորդը հիմնադրեցին «Քրիստոսի եկեղեցիների դաշնային խորհուրդը»: Նրանք եկեղեցական սոցիալական շարժման առաջնորդներ էին, շարժում, որը որոշեց հեռանալ քրիստոնեական

անհատականացումից (ինդիվիդուալիզմ) դեպի բացահայտ կոլեկտիվիզմ՝ իրենց համար գործիք դարձնելով եկեղեցին: Սոցիալիզմը նրանց առաջին և միակ մտահոգությունն էր: Բոլոր կեղծ մարգարեների նման, ովքեր դարեր շարունակ ներթափանցել էին քրիստոնեության մեջ, նրանք քողարկվել էին խաբեբայության դիմակներով և երկրի վրա միավորվել «Երկնքի արքայություն» ընդհանուր անվանմամբ: Նրանց «արքայությունը» ներկայանում էր ոչ իբրև հոգևոր հասարակություն, որտեղ տղամարդիկ և կանայք ձևավորվում էին իբրև անհատներ՝ Հիսուս Քրիստոսի՝ Փրկչի հետ հաղորդակցության միջոցով, այլ որպես կոլեկտիվ, սոցիալիստական հասարակություն:
1950-ական թվականների վերջերին, Մեծի Տանն Կիլիկիո աթոռի երիտասարդ միաբան Գարեգին վրդ. Սարգսյանը, ենթադրյալ լավորակ բարձրագույն աստվածաբանական կրթություն ստանալու նպատակով, ուղարկվեց Լոնդոն՝ Օքսֆորդի Աստվածաբանական դպրո-

ցում սովորելու, թեև այդ գիտելիքները նրան կարող էր տալ բազմադարյան Հայ եկեղեցին: Օքսֆորդում գիտական աստիճան ստանալուց հետո ժամանակի ընթացքում նա դարձավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, այնուհետև՝ Ամենայն Հայոց կաթողիկոս: Նա դարձավ «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի» (ԵՀԽ) մեծամուն ղեմաբերից, որը քրիստոնեության մեջ թափանցած մյուս կեղծ մարգարեների նման հորինեց Միասնական համաշխարհային եկեղեցին, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ կեղծ աստվածների դիմակ, որը քրիստոնեությունն ատողներն օգտագործում են դարեր շարունակ:

«Նոր դարաշրջանի» մեր լուսավորյալ հոգևոր գործիչները մոռացել են իրական Աստծո արքայության մասին, որովհետև «աստվածային» գիտելիքները ձեռք են բերել աշխարհի վաշխառուներից հովվապետներին և նրանց ազդեցության տակ գտնվող հաստատություններում: Այդ թունավորված հաստատությունների պատերի ներսում նրանց դասավանդվել է աշխարհիկ կարգի մարդասիրություն և (սոցիալիստական) ազատական աստվածաբանություն: Աշխարհիկ մարդասիրությունը հակասում է Աստծո խոսքին: Հիսուսի խոսքում չեն հիշատակվում մեր աշխարհի փոխհարաբերությունները: Հիսուսը խոսում է Աստծո հետ հոգևոր հաղորդակցման մասին: Քրիստոսը համաշխարհային Մարքս չէր, այլ մարդկության լուսատու:

ԵՀԽ-ի որդեգրած ուղին, դեպի Համաշխարհային կառավարություն, հայ ժողովրդի համար աղետալի է դարձել և տնտեսական, և մշակութային, և կրոնական առումներով: Այսօր Ս. Էջմիածինը սատարում է ՀՀ կառավարությանը՝ սոցիալական ապահովության կողմից ներդրման և անհատական քարտերի համալրագ մտցնելու նպատակով: Դա ողջ ազգաբնակչության վրա վերահսկողություն հաստատելու նպատակով նույնականացման (իդենտիֆիկացիա) համակարգի ձևավորման սկիզբն է: Դա հող է նախապատրաստում աստիճանաբար (համաշխարհային - խմբ.) բռնակալ պետությանը հարկեր վճարելու համար: Աստիճանակարգված հարկեր առաջադրել է նաև Կարլ Մարքսը իր «Կոմունիստական մանիֆեստում»: Սա հրաշալի օրինակ է, որը ցույց է տալիս, թե ինչպես է Հայ առաքելական եկեղեցու բարձրագույն նվիրապետությունը կիրառում սոցիալական ազատականության աստվածաբանական գաղափարը՝ ներգրավվելով այդ կառավարության մեջ: Հայ ազգային և Հայ բողոքական (Հայ Առաքելական և Հայ Ավետարանական - խմբ.) եկեղեցիների ղեկավարները նույնպես թույլատրում են գաղտնի կազմակերպություններին (օրինակ՝ մասոնության - խմբ.) սողոսկել Հայ եկեղեցու մեջ: 2003թ. օգոստոսի 11-ին ԵՀԽ գլխա-

վոր քարտուղար, ռևիզիոնիստ, դոկտոր Քոնրադ Ռայգերը հրավիրվեց մասնակցելու «Էկումենիկ շարժման բարեփոխումները» («Reconfiguring the Ecumenical Movement») թեմայով համաժողովին, որը տեղի ունեցավ Ամբիլիասում (Լիբանան) նոյեմբերի 17-20-ը: Այն վարում էր Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ը՝ դառնալով ԵՀԽ ջատագովներից: Քննարկման ժամանակ հաճախ էր օգտագործվում «հաղթահարվող ինստիտուցիոնալիզմ» արտահայտությունը: Այն նշանակում է Հայ եկեղեցու «հնաճ» հաստատությունների վերացում, իսկ շարժման էկումենիկ (ecumenical) անվանումը նշանակում է տիեզերական, համաշխարհային:

Արդյո՞ք մենք՝ հայերս, ցանկանում ենք, որ Հայ եկեղեցին դառնա համաշխարհային եկեղեցու մի մասնիկը: Եթե այո, ինչո՞ւ այդ դեպքում մեզից հայոց հիմնավորը «անկախ» եկեղեցու 1700-ամյակը:

Պետք է վերջապես ընդունել, որ ԵՀԽ-ն հիմնադրել են հզորագոր (ամհավատ) վաշխառուները՝ ժամանակի ֆինանսա-



կան մագնատները: Արամ Ա կաթողիկոսին պետք է հայտնի լիներ, որ Քրիստոսը չէր ընդունում այլ Աստծո բացի իսկական Աստծուն: Անհնար է, որ քրիստոնյան միանգամից ծառայի երկու կան երեք աստվածների (տերերի): Այսօր մենք տեսնում ենք վերջին հիսուն տարիների մեր եկեղեցու ղեկավարների՝ ԵՀԽ-ի հետ ունեցած փոխհարաբերությունների արդյունքը:

Անհրաժեշտ է հիշել, որ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, երբ բնակվում էր Լոնդոնում, 1942թ. գրել է «Քրիստոնեական մոտեցում կոմունիզմին» աշխատությունը:

Պետրոս առաքյալը երբեք չի հաճախել թեմական դպրոցներ, երբեք աստվածաբան չի եղել, այլ հասարակ ձկնորս ու ականջալուր էր Աստծուն և ս. Հոգուն: Բայց ո՞վ կհամարձակվի կասկածի տակ առնել նրա քարոզը: Ս. Պետրոսը և մյուս աշակերտները, ովքեր երեք տարի աշակերտել են Քրիստոսին՝ Ուսուցչին, արհեստավորներ էին: Եթե մեր հայ աստվածաբանները փորձեն աշխատել ԵՀԽ-ի ղեկավարների նման մարդկանց հետ՝ ձգտելով փոխել նրանց կամ

փորձել նրանց հետ ընդհանուր լեզու գտնել, հավատացած եղեք, նրանց գործելակերպը կնմանվի այն բանին, որ առողջ խնձորը նետես նեխած խնձորներով լի տակառի մեջ և հուսաս, որ երբևէ այդ նեխած խնձորները, առողջի ազդեցությամբ, կապաքինվեն: Հնարավոր չէ դաշինք կնքել չարիքի հետ. դրա հետևանքով շատ մեծ բան ես կորցնում:

Վանեցիների ժառանգորդ Ռուսաս Ջ. Ռշտունին, որն Ամերիկայում մեծապես հարգված քրիստոնյա առաջնորդներից է, այս խնդիրը բնորոշել է այսպես. «Քրիստոնեության թշնամիների նպատակը համաշխարհային նոր համակարգի ստեղծումն է՝ առանց Հիսուս Քրիստոսի: Մարդը համոզված է, որ իր ծրագրավորման և վերահսկողության շնորհիվ կարող է ստեղծել լավ աշխարհակարգ, ավելին, քան արարել է Աստվածային երրորդությունը: Իհարկե, այն, ինչ մարդն է ստեղծում, տիեզերք չէ, այլ չարին ծառայող մի հզոր և դաժան համակարգ»:

Եկեղեցիների համընդհանրացման (գլոբալացման) գաղափարի ընդունմամբ ռևիզիոնիզմն ապազգայնացնում է միայն Հայ եկեղեցին: Այն արագացնում է պատմականորեն անենաազատ, յուրօրինակ և հիմնավոր քրիստոնեական եկեղեցու խարխուլումն ու ոչնչացումը:


Հայ ժողովուրդը պետք է պահանջի իր եկեղեցուց վերադառնալ իր պատմական, ազատ և անկախ կարգավիճակին: Հայ եկեղեցին քրիստոնեության թշնամիներին աստարելու փոխարեն պարտավոր է նպատակաուղղել իր ջանքերը մեր ժողովրդի կրոնական և հոգևոր արժեքների զարգացմանը: Այդ նպատակին հասնելու դեպքում միայն աշխարհը կճանաչի Հայ եկեղեցու և հայ ժողովրդի մեծությունը:

Թույլ տվեք՝ Հայ եկեղեցին վերադառնա իր վաղ քրիստոնեության ականքներին, որը հնարավորություն կտա նրան՝ ստանալ Աստծո օրհնությունը և դրանով իսկ կրկին դառնալու ճշմարիտ քրիստոնյաներ և ջահակիր՝ աշխարհին համակած քառսի մեջ:

Արտավազ Ավագյան
Բոքա Ռեյթոն, Ֆլորիդա
2004թ. փետրվար
ardavast@att.net

Հայ Առաքելական եկեղեցու գլոբալացման դրսևորումներից է նաև ԱՄՆ-ի մի խումբ կրոնավորների համառոտ փորձը՝ հայկական պատարագը կամ նրա մի մասը կատարել... անգլերեն: Ըստ հավաստի տեղեկությունների՝ որոշ վայրերում արդեն այս նորամուծությունը գործում է... Մայր աթոռի ու նրա գահակալի լուռ համաձայնությամբ...

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՐԿՈՒՄ Է...



Ապրիլ ամսվա ընթացքում ՀՀ-ում ներքաղաքական իրադրությունն աստիճանաբար սրվեց, իսկ քաղաքական ուժերն այդպես էլ չկարողացան նստել բանակցությունների սեղանի շուրջ: Հանրահավաքներին մասնակցելու «մեղադրանքով» ձերբակալվեցին մարդիկ, ծեծվեցին ՋԼՄ-ների ներկայացուցիչներ: Սակայն ընդդիմությունը շարունակեց իր բողոքի գործողությունները՝ շարունակելով կազմակերպել հանրահավաքներ:

Իշխող կոալիցիայի կուսակցություններից միայն դաշնակցությունն էր կոչ անում երկխոսություն ծավալել իշխանության և ընդդիմության միջև:

Ապրիլին հանրապետության ներքաղաքական իրադրության հարցը քննարկվեց Եվրախորհրդարանում, որի որոշումը (10 կետից բաղկացած) կոչ է անում ՀՀ քաղաքական ուժերին ստեղծված ճգնաժամից դուրս գալ երկխոսության միջոցով:

Այդպիսին էր ապրիլ ամիսը, ընդհանուր առմամբ, ՀՀ քաղաքական ուժերի և հայ ժողովրդի համար:

Սակայն իրադրությունը հանրապետությունում գնալով սրվում է, քանի որ քաղաքական ուժերն այդպես էլ չկարողացան նստել բանակցությունների սեղանի շուրջ:

Ի՞նչ գործողություններ ձեռնարկեցին իշխանությունները:

Գնահատականը միանշանակ է՝ կոշտ գործողություններ: Հարց է ծագում՝ արդյո՞ք հնարավոր էր կարգավորել քաղաքական իրավիճակը ՀՀ-ում՝ դիմելով կոշտ մեթոդների: Պատասխանը միանշանակ բացասական է:

Ի՞նչ գործողությունների դիմեցին ընդդիմադիր քաղաքական ուժերը:

Ընդդիմության ջանքերի շնորհիվ ՀՀ ներքաղաքական իրավիճակի հարցը քննարկման դրվեց Եվրախորհրդարանում: Այսինքն՝ ընդդիմությունն օգտագործեց իր իրավունքը՝ իրավիճակի հանգուցալուծման սահմանադրական ձևը: Սակայն Եվրախորհրդարանի որոշումը հստակ պատասխան չտվեց բարձրացված հարցերին, այլ ընդամենը հորդորեց ՀՀ բոլոր քաղաքական ուժերին՝ բանակցություններով դուրս գալ ստեղծված իրավիճակից:

Այսպիսով՝ թե՛ իշխանությունների և թե՛ ընդդիմության քաղաքական հնարավորու-

թյունների շրջանակը սահմանափակվեց երկրի սահմաններով:

Ի՞նչ քայլերի են դիմում իշխանությունները՝ իրավիճակը կարգավորելու համար:

Որքան էլ զարմանալի է, իշխանության որոշ ներկայացուցիչներ, գնահատելով ընդդիմության գործողությունները, հիմնական շեշտը դնում են այն փաստի վրա, թե ինչու է ընդդիմությունը դիմել Եվրախորհրդարանին՝ օգտագործելով «ամոթ» և «աղբը տանից դուրս հանել» արտահայտությունները: Հիշեցնում կարգով պետք է ասեն, որ «ամոթ», «մտահոգեցնող», «տխրեցնող» բառերը, ցավոք, քաղաքական կատեգորիաներ չեն, այդ իսկ պատճառով չեն նպաստի քաղաքական իրավիճակի դրական հանգուցալուծմանը:

Իշխանությունների քաղաքական գինացումն շահարկվում է նաև դարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործընթացը: Սակայն այս հարցի քննարկումն էլ ոչինչ չի տա իշխանություններին, որովհետև այս հիմնահարցի կարգավորման գործընթացի հիմնական մասնակիցը ժողովուրդն է:

Ստեղծված քաղաքական իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ իշխանությունները չեն հրաժարվելու իրենց որդեգրած կոշտ քաղաքականությունից, ընդդիմության գործողությունները ճնշելու մտադրություններից: Սակայն շատ հնարավոր է, որ իշխող կոալիցիայի քաղաքական կուսակցությունները դիմեն նաև հանրահավաքային մեթոդների, ինչպես վարվեցին անցյալ տարվա ընտրություններից առաջ, որը, սակայն, կհանգեցնի իրավիճակի էլ ավելի սրմանը և բարդացմանը: Իշխանական հանրահավաքները կնպաստեն միայն հասարակության առձակատմանը, և քաղաքացիական բախումները կդառնան անխուսափելի... Իսկ քաղաքացիական պատերազմը վկայում է իշխանության թուլացման մասին:

Մեր խորին համոզմամբ՝ ՀՀ իշխանությունները պետք է փոխեն իրենց գործելաոճը և կոշտ քաղաքականությունից անցնեն ժողովրդավարական մեթոդների:

Իմ կարծիքով՝ տեղին կլինի, որ երկրի նախագահը ցրի խորհրդարանը, իսկ ժողովուրդը, օգտագործելով ընտրությունների ժողովրդավարական իր իրավունքը, ընտրի իր իշխանությունը:

Իսկ ի՞նչ է կատարվում այժմ ընդդիմադիր դաշտում:

Ընդդիմությունը շարունակում է իր հանրահավաքային քաղաքականությունը, քանզի իր գինանոցում ոչ մի այլ մեթոդ չկա: Ընդդիմությունը վերջին մեկ տարվա ընթացքում համոզվեց, որ, փոքրամասնություն կազմելով Ազգային ժողովում, չի կարող օգտագործել այն՝ իր քաղաքական նպատակներն իրագործելու համար: Բանակցությունների սեղանի շուրջ նստելու իշխող կոալիցիայի կուսակցությունների կոչերին ընդդիմությունը «լուրջ» չի վերաբերվում, որովհետև վստահ է, որ այդ կուսակցություններն ի գործու չեն ազդելու բարձրացված հարցերին լուծում տալու գործընթացի վրա:

Կարելի է ասել, որ ընդդիմությունը շարունակելու է իր հանրահավաքային գործունեությունը:

ՀՀ-ում կա՞, արդյոք, քաղաքական երրորդ՝ ազդեցիկ ուժ:

Ոչ խորհրդարանական կուսակցություններից մի քանիսի ելույթներից երևում է, որ ոչ մի «երրորդ» ուժ չկա և ստեղծված պայմաններում չի էլ կարող ձևավորվել:

Ավելին՝ այս շրջանակներում ևս տեղի են ունենում, այսպես կոչված, կողմնորոշումների գործընթացներ: Այսինքն՝ կան կուսակցություններ, որոնք դրական գնահատական են տալիս իշխանությունների՝ ապրիլի 12-13-ի գործողություններին՝ դրանով իսկ սատարելով իրագործված կոշտ քաղաքականությունը:

Կան նաև քաղաքական կուսակցություններ, որոնք միացան ընդդիմությանը:

ՀՀ-ում գործում են նաև մի մեծ խումբ արտախորհրդարանական քաղաքական կուսակցություններ, որոնք հստակ կարծիք չունեն: Դատելով վերջիններիս տեսակետներից՝ նրանք դեմ են կոշտ քաղաքականությանը, բայց կողմ են իրավիճակի խաղաղ կարգավորմանը: Նաև այս կուսակցությունների շահերից է բխում Աժ-ի լուծարումը և նոր ընտրություններ կազմակերպելու անհրաժեշտությունը:

Այսպիսով՝ ապրիլը կարելի է համարել այս տարվա առաջին ամենաբուռն ամիսը: Ամսվա «մեխը», անշուշտ, ստեղծված քաղաքական լուրջ ճգնաժամն է, որի լուծումը ենթադրում է սբափ և հիմնարար քաղաքական քայլեր՝ երկրում գործող բոլոր քաղաքական ուժերի ջանքերով:

Արշակունի

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ - ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ՝ ԽՈՒԼԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

- երկու խուլ գրուցում են.
- **Բաղնի՞ք ես գնում:**
- Ոչ, բաղնիք են գնում:
- **Ես էլ կարծեցի՞ բաղնիք ես գնում:**
- Իսկ ո՞ր են գնում մերոնք՝ մեր իշխանությունն ու ընդդիմությունը:
- Պարզվում է, երկուսն էլ բաղնիք են գնում, բայց իրար չեն հասկանում:
- **Մեզ պետք է օրենքի գերիշխանություն:**
- Ոչ, մեզ օրենքի գերիշխանություն է պետք:
- **Լրատվական միջոցները պետք է անկախ լինեն:**
- Ոչ, մեզ անկախ լրատվություն է պետք:
- **Մեզ պետք է ուժեղ բանակ:**

- Ոչ, մեզ ուժեղ բանակ է պետք:

Սուր է պայքարը՝ թերթերի փակում, տպարանների ավերում, ֆինանսական պատժամիջոցներ, մարդկային զոհեր:

Ընդդիմությունն իբր ծրագիր ունի, այն իրականացնելու ծրագիր չունի, իշխանությունը լծակներ ունի, իբր ծրագիր չունի: Լծակն ու ծրագիրը չեն միավորվում, ու մոլեգնում է պայքարը:

Ողորմի Ջոնաթան Սվիֆտին: Նրա Գուլիվերն ընկնում է մի կղզի, ուր երկու կուսակցություններ՝ Սուրճարյականներն ու Բութճարյականները, հակառակ գաղափարներ են դավանում: Մեկը կարծում էր, որ ծուն պետք է ջարդել սուր ծայրից, մյուսի կարծիքով ավելի հարմար է այն ջարդել բութ ծայրից: Եվ հարյուրավոր տարիներ սերնդե սերունդ արյունահեղ պայքար են մղում...

Մավր Դանիելյան



Մավր Դանիելյան

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿ ԿԱՌՈՒՑԵՆՔ

Լ Ր Ա Ց Ա Վ
« Փ Խ Ր Ո Ւ Ն »

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՏԱՍԸ ՏԱՐԻՆ: Տասը տարի միջազգային ատյաններում ջուր են ծեծում Արցախի հարցի շուրջ, իսկ արդյունքը չի երևում: Բայց Արցախի հարցը վճռվում է Արցախում: Այն վճռվում է ավերածությունների վերականգնմամբ, գյուղերի շենացմամբ, արտագաղթի կանխմամբ, ինքնապաշտպանության ամրապնդմամբ: Այս ամենն իրականացվում է վերջնական հաղթանակի նկատմամբ հույս ու հավատով՝ առաջնորդվելով մեղեհյան պատգամով՝ «**Հաղթելու համար նախ պետք է հաղթանակը կառուցես քո հոգում**»: Բայց հայտնվել են հոռետեսներ, այսպես անվանենք՝ «ղեղին» ընդդիմադիրներ, ովքեր, քաղաքական նպատակներով շահարկելով առկա բազում դժվարությունները, իրականությունը միանշանակ սև գույներով նենգափոխելով, փորձում են հայության հոգում պարտություն կառուցել, խանգարում, որ կռիվ մղածները, լացուկոծ թոթափածները չհավատան իրենց հաղթանակին:

ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ և՛ ՀՀ-ում, և՛ Արցախում լույս է որոնում թունելի ծայրում և նշմարելով այն՝ հույսերով է համակվում: Իսկ ի՞նչ են նրան մատուցում հոռետեսները: Հեռուստատեսությամբ ցույց են տալիս կառուցված ու կառուցվող բնակելի տներ, ասում են՝ սուտ է, ավերակներ են ցույց տալիս, ասում են՝ ճիշտ է, շարք մտած զործարան են ցույց տալիս, ասում են՝ սուտ է, մուրացկան են ցույց տալիս, ասում են՝ ճիշտ է, հայության միավորելուն ուղղված համաժողովներ են ցույց տալիս, ասում են՝ սուտ է, սփյուռքահայության ներդրումներով կառուցված դպրոցներ ու մանկապարտեզներ են ցույց տալիս, ասում են՝ սուտ է... Տեսնում ու լսում են այն, ինչ ուզում են տեսնել ու լսել. որքան՝ վատ, այնքան՝ լավ՝ քաղաքական շահարկումների համար:

Ես նվիրյալ իշխանամետ չեմ, ոչ էլ ռիսերիմ ընդդիմադիր: Արցախի այսօրվա կյանքին նայենք ո՛չ սև և ո՛չ էլ վարդագույն ակնոցով, սևը սև տեսնենք, սպիտակը՝ սպիտակ, ոչ ավելացնենք, ոչ պակասեցնենք:

ՂԱՐԱԲԱՂԸ՝ ՀՈՌԵՏԵՍՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԻ ԹԻՐԱԽԸ: «Դեղին» ընդդիմադիրներ-


րի և նրանց խուսափող «անկախ» կոչված լրատվամիջոցների հոռետեսական քարոզչության ոլորտում է նաև Ղարաբաղի հարցը: Շարժման սկզբից առ այսօր Ղարաբաղը չտեսած մարդիկ կուրծք են ծեծում Ղարաբաղի համար: Կուրծք են ծեծում, զոչում միասնություն ու... պառակտվում, և ներքին հակասությունները ներսում լուծելու փոխարեն դիմում օտարներին, որոնք երբևէ հայության հարցերը հայության օգտին չեն վճռել: Հիշենք պատմության դասերը, երբ պառակտված հայ իշխանավորները, ներքին հարցերը լուծելու համար, մեկնում էին Հոմ կամ Տիգրան, որտեղ հենց «բանակցությունների սեղանի» շուրջ գլխատում էին հայ թագավորին ու սպարապետին, և թե ինչպես էին նման հայ իշխանների

Բաքվի, Գանձակի սպանդները: Հիմա էլ դրանց փոխարինել է Ստրասբուրգը: Եվս մեկ նահանջ կատարենք: Ինչպե՞ս եղավ, որ Ղարաբաղը հայտնվեց Ադրբեջանի կազմում: 1920-ական թվականներին Ադրբեջանի մուսավաթականներն ու բոլշևիկները միացել և նույն մեխին էին խփում, իսկ մեր ազգային կուսակցություններն ու հայ բոլշևիկներն՝ իրար: Հետևանքը Ղարաբաղի ու Նախիջևանի կորուստն էր: Մեր Շարժման առաջին տարիներին համախմբվեցինք ու հաղթեցինք: Այժմ, երբ օրակարգում դարձյալ Ղարաբաղի ճակատագիրն է, նորից պառակտվում ենք (Ստրասբուրգում դա մեծ հրճվանք պարզեց Ադրբեջանի և Թուրքիայի պատվիրակներին): Պառակտվելն իր հերթին: Մեր հոռետեսները, անտես-



արարքներն անեծքով հիշատակում հայ պատմաբանները: Հիշենք, որ դարեր հետո նման հարցեր լուծելու համար դիմում էինք Կրեմլին կամ բողոքագրեր առաքում Լեոնինի դամբարանին. արդյունքում մերոնց մատնությամբ մերոնց Սիբիր էին քշում: Ինչպես էին Ղարաբաղի հիմնահարցն արդար լուծելու համար հանրահավաքներում գոչում «Լեոնին, պարտիա, Գորբաչով», որի արդյունքը եղան Սոււմգայիթի,

լով թիչ թե շատ ձեռքբերումները, ամեն ինչ սևացնում են, ազդարարում, որ ժամանակն աշխատում է ի վնաս Հայաստանի, կռահում են մեր պարտությունը, հուսախաբ անում Արցախի, Հայաստանի և սփյուռքի հայությանը: Նման «զաղափարներով» լի ու լի հագեցած ուղեղներում չի ծագում այն միտքը, որ Ղարաբաղի իրենց երևակայած «պարտությունը» ոչ թե մեկ իշխանավորի կամ ամբողջ իշխանության պարտու-



թյունը կլինի, այլ ողջ հայ ժողովրդի. ժողովուրդ, որի մասը լինելու պատիվն ունեն նաև իրենք՝ հոռետեսները կամ «ղեղին» ընդդիմադիրները:

ԻՄ ՊԱՅՔԱՐԻ ԹԻՐԱԽԸ հուսալքության և հուսախաբության համաճարակն է: Այն ստվերի պես ուղեկցել է մեզ դարեր ու դարեր և ճակատագրական պահերին նույնիսկ հասել «հաղթանակի»: Այդ համաճարակը վերստին փորձեցին սերմանել 1990-ական թվականների սկզբներին: Մեր վերին իշխանության «առաքյալը» Բաքվից վերադարձավ ու փառաբանեց Ադրբեջանի «հզորությունն ու հարստությունը»՝ դրան հակադրելով Հայաստանի «խեղճությունն ու թուլությունը», և հանգեց այն մտքին, որ ապարդյուն է պայքարել Ղարաբաղի համար: Բայց մեր Շարժումն իր հոգում հաղթանակ էր կառուցել և հաղթեց: Կույր չլինե՞նք ու տեսնե՞նք, որ հիմա մեր վիճակն ավելի վատ չէ, քան այն ժամանակ, երբ հաղթեցինք: Բայց հոռետեսության ուրվականն այժմ էլ ուղեկցում է մեզ: Ասում են, գրում, որ եթե երկու տարի հետո շահագործման հանձնվի «Բաքու-Ջեյհան» նավթատարը, Ադրբեջանը միլիարդավոր դոլարներ կստանա, ավելի կհարստանա և կուժեղանա, եթե Վրաստանն իր տարածքով անցնող նավթատարի շնորհիվ տարեկան 800 միլիոն դոլար ստանա, էլ ավելի կհարստանա և կուժեղանա, եթե ԱՄՆ-ը զենք ու զորք մատակարարի Ադրբեջանին ու Վրաստանին, եթե Ռուսաստանը երես թեքի Հայաստանից, եթե... եթե... Ու «եթե»-ների վրա կառուցում են մի ամբողջ հոռետեսություն, եթեր սփռում ու տպագրում: Եվ հավատացողը քիչ է մնում փախչի (ու նաև փախչում է) ՀՀ-ից և Արցախից: Էլ ո՞ր մնաց տարագիրներին հուսադրելն ու վերադարձնելը: Իսկ սփյուռքի մեր որոշ մտավորական-

ներ մնան նենգափոխումները տպագրում են իրենց մամուլում, ի դերև հանում Հայրենիքի նկատմամբ սփյուռքահայության փայփայած հույսերը...

ՀՈՌԵՏԵՍՆԵՐԸ, շահարկելով առկա դժվարությունները, ներսում ու դրսում տարածում, թշնամու ականջին են հասցնում, իբր թե Ղարաբաղը դատարկվել է, իբր թե այստեղ ծնվողներ ու վերադարձողներ չկան, որ այնտեղ միայն մեռնում են կամ այնտեղից մեկնում, որ դպրոցները փակվում են... Ո՞ւմ շահերին է ծառայում մնան բամբասանքների սերմանումը: Շահարկելու իրական փաստե՞ր են ուզում, խնդրե՞մ, մատուցե՞մ: Պատերազմի ժամանակ Ղարաբաղում թշնամին զավթել է մի քանի տասնյակ գյուղ, շատերը հիմնահատակ կործանել, ավերել 11760 տուն, 50 դպրոց, 29 նախադպրոցական հիմնարկ, հրի մատնել 59 գրադարան, գրավել կամ շարքից հանել տասնյակ հազարավոր հեկտար խաղողի ու պտղատու այգիներ, թալանել գյուղտեսիկան, անասունները: Էլի՞ թվարկե՞մ: Ծանոթանալով այս թվերին՝ հոռետեսություն սերմանողների գրիչները կըխըրտան: Այս ամենի հետևանքով առաջացած դժվարությունները ճիսացրած ներկայացնելուց հետո թող չմոռանան մեզ նաև, որ Ղարաբաղին ՀՀ-ի և սփյուռքի իր հայրենակիցների աջակցությամբ ու սեփական ուժերով մաքառելով, վերաշինում է իր տունը, ցանում է, հնձում ու պաշտպանում է իր սահմանները:

Միայն 1993-94թթ. վերականգնվել է շուրջ 1300 տուն, որի շնորհիվ միայն հաղթանակի առաջին տարում վերադարձել են 39000 բռնազաղթվածներ: Վերականգնվել են մի քանի տասնյակ դպրոցական ու նախադպրոցական շենքեր, կառուցվել ու կառուցվում են նորերը: «Ղեղին» ընդդիմությունն իր

լրատվամիջոցներում Արցախի բնակչության թիվը ներկայացնում է 50-60 հազար այն դեպքում, երբ միայն Ստեփանակերտ քաղաքն ունի շուրջ 60 հազար բնակիչ: Հոռետեսները միայն մեկնողներին ու մեռնողներին են տեսնում, չեն ուզում իմանալ, որ ծնվողների ու վերադարձողների թվերը կրկնակի գերազանցում են մեկնողների ու մեռնողների թվերին, որի շնորհիվ Արցախի բնակչությունը տարեկան ավելանում է երկու-երեք հազարով:

ՄՓՅՈՒՌՔԱՅԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՑԱԽԻՆ: Երկու թշնամի՝ մեկը՝ ՀՀ-ի և Արցախի ընդդիմադիր կոչված հոռետեսները՝ եղածը նսեմացնող, հուսախաբանող, մյուս թշնամին պետական սահմանից այն կողմ՝ եղածն ուռճացնող, խաթարող ու խափանող: Ադրբեջանի լրատվամիջոցները վերջերս տպագրեցին ու եթեր սփռեցին, որ Ղարաբաղում արձանագրվել է տնտեսության քառասուն տոկոս աճ, որպիսին չկա աշխարհի գրեթե ոչ մի երկրում: Պատճառը նրանք համարում են սփյուռքահայերի ներդրումները: Իրանահայ գործարարներն իրենց հասցեին ուղղված մեղադրանքներին պատասխանել են, որ Արցախում ներդրումներ կատարելն իրենց համար ձեռնտու է: Նույն լրատվամիջոցները հայտնում են նաև, որ մնան ներդրումները կանխելու համար որոշել են բողոքի ցույցեր կազմակերպել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իրանի, Շվեյցարիայի և հարուստ սփյուռքահայ գաղթօջախներ ունեցող մյուս երկրների դեսպանատների մոտ, որոնց հայ քաղաքացիները ներդրումներ են կատարում այդ «չճանաչված հանրապետությունում»:

Մի կողմ թողնե՞ք ներքին հոռետեսների և արտաքին թշնամու ծայրահեղությունները և ներկայացնե՞ք իրականությունը:



իրոք, Արցախը դադարել է ռիսկի գոտի լինելուց, որի շնորհիվ այնտեղ ներդրումներ են կատարում և՛ առանձին գործարարներ, և՛ խոշոր ֆիրմաներ՝ ՀՀ-ից ու սփյուռքից: 2002թ. մայիսին Ասկերանի շրջանում շահագործման հանձնվեց իրանահայ մի խումբ ձեռնարկատերերի հիմնադրած «ԱԱ-ՍՈՒՆ» ՓԲԸ պոլիէթիլային խողովակների արտադրամասը, որը հեռանկարներ է բացում ոռոգման համակարգի զարգացման համար: Եվ այժմ նույն իրանահայերը, գերմանացի և սիրիացի գործընկերների հետ, նոր ձեռնարկություն են կազմակերպում Շուշիում: Խոշոր ծրագրերից պետք է նշել լիբանանյան ներդրումները (10 միլիոն դոլար), որոնք ուղղված են հեռախոսային կապի զարգացմանը: «Բազե մետալս» ընկերությունը Դրմբոն գյուղի տարածքում գտնվող ոսկու և պղնձի հանքերի հիմքի վրա կառուցել է հանքահարստացուցիչ ֆաբրիկա, որը տալիս է ԼՂՀ արդյունաբերական արտադրանքի 9,3 տոկոսը: Այստեղ շարունակում են շարք մտնել ստորգետնյա և վերգետնյա կառույցները, դրանց թվում՝



հինգ մասնաշենքից բաղկացած հանքահարստացուցիչ ֆաբրիկան: Հանքահամալիրն ունի 600 աշխատող, հիմնականում՝ տեղացիներ, որոնց ամսական միջին աշխատավարձը 180 դոլարին համարժեք դրամ է: ԼՂՀ սեփականաշնորհման ծրագրի շրջանակներում Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատը ձեռք է բերել «Սիրկապ-Արմենիա» ընկերությունը, որի ներդրումների շնորհիվ համախառն արտադրանքի ծավալն ամիսը վեց-յոթ միլիոն դրամից հասցվել է տասնյոթ միլիոնի: Շվեյցարական «Ֆրանկ Սյուլլեր» ֆիրման ավարտում է «Ղարաբաղ» հյուրանոցի շինարարությունը: Ընդհանուր առմամբ Շուշիում և Ստեփանակերտում կառուցվել է երեք հյուրանոց, իսկ ևս երեքի շինարարությունն ընթացքի մեջ է: Նման օրինակները կարելի է շարունակել, սակայն դրանց ավելացնենք միայն մեկը:

«ԱՐՏԱԽԻ ՈՂՆԱՇՄԱՐԸ»: Խորհրդային տարիներին Արցախի շրջաններն իրար կապող ճանապարհները կառուցվել էին այնպես, որ դրանք անցնում էին աղբբեջանաբնակ տարածքով: Ներկայումս կառուցվող «Հյուսիս-հարավ» մայրուղին, որն ստացել է «Արցախի ողնաշար» անվանումը, կծղվի Հադրութից մինչև Մարտակերտ՝ 170 կմ և կանցնի զուտ հայաբնակ տարածքներով: Ճանապարհի շինարարությունը,

որին, կարելի է ասել, մասնակցում է ամբողջ աշխարհի հայությունը, սկսվել է 1999 թվականից՝ «Գորիս-Ստեփանակերտ» մայրուղու ավարտից հետո: «Հայաստան» համահայկական հիմնադրամի կոչով իրականացվել է դրամահավաք «մարաթոնը», որտեղ իր բաժինն էր ներդնում ողջ հայությունը, իսկ Հայաստանի և Արցախի աշակերտները մուծում էին իրենց նախաճաշի դրամները: Արդեն ավարտված է 44 կիլոմետրը: Յուրաքանչյուր մետրի համար ծախսվել է 150 դոլար: Ո՞ւմ միջոցներով և որքա՞ն է կառուցվել. Լուիզ Սիմոն-Մանուկյան՝ 5 կմ, Ջերալդ Կա-

ֆեսյան՝ 3 կմ, Հրայր Հովնանյան՝ 2 կմ, Ալբերտ Բոյաջյան՝ 2 կմ, Անդրանիկ Բերբերյան՝ 1 կմ, «Լինսի» հիմնադրամ՝ 6 կմ, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի Արևմտյան ասիի հայ համայնքները՝ 10 կմ., իսկ Շեխեր գյուղի կամուրջը կառուցվել է ԱՄՆ-ի Արևելյան ասիի հայերի միջոցներով: Մայրուղու՝ ընթացքի մեջ գտնվող երեք հատվածների շինարարության համար, դարձյալ հովանավորների միջոցներով, նախատեսված է տասնմեկ միլիոն դոլար, որից այս տարվա հունվարի դրությամբ խոստացված գումարից արդեն ստացվել է 2,8 միլիոնը:

Հայությունն այսպես միավորվում է՝ համազգային հարցերը լուծելու համար, ի չիք դարձնում «դեղին» ընդհիմադիրների՝ հայությանը հատվածների բաժանելու ճիգերը, հուսախաբության սերմանումը և այն բարբառանքները, թե իբր Ղարաբաղում 50-60 հազար բնակիչ է մնացել, որ այնտեղ ծնվողներ ու վերադարձողներ չկան, որ միայն մեռնում կամ մեկնում են...

ԱՎԵՐՎԱԾ ՇՈՒՇԻՆ վերականգնելուն, վերաբնակեցնելուն, դեռևս 1992թ. մայիսից՝ քաղաքի ազատագրումից հետո, տեղացիներից բացի ձեռնամուխ են եղել նաև մի շարք հասարակական բարեգործական կազմակերպություններ, ընկերություններ, անհատ գործարարներ և՛ Հայաստանից, և՛ սփյուռքից:

Նրանց ներդրած միջոցներով վերանորոգվել կամ կառուցվել են դպրոցների ու մանկապարտեզների շենքեր, մշակույթի օջախներ, հյուրանոց, եկեղեցի՝ քաղաքում և շրջանի գյուղերում: Ցավոտ հարցե՞ր... Մի քաղաքում, որը միայն 20-րդ դարի առաջին տասնամյակներին մեծ ողբերգություններ է ապրել, յոթանասուն տարում ազգային խտրականություն ու ճնշումներ, վերջին պատերազմի ժամանակ՝ դարձյալ ավերում, վերջին հայի արտաքսում, հիմա էլ կիսատ-պռատ վերաբնակեցում, հազար ու մի հոգսեր: Որքան առատ նյութեր կարող են հայտնաբերել հռեռեսուները: Բայց այսօր, ցավոտ հարցերը բացահայտելուց բացի, լավը տեսնել և հուսադրել է պետք: **Շուշիի հայեցի կերպարի վերականգնումը և՛ Հայրենիքի, և՛ սփյուռքի հայության սրբազան պարտքն է:**

ԵՐԿՈՒ ԳԱՐԻ ԱՐԱՆՔՈՒՄ՝ Հայաստանում անկախության հաստատում, Ղարաբաղում՝ ինքնորոշման հաղթանակ, նաև երկրաշարժի ու պատերազմի զոհեր, ավերածությունների զոհեր ու բռնազաղթի հետևանքով հարյուր հազարավոր անտուն մարդիկ, յոթանասուն տարվա ձեռքբերումների փոշիացում, գործազրկություն և արտագաղթ: Որքանո՞վ է բարոյական քաղաքական նպատակներով խաղարկել ու շահարկել այս աղետների հետևանքները: Այո, թող լինի առողջ, բայց ոչ «դեղին» ընդդիմություն, թող բացահայտեն սոցիալական անարդարությունները, կաշառակերությունը, իշխանավորների չարաշահումները քննադատվեն կառուցողական, այլ ոչ թե քանդողական դիրքերից, ոչ թե իշխանամոլության, այլ հայրենաշինության տենչանքով: Նախքան վերջ կունենա «անցումային» կոչված այս մղձավանջը, ու մեր երկիրը կգտնի իր հաստատուն ճամփան, չնվորվենք տիղմաշատ հորձանուտում, չտարուբերվենք ներքևից, վերևից ու դրսերից փչող քամիներից, հռեռեսուության, հուսախաբության համաճարակ չսերմանենք Հայրենիքում ու սփյուռքում, ջուր չլցնենք թշնամու ջրաղացին, **համախմբվենք ՄեՆՔ ՄԵՐ շուրջը և ամուր կանգնենք մեր հողի վրա:** Եթե սև ակնոցով չնայենք, այսօր մարդկանց հուսադրելու շատ բան կարող ենք գտնել և՛ ՀՀ-ում, և՛ Արցախում: Ժամանակն է՝ նոր թափով գործողության մեջ դնել նժդեհյան պատգամները՝ **«Լինել ուժեղ, ավելի ուժեղ, էլ ավելի ուժեղ»**, և ապա՝ **«Հաղթելու համար նախ պետք է հաղթանակը կառուցես քո հոգում»:**

ՔՈՉԱՐՅԱԼՆԸ ՊԵՏՔ Է ՀԵՌԱՆԱ

Սիլվա Կապուտիկյանի մամակ-հայտարարությունը

Ես այնքան էլ համամիտ չեի ընդդիմության հանրահավաքային առճակատումներին՝ Ռոբերտ Քոչարյանի հրաժարականի պահանջով:

Գիտեի, որ հազար ձեռքերով կառչած նախագահական քառոռին, հազար ու մի թույլատրելի և անթույլատրելի լծակներ գործի դնելով նախագահ մնացած անձը՝ սոսկ ժողովրդի պահանջով հրաժարական տվողը չէ:



Արժանապատվություն ունեցող մարդը 1999 թվականի հոկտեմբերի 27-ին հաջորդող առավոտին իսկ պետք է հրաժարակալան տար՝ իրեն պատասխանատու զգալով իր ղեկավարության օրոք

կատարված այդպիսի եղեռնագործության համար: Ուստի եղավ այն, ինչ էս մտածում էի, և ինչ տարիներ առաջ ասել էր Պարույր Սևակը՝

Պատը նորից կմնա պատ, Կպակասի մի լավ ճակատ...

Ուր էր թե պատը մնար նույնը: Ապրիլի 12-ի գիշերը պատը պատվեց փշալարերով, ողողվեց կեղտաջրերով, բռնություններից խուճապահար մարդկանց անեծք-աղաղակներով, մահակավորվեց՝ անխնա հարվածներ տեղալով խաղաղ ցուցարարների վրա: Պատը բարձրացավ, իրական պատ ու պատնեշ դարձավ իշխանության ու ժողովրդի միջև, դարձավ վերջնականապես, անվերադարձ... Հին մի ասացվածք կա՝ արմատավորված դարերով թուրքական լծի տակ խեղճացած հայության ցավագին մտածողությունում. «Այն ձեռքը, որ չես կարող կտրել, պետք է համբուրես, դնես գլխիդ վրա»: Այս օրերին ավելի համոզվեցիք, որ «այդ ձեռքը» հիմակ ու հիմակ չենք կարող կտրել: Բայց և չենք էլ համբուրի: Թող միջազգային դրամատներում մեր անկախությունը գրավ դնող, Հայաստանից հայակործան արտագաղթը լռելյայն օրհնող, չարքաշ ու աշխատազուրկ ժողովրդին ամեն կողմով ճնշող, շնչահեղձ անող, հայկական գիրքն ու դպրոցը, երգն ու շունչը, ավանդական առաքինությունները հոգիներից դուրս վանող այդ մեղավոր ձեռքը համբուրեն, գլխի վրա դնեն հարյուրամյա և հարյուրամյա կուսակցությունների տիրահաճ պարագլուխները, մեծ ու մանր իշխանավորները, որդիների կարիերային հետամուտ անցյալ ու ներկա երեսպաշտ պաշտոնյաները, տերերի բարյացակամությունը մուրացող՝ մշակույթի ծեր ու երիտասարդ գործիչները: Իսկ մենք՝ մեր ազգի պատիվն ու ապագան ամեն ինչից բարձր դասող բողոքավորներս, կշարունակենք այսուհետև ավելի եռանդագին մերժել այդ ձեռքը՝ ամեն մեկն իր ձևով, իր ուժերի սահմաններում: Ես, 1999 թվականին, ծննդյանս 80-ամյակի առթիվ այդ ձեռքից ստացել եմ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշան: Հետագա տարիներին Ռոբերտ Քոչարյանի ամեն մի ազգավրնաս քայլի ժամանակ, ցանկացել եմ ետ վերադարձնել այդ շքանշանը: Ապրիլի 12-ի ողբերգական գիշերից հետո այլևս երկմտելու տեղ չի մնացել: Ուստի էս խորին ցավով և սուրբ

Մեսրոպի հանդեպ ամենդ-մեղավորի անորսալի զգացողությամբ ետ եմ վերադարձնում ստացածս շքանշանը՝ իմ այս քայլը համարելով հայ մտավորականի ցասման և բողոքի արտահայտություն ստեղծված արգահատելի կացության դեմ:



Վերջում ուզում եմ ասել հետևյալը: Հայաստանում, Արցախում, Սփյուռքում ապրող ամեն մի հայ գիտակցում է, որ օր օրի ատամները սրող թշնամուն հիմնավորապես դիմակայելու համար այս պահին առավել է կարևոր երկրի իրավիճակի կայունությունը, պետության ամրությունը: Սակայն զենքով ու բռնություններով ձեռք բերված կայունությունը երևութական է, հղի՝ վատթարագույն հետևանքներով: Չի կարող իրական կայունություն լինել մի երկրում, որտեղ կա այսպիսի անջրպետ պետության ղեկավարի և ժողովրդի միջև, կուշտուկուռ դույակների ու կիսաքաղց հյուղակների միջև, որտեղ տիրում է փոխադարձ ատելության մթնոլորտ, որտեղ Քոչարյանի վարած հաշվեհաշիտ, հուսալի հենարան ստեղծելու նպատակով ամեն մի փոքր ու մեծ պաշտոնավայրում համերկրացի գլխավոր ունենալու անհեռատես քաղաքականության հետևանքով երկատվել, մաս-մաս է եղել հայաստանցիների (ճիշտը՝ ՀՀ-աբնակ հայերի - խմբ.) ու արցախցիների միասնական ոգին, որի առջև ընկրկեց բազմապատիկ զինված թշնամին, և որի շնորհիվ նվաճվեց անառիկ Շուշին: Պարոն Քոչարյանը, եթե իսկապես մտահոգ է մեր Հայրենիքի ճակատագրով, եթե ուզում է, որ վերականգնվի մեր ժողովրդի երկու հատվածների 88 թվականին հրաշքներ գործող միասնականության ոգին, պետք է հեռանա քաղաքական ասպարեզից: Ուրիշ ելք չկա:

**Սիլվա Կապուտիկյան
14 ապրիլի, 2004թ., Երևան**

Հ.Գ. - Մեկնաբանելով Ս. Կապուտիկյանի՝ իրենից ստացած շքանշանը վերադարձնելու որոշումը, Ռ. Քոչարյանը մեծահոգաբար «ավելի կոշտ» խոսքեր չասեց իր ողջության ամենամեծ շքանշանը՝ **անմահությունը** նվաճած բանաստեղծուհուն և իսկական մտավորականին: Ի դեպ, ՀՀ նախագահը վերջերս խոստովանել է, որ ինքը շախմատի և գիրք ընթերցելու «պարաս պախտի խաղալիքներով» չի զբաղվում, ինչը ոչ միայն վիրավորական արտահայտություն է, այլև ծանր հայհոյանք հայոց այբուբենի հնարիչ և Առաջին ուսուցիչ սուրբ Մեսրոպ Մաշտոցի հիշատակին: Երևի սա՛ նկատի ունեի Ս. Կապուտիկյանը, երբ «**Իրավունք**» թերթին տված իր հարցազրույցում (թիվ 32, 27-29 ապրիլի, 2004թ.) Ռ. Քոչարյանին որակում էր «**հայի ներաշխարհին անհաղորդ հոգեկառուցվածքով**» մեկը, որն «**ի գորու չէ առաջնորդը լինել այնպիսի բազմածավալ պատմություն, անընդգրկելի մշակույթ ու դժվար ճակատագիր ունեցող մի ժողովրդի, ինչպիսին հայ ժողովուրդն է**»...

Խմբագրություն

ՀՀ-ՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՊԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ Է

Այս տարվա փետրվարին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հրապարակեց իր կառույցում գործող կրթական բարեփոխումների կենտրոնում պատրաստված «Հանրակրթության պետական կրթակարգի» նախագիծը: ՀՀ ԿԳ նախարար Սերգո Երիցյանն այնքան է խանդավառված այս փաստաթղթով, որ տեղի-անտեղի երեխայաբար զովաբանում է այն՝ իբրև «կրթական սահմանադրություն»...

ՀՀ անկախության 13 տարիներին մոտավորապես նույնքան կրթության նախարարներ են եկել ու անցել, և նրանցից յուրաքանչյուրը փորձել է «բարեփոխումներ» կատարել ՀՀ կրթական համակարգում (կարծեք հայ դպրոցականները փորձագիտական ճազարներ են կամ որբեր, որոնց մազերը կարելի է ըստ կամս խուզել):

Հերթական «բարեփոխման» այս նախագիծը, ինչպես կրթական «բարեփոխումների» ողջ փաթեթը, ֆինանսավորվում է Համաշխարհային բանկի տրամադրած բազմամիլիոն դոլարանոց վարկով: Հիշեցնենք, որ այս «բարեփոխումների» պարտադիր ծրագրերից մեկը՝ դպրոցների օպտիմալացումը, կատարվեց այնպիսի խայտառակությամբ, որ հարուցեց մինչև իսկ նախարարի «Օրինաց երկիր» կուսակցության ղեկավար, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանի բացահայտ դժգոհությունը...

Իսկ եթե համկարծ, Աստված չանի, կրթակարգի նախագիծը կսուսուրկի ուղղումներից հետո կառավարությունն ընդունի և գործադրի, դրա աղետն իր տարրողությամբ չի էլ հիշեցնի օպտիմալացման ջարդը, որը մանկական խաղալիք կթվա վերջինիս հետ համեմատած...

Կրթակարգի նախագիծը փոխարինելու է «Կրթության զարգացման պետական ծրագիր (2001-2005թթ.)» կոչված փաստաթղթին: Ի դեպ, վերջինս էլ առանձնապես չէր փայլուն ազգային ուղղվածությամբ...

Կրթակարգի նախագիծը դրվեց համաժողովրդական քննարկման՝ ժողովրդավարության պատրանք ստեղծելու համար: Մինչդեռ հենց սկզբից պարզից էլ պարզ էր, որ փորձելու են այն անցկացնել՝ երևութական, ոչ խորքային փոփոխություններ կատարելուց հետո:

Չխորանալով կրթակարգի նախագծի

աղաղակող թերությունների մեջ, որոնց մի մասը, մեր կարծիքով, դիտավորյալ է արվել՝ քննարկումների ժամանակ ուշադրությունը հիմնականում դրանց վրա սևեռելու նպատակով, կանգ առնենք հայեցակարգային բնույթի երեք հարցերի վրա, որոնք սպառնում են ոչ միայն մեր կրթահամակարգին, այլև առհասարակ և՛ ազգային, և՛ պետական անվտանգությանը:

ա) Ըստ կրթակարգի դրույթներից մեկի՝ **ՀՀ պետությունը պարտավորվում է «խրախուսել» կրթության ոլորտում «դպրոցների ինքնուրույնության, ոչ պետական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց գործունեությունը»:** Մեկ խոսքով՝ ՀՀ պետությունը պարտավորվում է իր իսկ դպրոցների մուտքերի առաջ գիքորային «էստի համեցեք» գոռալ ամեն բնույթի աղանդներին, միջազգային ու տեղական կազմակերպությունների, այսինքն՝ արդեն պաշտոնապես սեփականաշնորհում է հայկական դպրոցը ամեն գույնի, սեռական «կողմնորոշման» և ազգության պատահական մարդկանց և կազմակերպությունների: Այդ դեպքում՝ ոմն Դեյվիդ Բելֆորդի «դպրոցը» ՀՀ-ում կդառնա համատարած երևույթ: Սույն բրիտանացի պարոնը երևանում բացել է իր սեփական կրթօջախը, ուր ուսուցանում էր պոռնկագրություն, **«երեխաներին պատմել է թմրանյութերի, դրանց պատճառած «կայֆերի» մասին... և ա դպրոցում շրջել է կիսավարտիքով, իսկ 10-12 տարեկան աղջիկների մոտ կարող էր հայտնվել առյուծիկի բոլորովին մերկ»** (Նաիրա Սամիկոնյան, «Պոռնոգրաֆիայի դպրոց», «Առավոտ» օրաթերթ, 18. 02. 2004, էջ 3): Էլ չենք խոսում ՀՀ կրթական համակարգում գործող և ՀՀ ԿԳ փոխնախարար Աիդա Թոփուզյանի հովանավորությունը վայելող երկլեզվյա ուսուցման «գիտափորձի», Վալդորֆյան դպրոցի և նման այլանախարությունների մասին:

բ) Կրթակարգի նախագիծը, տուրք տալով մարդու իրավունքը բացարձականացնելու արևմտյան պարտադրանքին (չմոռանա՞ք՝ փողը տվողը, այսինքն՝ եղանակ թելադրողը Համաշխարհային բանկն է), **ՀՀ կրթահամակարգում նախատեսում է անցնել աշակերտակենտրոն ուսուցման մեթոդի՝ դեռ չպրտելով ուսուցչակենտրոն ուսուցումը**, որը Մետրոպ Մաշտոցի ժամանակից, դեռևս ավելի վաղ, ընդուն-

ված մեթոդ է հայկական դպրոցում: Վերջինս ամբողջովին հարիր է մեր հոգեկերտվածքին, ազգային ավանդույթներին և արդեն ավելի քան 1.5 հազարամյակ ապացուցել է իր բացառիկ արդյունավետությունը մեզանում:

գ) **Կրթակարգը, ըստ իր շարադրանքի, գլխավոր խնդիր ունի՝ անհատի, լավագույն դեպքում՝ ՀՀ քաղաքացու ձևավորումը:** Խոսք անգամ չկա հայ ազգի անդամ անհատի ձևավորման մասին, թեև տեղ-տեղ, որպես զարդարանք, ազգային անվան տակ հանդիպում ենք որոշ ճամարտակուսույններին: Դա էլ բնական է: Ինչպես դիպուկ նկատել է տալիս ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ղեկան, բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Գառնիկ Անանյանը, **«համաշխարհայնացումը ղեկավարողների տակտիկական հնարանքներից մեկը իրենց նպատակները «ազգային» ուժերով իրականացնելն է»** (Գ. Անանյան, Հանրային կրթությունը դարձյալ մոլոր ուղեցիղ-կրթակարգերում, «Ազգ» օրաթերթ, 5. 03. 2004, էջ 4): Ավելացնենք՝ նաև «ազգային» քողածածկույթներով:

Մեր և պրոֆ. Անանյանի հաստատման լավագույն ապացույցը հենց կրթակարգի նախագիծ-փաստաթղթում է: Նրա «Հանրակրթության կազմակերպման դրույթները» բաժնում ասված է, որ ՀՀ-ում կրթությունը «պետք է իրականացվի ազգային արժեքների հենքի վրա», մինչդեռ այս փաստաթղթի «Նախաբանում» բառացիորեն գրված է. «Կրթակարգը մշակվել է միջազգային ժամանակակից փորձի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական, տնտեսական, քաղաքական, գիտակրթական, մշակութային արժեքների հաշվառմամբ» (ընդգծումները մերն են - Ա. Հ.): Հարց ենք տալիս՝ ինչպե՞ս կարելի է «ազգային արժեքների հենքի վրա» կրթություն ջամբել, եթե վերջինիս ուղեցույցը՝ այսպես կոչված կրթակարգը, փաստաթուղթը մշակողների իսկ խոստովանությամբ, մշակվել է օտար հենքի վրա: Դա նման է կակտուսի թփից ծիրան ակնկալելուն...

Մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր դիտարկում: Կրթակարգը մշակած 18 հոգանոց խմբում չկան մանկական բժիշկ, մանկական հոգեբան, էթնոհոգեբան, լեզվաբան, սոցիոլոգ, իրավաբան, Հայ եկեղեցու ներկայացուցիչ... Բայց չէ՞ որ ՀՀ կառավարության և

«ՊԻՏԻ ԶԱՆԱՆՔ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅԵԼ ՄԵՐ ՏԱՆ ՄԵՁ»

«Պոլսեցոց <...> լեզվի կենտրոնը շատ հեռու է բուն հայ ժողովրդի բնակավայրից, կտրված է նրանից և չի դարձել ժողովրդական լայն խավերի լեզու: Իսկ քանի որ <...> ես չեմ հավատում Թուրքիայի վերածնության, բնակավայրս և Պոլսի լեզվի և գրականության ապագային հավատալ չեմ կարող»:
Վահան Տերյան, Հայ գրականության գալիք օրը, 1914թ.

Հայագիտական առաջին միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով 2003թ. սեպտեմբերին Երևան էր ժամանել պոլսահայ գրող, հրապարակախոս, «Մարմարա» թերթի խմբագիր, ՀՀ ժուռնալիստների միության պատվավոր անդամ, ՀՀ «Մովսես Խորենացի» պետական մրցանակի շքանշանակիր Ռուպեր Հատտեճյանը:
Ստորև ներկայացնում ենք մի կտոր՝ վաստակաշատ մտավորականի հետ մեր զրույցից:



սիկ, 50 տարի է ի վեր, հայերենով կգրեմ իմ բոլոր ստեղծագործություններս:
Այսօր, սակայն, երիտասարդներու համար շատ դժվար է հայ գրականություն մշակել, որովհետև գրականության համար պետք է լավ տիրապետել հայերեն գրական լեզվին: Եվ, դժբախտաբար, մենք, հակառակ որ շատ լավ գրողներու սերունդներ հասցուցինք, այսօր հորիզոնի վրա երիտասարդներ չենք տեսներ և կվախմանք, որ մեր սերունդին գրականությունը պոլսահայ գրականության վերջակետը պիտի ըլլա...
- **Ուժացում կոչվող վտանգն այն հրեշն է, որի**

իրարու հետ «ամուսնացնել»: Այդ սինթեզն հրաշալի արդյունքներ մեջտեղ եկան:
Ըսեմ նաև, որ իմ կյանքիս ամենեն կարևոր հանգրվանը 1970թ. դեպի Հայաստան կատարած իմ առաջին այցելությունն էր: Երբ վերադարձա, գիրք մը գրեցի՝ «Օրագրիս 15 էջերը» խորագրով: Ատ Հայրենիքի մեջ իմ անցուցած 15 օրերու պատմությունն է: Այդ այցելության շնորհիվ իմ մեջ գրական նոր մարդ մը ստեղծվեցավ, ես ձեռք բերի նոր ոճ մը:
- **Դուք բազմաթիվ գրքերի հեղինակ եք:**
- Ճիշտ է: Մոտավորապես 50 գիրք հրատարակած եմ և ուրախ եմ, որ իմ գիրքերս կփնտրվին, կկարդացվին: Տակավին 60-70 գիրք ունիմ հրատարակելիք, բոլորն ալ համակարգիչներու մեջ իրենց կարգին կսպասեն: Այսպես՝ իմ կյանքը հայ գրականության նվիրված է, և ես կրնամ ըսել, որ, որպես հեղինակ, շատ երջանիկ մարդ եմ: Մամուլի կամ արվեստի ուղիով ժողովուրդին հետ կապ պահելը, դուք ալ գիտեք, հրաշալի բան է:
- **Եվ դժվար է, և՛ մեծ պատասխանատվություն է պահանջում:**
- Անշուշտ: Եվ մանավանդ նկատի առեք, որ այնքան ալ դյուրին չէ Թուրքիո մեջ հայերեն թերթ հրատարակել: Բայց դժվարությունները երկրորդական կմնան: Ամեն բանն առաջ սերը, հավատքը, ինքնավստահությունը շատ կարևոր են: Ես միայն գրականության ճամփով չէ, որ կծառայեմ ժողովուրդին: Ամենուրեք կերթամ, կխոսիմ, ազգային կյանք կկազմակերպեմ, որպեսզի մեր ապրած հողամասին վրա մեր անմիջական շրջանակին մեջ բնակող ժողովուրդը հայ պահենք: Շատ կուզեմք, որ իրենք ալ Հայաստան գան և տեսնեն երկիրը: Ճիշտ է, որ մենք աշխարհի ամեն կողմ շատ տաղանդավոր մարդիկ ունինք, բայց բուն տաղանդը Հայաստանի մեջ է, որ իր ծաղկունը կգտնե: Մենք դուրսեն շատ լավ կտեսնենք ատիկա: Անգամ ամենամեծագա,

- **Ինչպե՞ս սկսեցիք Ձեր գրական գործունեությունը:**
- Անկեղծ ըլլալու համար պիտի ըսեմ, որ ես գրականության սկսած եմ շատ կանուխ շրջանեն, բայց թրքերեն լեզվով: Ես Մխիթարյանցի եմ, հայոց լեզուն ինձի անծանոթ չէր. Մխիթարյան միաբանությունը նշանավոր, մեծանուն գրողներ, վարդապետներ ունեցած է: Այնուամենայնիվ, այնպես պատահեր է, որ ես թրքերեն գրել սկսիմ: Ատ 1946 թվականն առաջ էր: Երկու շատ սիրելի ընկերներս՝ Վարուժան Աճեմյան, որ ներկայիս Արժանտին կբնակի, մյուսը՝ Խաչիկ Ամիրյան, որ Հայաստանի մեջ ծանոթ դեմք եղավ, երբ տեսան, որ ես թրքերեն կգրեի, առանց ինձի լուր տալու, իմ գրածներես մեկը հայերեն թարգմանեցին և «Անի» ամսագրի առաջին թիվին մեջ (1946թ.) հրատարակեցին: Մեծ անակնկալ մը եղավ ինձի համար, երբ անունս տեսա հայերեն պատմվածքի մը տակ: Այդ օրը իրենց քով երդում ըրի, որ ասկե վերջ կյանքիս մեջ հայերենն տարբեր ունեւ լեզվով պիտի չգրեի: Եվ հավատարիմ մնալով իմ այս խոստումիս, ահավա-

րեն, արդեն քանի տարի, պայքարում եմք՝ սփյուռքահայության ինքնությունը պահպանելու համար...
- 50-ական թթ. «Մարմարայի» խմբագիրը ես չէի: Պոլստ մեջ ստեղծեցինք գրական շատ առողջ նոր շարժում մը՝ թե՛ բանաստեղծության կալվածներ, թե՛ արձակ ստեղծագործության: Թերթին առընթեր գրական էջեր հաստատեցինք, գրականությունը ծաղկեցուցինք: 1967թ. երբ ինձի առաջարկվեցավ «Մարմարայի» խմբագրատեղի պաշտոնը, այդ առաջարկը շատ կարևոր դեր կատարեց կյանքիս մեջ, որովհետև այդ կերպով ես գրականության դաշտն ուստում մը ըրի դեպի հասարակական դաշտ. իմ ժողովուրդը ճանչցա, իմ ժողովուրդի բազմերակը մատներուս մոտ զգացի: Եվ քանի որ գրականության մարդ էի, կրցա այդ հասարակական կյանքը առնել և բերել դեպի գրականություն: Ուրիշներու մոտ հակառակը պատահած է. գրականութենն դեպի հասարակական կյանք գացած են, և արտոնած են, որ գրականությունը իրենց մոտ մեռնի: Մինչդեռ ես կրցա մամուլն ու գրականությունը

անտարբեր, ապագային մարդ մը, որ գա Յայաստան և այստեղ շաբաթ մը կենա, վստահ եմ՝ պիտի փոխվի, ազգային զգացումը իր մեջ պիտի խլրտի, որովհետև այդ զգացումը իր արյան մեջ կա:

- **Ի՞նչն է պոլսահայ գրականության այսօրվա տկարության պատճառը: Տեղեկություններ կան, որ պոլսահայության չնչին մասն է այսօր խոսում հայերեն: Իրո՞ք:**

- Երբ մենք գրականություն կըսենք, գերազանցապես լեզու կհասկնանք: Լեզուն է, որ գրականության իր ազգային պատկանելիությունը կստեղծե: Երբ ֆրանսական գրականություն կըսենք, կհասկնանք, որ այնտեղ կգործածվի ֆրանսերեն լեզուն՝ իր գեղեցիկ ձևին մեջ: Յայ գրականությունը հայերեն լեզվով գրված գրականությունն է: Ան որ լեզու չի գիտեր, չի կրնար գրականություն ստեղծել: Ուստի, որպեսզի մենք մեր ընտիր գրականությունը ունենանք, պետք է, որ մեր ժողովուրդը հայախոս ըլլա, որպեսզի իր ծոցեն ելլեն մոր տաղանդավոր մարդիկ, որոնք հայերեն լեզուն իբրև գործիք պիտի գործածեն գրականության համար: Ինչ մեղք, որ այսօր սփյուռքահայ գետնի վրա, մասնավորաբար վերջին 8-10 տարիներու ընթացքին, հայախոսությունը նահանջել սկսած է: Պոլսահայությունը սկզբնական շրջաններուն իսկապես հայախոս էր, կրնամ ըսել 80 տոկոսով: Այսօր, դժբախտաբար, փոխված է իրավիճակը: Կենթադրենք, որ Ստամբուլի մեջ ունինք 70-80 հազար

Դպրոցներու մեր ուսուցիչները դժվարություն ունեցան հայերեն լեզուն անկաշկանդ ուսուցանելու հարցին մեջ: Եթե միայն այդ ըլլար, մենք կհաղթահարեինք: Թուրքիո մեջ շատ ուժեղ հեռատեսիլ կա, և ամեն մակարդակե մարդը իր ծուղակին ձգող շատ հարուստ հեռուստատեսային հայտագիրներ կան: Թուրքիո մեջ շատ ուժեղ մամուլ կա, ճոխ, հմայիչ, քիչ մըն ալ, դժբախտաբար, անմակարդակ: Եվ երբ մամուլն անմակարդակ կըլլա, ժողովուրդը քիչ մը ավելի կփարի անոր: Երիտասարդ սերունդը նախ՝ մնացած է հեռուստացույցին և մամուլին հմայքին և ճնշումին տակ: Բայց ասկեց ալ ավելի կարևորը կա: Ասկե 25-30 տարի առաջ պոլսահայ մեր երիտասարդները այնքան կարևորություն չէին տար համալսարանական ուսումին, որքան այսօր: Իսկ երբ կհաջողին համալսարանի սա կամ նա ճյուղեն ներս մտնել (պետք է ընդունինք, որ շատ դժվար է համալսարանի ընտիր ճյուղերեն հաջողիլ ներս մտնել), այլևս իրենց շուրջ ընդհանրապես հայ դասընկեր չեն կրնար տեսնել: Իրենց ամենօրյա կյանքն այլևս կապված կըլլա թուրք դասընկերներու հետ: Եվ ճիշտ այս պատճառով ալ ամուսնություններն ալ դժվարանալ սկսած են, քանի որ համալսարանն ավարտող երիտասարդները այդ երկար շրջանին չեն կրցած ճանչնալ հայ մեկը, որ կրնար իրենց համար կյանքի ընկեր ըլլալ: Եվ ստիպողաբար, շատ անգամ անոնք իրենց կյանքի ընկերը կընտրեն իրենց համալսարանի ընկերներեն: Ավելի հառաջացյալ պարագային, երբ կսկսին աշխատիլ թրքական կարևոր հաստատություններու մեջ, հոն ևս հայ գործընկերներ չկան, որոնց մեջեն ընտրություն մը ընեն և ամուսնական կյանք հաստատեն: Ուստի, այս հայախոսության ահավոր նահանջին հետ միասին սկսած է օտարներու հետ ամուսնության խոշոր հոսանք մը: Եվ այսօր եթե իմանանք, որ մեր ծանոթներեն մեկուն գավակը պիտի ամուսնանա (աղջիկ կամ տղա), հուզումով հարց կուտանք, թե հայո՞ւ հետ պիտի ամուսնանա... Դժբախտաբար, մեր ստացած պատասխանը ավելի հաճախ ժխտական է...

Ասիկա ոչ միայն ստամբուլահայության համար է, այլև սփյուռքի բոլոր կեդրոններու. հայ ժողովուրդը տակավ սկսած է կորսնցնել հայախոսությունը:

Եվ ես կխորհիմ, որ ատոր ամենակարևոր պատճառներեն մեկն ալ հայկական ինքնության տկարացումն է: Ես անցյալները Ստամբուլի մեջ բանախոսություն մը սարքեցի. հարց կուտայի, թե ի՞նչ պետք է ընենք, որպեսզի մեր զավակները հայերեն խոսին: Ըսի ունկնդիրներուս՝ ձեր զավակները հա-


յերենին մոտեցնելու մի՛ աշխատիք, չեք հաջողիր: Բայց մեկ բան կհաջողիք՝ ձեր զավակներուն շարունակ հիշեցուցեք, որ հայ են: Անոնց մոտ մշակեցեք իրենց հայկական ինքնությունը: Եվ եթե անոնք իսկապես հասնին որպես հայ ինքնության տեր անձեր, օր մը իրենց լեզուն ալ պիտի փնտրեն, մշակույթն ալ:

- **Պոլսում գործում են 18 հայկական վարժարան, 33 եկեղեցի, մեծ թվով մշակութային ակումբներ: Արդյո՞ք այս ամենն անբավարար է, որպեսզի հայ երիտասարդները կարողանան պահպանել իրենց ազգային ինքնությունը՝ համալսարանական կրթությամբ հանդերձ:**

- Թուրքիո մեջ մեծ թվով համալսարաններ կան: Յամալսարաններուն հետևող հայ երիտասարդներ ալ շատ կան: Բայց չի պատահիր, որ մույն ճյուղին մեջ 3-4 հայ ուսանող գտնվի. շատ տարածուն են, կցրվին: Այսօր Թուրքիո մեջ պայմանները շատ փոխված են: Յակառակ, որ գիտենք, թե կան քաղաքական հարցեր, որոնք հայ և թուրք ժողովուրդները դեմ առ դեմ բերած են և գիտենք նաև, թե քիչ թե շատ թշնամական զգացումներ միշտ կգոյատևեն, երիտասարդ սերունդը տարբեր կերպ կխորհի: Այսօր թե՛ հայ, թե՛ թուրք երիտասարդները ընդհանրապես կարհամարհեն այս թշնամանքը և կուզեն ավելի ընկերային և եղբայրական կապեր հաստատել, ինչ որ անշուշտ ընկերային տեսակետով լավ է, բայց ավանդական կապերու տեսակետե՛ անպատեհ, որովհետև ճամբա կբացվի դեպի խառն ամուսնություն: Մեր հայ տղաքը և աղջիկները իրենց թուրք տարեկիցներուն հետ ունեն խնդիր չունին, եղբայրական հարաբերություններ կստեղծեն: Յակարծ երբ իրենց կըսենք, թե դուն հայուն հետ պիտի ամուսնանաս, դուն պետք է քու մշակույթիդ տեր ըլլաս, պետք է հայ ըլլաս, անոնք հանկարծ կտարվին՝ ըսելով՝ ի՞նչ տարբերություն կա՝ հայ, թե թուրք, ի՞նչ պիտի ըլլա: Ասոնք գաղափարներ են, որոնք թեև մարդկային գետնի վրա շատ ճիշտ են, այնուհանդերձ, ընտանեկան ու ազգային գետնի վրա անպատեհություններ կստեղծեն: Մենք պարտավոր ենք, որքան ալ բառը ժխտական իմաստ ունենա, ազգասեր ըլլալ...

- **Բոլոր փոքր ժողովուրդները պարտավոր են այդպիսին լինել...**

- Գիշտ է: Մասնավորապես սա շրջանին, երբ համաշխարհայնացումի գաղափար մը ստեղծվեցավ: Ես միշտ դեմ եղած եմ այն հոսանքներուն, որոնք մարդոց միջև եղբայրություն և հավասարություն կքարոզեն... Յավասարությունը, մասնավորաբար՝ եղբայրությունը, բարեկամությունը կնշանակեն



հայ, բայց անոր հազիվ 20 տոկոսը հայերեն կխոսի:

- **Պատճառը:**

- Նախ և առաջ՝ բավական երկար ժամանակ մեր դպրոցներու մեջ ճնշում գործադրվեցավ հայերեն լեզվին դեմ:



տկարի՝ գորավորին հետ միանալը, նույնանալը: Ունե գորավոր տկարին հետ չուզեր նույնանալ: Կրնա՞ք պատկերացնել, որ գերմանացիի և հայի եղբայրության մեջ գերմանացին հայ դառնա: Հայն է, որ գերմանացի պիտի դառնա, որովհետև մարդիկ ի ծնե հակամետ են գորավորին, մեծին, նշանավորին, հարուստին հետ նույնանալու:

- Թուրքիայում պետական ի՞նչ վերաբերմունք կա գլոբալիզացիա կոչեցյալի նկատմամբ:

- Ասիկա Թուրքիո համար այնքան մեծ վտանգ չէ, որքան մեզի համար, թեև թուրքերն ալ անհանգիստ են: Ասոնք, անշուշտ, մեծ ժողովուրդներու, մեծ քաղաքակրթություններու օգտին ստեղծված բաներ են: Մեզի նման փոքրիկ ժողովուրդները և, մասնավորաբար, հայ ժողովուրդի նման՝ հազար ու մեկ դժվարություններու դեմ մարտնչող ժողովուրդ մը, որ իր ինքնությունը, իր ազգային պատկանելիությունը պահպանելու համար այսքան ահավոր փորձություններու մատնված է, ինչո՞ւ ուրիշներու հետ միանա: Կարելի եղածին չափ պետք է զգուշանանք մեզ մեր ինքնութենէն հեռացնող բոլոր ազգակցներէն: Օտար ավերումն վրա սա շատ կարևոր հարց է: Մեր երիտասարդներուն շարունակ պիտի հիշեցնենք, որ իրենք հայ են:

Աստված հեռու ընէ, կարգ մը աղետներ տեսանք: 1988թ. ահավոր երկրաշարժին բերած անհամար չարիքներուն քով մեկ բարիք գոնէ արձանագրվեցավ: Երկրաշարժը ամբողջ հայ ժողովուրդի մոտ հայկական ինքնության զգացում հրահրեց և մտրակեց, կրնամ ըսել: Ինչ-ինչ համաշխարհային ճանաչում ունեցող հայ մարդիկ, որ մինչև այդ օրը իրենց հայկական ծագումին մասին բառ չէին խոսած, հանկարծ հայասեր դարձան, իրենց հարստությունները և տաղանդները դրին հայ ժողովուրդին ծառայության մեջ: Ասոնք գոնէ քիչ մը սփոփանք եղան մեզի և ավելորդ անգամ մը ևս հիշեցուցին, որ աղետները երբեմն անհրաժեշտ են, որպեսզի մեր ինքնությունը պահենք: Ես տեսած եմ, որ մեր ժողովուրդը հոն, ուր հանգստավետ պայմաններ կգտնէ, կտարվի՝ իր հայկական ինքնությունը մոռնալով: Շատ հստակ համոզում մը ունիմ, միշտ հավատացած եմ, որ եթե

Հայաստանը բարձրանա, ամբողջ սփյուռքի ժողովուրդն ալ կբարձրանա և ժողովուրդին մոտ ազգային ինքնության գիտակցումն ալ կգորանա:

- Ինչպես 1988թ. ազգային վերազարթոնքի ժամանակ:

- Տակավին ուրիշ օրինակներ ալ կան: Եթե Հայրենիքը տկարանա, անմիջապես սփյուռքն ալ կտկարանա: Մենք պետք է ունենանք այնպիսի հայրենիք մը, որուն նայելով՝ սփյուռքի բոլոր մեր հայրենակիցները հպարտությամբ ըսեն. «Ես հայ եմ»: Ես շատ ճակատագրական կնկատեմ հայ ժողովուրդի համար ազգային ինքնության պահպանման հարցը նաև Հայաստանի մեջ: Մենք կլսենք, որ այսօր հազիվ 500 օրինակ կտավին մեր գրողներու գործերը և կարդացող չկա: Սա մեզի մտածել կուտա: Անշուշտ, կան տնտեսական պատճառներ ալ, սակայն չեն խորհիր, թե միայն տնտեսական պատճառն է, որ դեր կխաղա: Սա կապիտալիստ համակարգին բերած չարիքներն են կն. է. այսքան երկար տարիներ է ի վեր իր հողեն արվեստ, մշակույթ պոռթկացնող ժողովուրդը հանկարծ կուզէ կռնակ դարձնել իր մշակույթին, իր գիրքին, իր գրականության: Սա մեզի համար հասկնալի հարց չէ:

Բարեբախտաբար, մեր հայրենի հողը տակավին չէ դադրած արժեքներ արտադրել: Սա մեզի համար միսթարություն է: Հայ մշակույթի, հայ գիրքի նկատմամբ անտեսումի թերևս այս անցումի շրջանը շատ շուտ պիտի անցնի, բայց տա Աստված, որ գործը գործեն անցած չըլլա և անցնի, որ վնասը շատ համատարած չըլլա: Երբ օր մը Հայաստանը իր որոշ դժվարությունները կլուծէ, երբ ժողովուրդը որոշ բարօրության մակարդակի մը կհասնի. մինչև այդ օր մեր մշակույթը բոլորովին իր հոգին չավանդէ: Մարդիկ աղքատութեն հարստության կրնան անցնիլ, բայց մեռած մշակույթը չեն կրնար վերակենդանացնել: Սա հարյուրավոր տարիներու գործ է:

Մենք սփյուռքի մեջ բոլորս ալ սպասող ենք, որ ժամ առաջ Հայրենիքը դժվարությունները լուծէ, մեր ղեկավարները (թող ներվի ինձի՝ այսպես ըսելու) ավելի իմաստուն, ավելի հայրենասեր մերձեցունով մեր ժողովուրդին հարցերը ձեռք առնեն:

- Ավելի քան 35 տարի Դուք խմբագրում եք «Մարմարա»: Ինչպե՞ս եք կարողանում հաղթահարել առկա դժվարությունները՝ օրաթերթն ապրեցնելու համար:

- Ես միշտ կըսեմ՝ ունե գործի մեջ եթե հաջողիլ կուզեք, այդ գործը, նախ և առաջ, պիտի սիրեք: Ես շատ կանուխ տարիքես սիրեցի հայ գրականությունը: Ես մամուլի մարդ ըլլալե առաջ գրականության մարդ եմ, և գրականության հանդեպ իմ սերն է, որ զիս համոզեց, որպեսզի հայ մամուլի գլուխը անցնիմ: Հիմա գիտեմ, որ մեր թերթը ինձի համար կյանքի նպատակ է, հայրենի գրելը ինձի համար կյանքի նպատակ է: Գիշտ է, բազմաթիվ դժվարություններ ունիմք, բայց սփյուռքի ժողովուրդը կարծես իր մոր արգանդեն դուրս եկած ատեն իր արյան մեջ կբերե այդ բոլոր դժվարություններուն դիմադրելու և այդ բոլոր դժվարություններն անկախ իր ստեղծագործական կամ իր հայկական պատկանելիության պտուղները զարգացնելու կարողությունը: Մենք այդպիսի սերունդ մը ունենինք, և կրնամ ըսել, որ Պոլստ մեջ կրցանք իսկապես ծաղկեցնիլ, փառավոր գրականություն մը ստեղծել:

Այս բոլորին մեջ ամենակարևորը հայ մամուլն է: Երկու օրաթերթ ունինք՝ «Մարմարա» և «Ժամանակ»: Հակառակ, որ կխոսինք դժվարություններու մասին, անոնք մեզի տեսանելի չեն: Մեզի տեսանելի են միայն այս ասպարեզի աղվոր կողմերը: Ամեն անգամ, երբ արտասահմանեն և նաև Հայաստանեն գրասեր, մշակութասեր, գիտնական մարդիկ Պոլիս կուզան, ամեն բանե առաջ անոնք պատրիարքարանի կողքին «Մարմարա» է, որ այցելության կուզան: Մենք շատ մեծ երջանկություն կզգանք և կհասկնանք, որ զուր տեղ չէ, որ կաշխատինք: Մինչև այսօր չունենինք տնտեսական դժվարություններ՝ թերթը մատակարարելու համար: Հիմա որոշ չափով ունինք, բայց ատ ալ կարևոր չէ: Մենք կհավատանք, որ որքան ատեն Աստված մեզի այդ կարողությունը տա, մենք Պոլստ մեջ պիտի ծաղկեցնենք հայ մամուլը: Ատ կնշանակե ծաղկեցնել հայ մշակույթը:

**Հասնիկ Գուլակյան
20 սեպտեմբերի, 2003թ.**

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



■ Ավետիք Իսահակյան, «Երկերի լիակատար ժողովածու», 14 հատորով, հ. 1: «Բանաստեղծություններ», 33 զԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2003, 847 էջ (A-5):

Հատորը կազմել, առաջաբանը, վերջաբանը և ծանոթագրությունները գրել է Վարպետի թոռը՝ բան. գիտ. դոկտոր Ավիկ Իսահակյանը: Հրատարակչությունը իրականացվել է «Ռուսաստանի հայերի միություն» համառուսական հասարակական կազմակերպության և նրա նախագահ Արա Աբրահամյանի հովանավորությամբ:

■ Ֆյոդոր Դոստոևսկի, «Ռեռահասը», վեպ: Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003, 632 էջ (A-5):

Ռուս մեծ գրողի վեպում արծարծված գաղափարա-բարոյական խնդիրներն այսօր էլ արդիական են՝ հատկապես երիտասարդ մարդու հոգևոր որոնումների և ինքնադաստիարակության խնդիրների տեսանկյունից:

Ռուսերենից թարգմանել են Լիլի Տեր-Սիմաայանը և Ալեքսան Մեխակյանը:



■ Արմեն Սարուբյան, «Հայկական հարցը և Ռուսաստանի քաղաքականությունը (1915-1917թթ.)» (ռուսերեն): 33 զԱԱ տպարան, Երևան, 2003, 482 էջ (A-5):


Մենագրության մեջ քննության են առնված ռուսական երեք վարչակարգերի՝ Տարական Ռուսաստանի, Ժամանակավոր կառավարության և Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականությունը՝ Հայկական հարցի և ռուսական այս տարբեր իշխանությունների գիծը՝ Արևմտյան Հայաստանի հայության ճակատագրի նկատմամբ:

Տպագրվել է 33 զԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ:

■ Իվ Տերնոն, «Անպատժելիություն, վրեժ և ժխտում. Հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև»: «Նահապետ» հրատարակչություն, Երևան, 2003, 36 էջ (A-5):


Աշխատությունը հրատարակության է երաշխավորել 33 զԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտխորհուրդը:

Ֆրանսերենից թարգմանել է Ավետլանա Սահակյանը:



■ Երվանդ Գասպարյան, «Անատոլ Ֆրանսը և հայ ժողովուրդը» (հրատարակվել է հետմահու): «Նահապետ» հրատարակչություն, Երևան, 2003, 124 էջ (A-5):

Պատմագիտական և աղբյուրագիտական հարուստ նյութի հիման վրա, պատմագիտության դոկտոր, վաղամեռիկ Երվանդ Գասպարյանը առաջին անգամ ամփոփել է ֆրանսիացի



ցի մտավոր ընտրանու ամենահանրահայտ ներկայացուցչի՝ Անատոլ Ֆրանսի երեսնամյա հայանպաստ գործունեությունը, որն ընդգրկում է XIX դարի վերջից մինչև XX դարի առաջին քառորդը:

Մենագրությունը տպագրվել է 33 զԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ, հովանավորել է 33 Ազգային ժողովը:

■ «Անհայտ անուններ. Ֆրանսիացի հայրենասերները (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)» (ռուսերեն): «Նահապետ» հրատարակչություն, Երևան, 2003, 40 էջ (A-5):

Գրքույկը հրատարակության է երաշխավորել 33 զԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը:

Տեքստը կազմել, խմբագրել և նախաբանը գրել է Մարատ Խարազյանը:



■ Սիխայիլ Բուլգակով, «Սպիտակ գվարդիա», վեպ: Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004, 340 էջ (A-5):

Ինքնակենսագրական բնույթի ստեղծագործություն է՝ անցյալ դարի 20-ական թթ. Ուկրաինայում ծավալված իրադարձությունների իմաստավորմամբ և արժևորմամբ:

Հայերեն լույս է տեսնում առաջին անգամ: Թարգմանել է Արմեն Հովհաննիսյանը: Գիրքը կարելի է ձեռք բերել հրատարակչությունում (Երևան, Հովսեփ Էմինի 123, հեռ.՝ 27-70-52):

■ Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան, «Հայ Գողգոթան»: Ա և Բ հատորներ, Գ հրատարակչություն, տպարան Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության, Անթիլիաս, 2003, 494 էջ (Ա հատոր) (A-4):

Հայ հոգևորականը ներկայացնում է իր՝ ականատեսի հուշերը հայերի տարագրության և Մեծ եղեռնի մասին:

Հատորները վերահրատարակվել են 2ամբերթեն ընտանիքի մեկենասությամբ:



■ «Հայ սիյունը» հանրագիտարան: Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն. Երևան, 2004, 732 էջ (A-4):

Ներկայացվում են հայկական 72 գաղթօջախների պատմությունը և այդ երկրներում հայերի կենսագործունեության տարբեր ոլորտները:

Խմբագրակազմի ղեկավար՝ հանրագիտարանի գլխավոր խմբագրի տեղակալ՝ Արամ Սարգսյան:

■ Բենիամին Պողոսյան, «Բրիտանիա-Հայաստան կոմիտեի գործունեությունը»: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ:



գարան-ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 2003, 122 էջ (A-5):

Համառոտ ներկայացվում է բրիտանական հայանպաստ առավել ազդեցիկ կազմակերպության գործունեությունը: Առաջին անգամ հրատարակվում են Բրիտանիա-Հայաստան կոմիտեի 1915թ. հոկտեմբեր-1921թ. փետրվար և վերջինիս քարոզչության ենթակոմիտեի 1920թ. հունիս-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած նիստերի արձանագրությունները:

■ Վերծինե Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը»: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2003, 144 էջ (A-5):

Ներկայացված են շուրջ 50 տարվա ընթացքում բան. գիտ. դոկտոր հեղինակի՝ Հայոց ցեղասպանության ակամատես-վերապրողներից գրառած, ծայնագրած կամ տեսագրած (Հայաստանում և սփյուռքում) վկայությունները՝ հայոց մեծ արհավիրքի մասին: Ուսումնասիրությանը կից կան ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն ամփոփումներ:

Տպագրվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ:



■ Նիկոլայ Յովհաննիսյան, «Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտական հայեցակարգային համակարգում»: «Ձանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2002, 32 էջ (A-5):

Գրքույկում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմ. գիտ. դոկտոր հեղինակը ներկայացնում է ցեղասպանագիտության՝ որպես գիտական նոր ուղղության, նախադրյալները և ձևավորումը, ցեղասպանագիտության հայկական նախարմատները, ցեղասպան պետության տեսադրույթը և այլն:

■ Պասկուալ Օհանյան, «Հայ ժողովրդի ցեղասպանությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը» (ռուսերեն): «Նահապետ» հրատարակչություն, Երևան, 2003, 44 էջ (A-5):

20-րդ դարի բարբարոսությունների դատապարտմամբ՝ հեղինակը մասնավորեցնում է իր խոսքը հայոց մեծ ողբերգության շուրջ և ներկայացնում իրավական այն քայլերը, որոնք ձեռնարկվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ մարդու իրավունքների պաշտպանության նպատակով:

Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ:

■ Անուշավան Զաքարյան, «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս գրականագետների զնահատականներում» (ռուսերեն): ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 2003, 286 էջ (A-5):

Ավելի քան 350 գրավոր աղբյուրների օգտագործմամբ գրված այս հատորում հեղինակը ներկայացնում է մի խումբ



ռուս գրողների հասարակական-քաղաքական, գրական-մշակութային և ռազմա-հայրենասիրական գործունեությունը Արևմտյան Հայաստանում՝ 20-րդ դարի 10-ական թվականներին, նրանց զնահատականները՝ հայ ժողովրդի մեծագույն ողբերգությանը:

Հատորը խմբագրել է պատմագիտության դոկտոր Ալբերտ Խառատյանը:

■ Համաստեղ, «Նամականի»: «Սուղնի» հրատարակչություն, Երևան, 2003, 504 էջ (A-4):

Գրքում ներկայացված են հայ գրողների և հասարակական-քաղաքական գործիչների հետ (18 հոգի) սփյուռքահայ նշանավոր գրող Համաստեղի փոխանակած նամակները, որոնք մեծ մասամբ պահվում են «Համազգայինի» Բեյրութի արխիվում:

Կազմել է ծանոթագրել է բան. գիտ. դոկտոր Մարգարիտ Խաչատրյանը, խմբագրել են բան. գիտ. դոկտոր, պրոֆեսորներ Լաուրա Մուրադյանն ու Վազգեն Համբարձումյանը:

Հատորի կազմությանն օժանդակել են մի խումբ սփյուռքահայ բանասերներ: Լույս է տեսել «Կարպիս Լ. Նազարեան Հիմնադրամի» մատենաշարով՝ որպես նրա 6-րդ հրատարակությունը:



■ Ալբերտ Նալչաջյան, «Ազգածագում և ծուլում» (ռուսերեն): «Հոգեբան» հրատարակչություն, Երևան-Մոսկվա, 2003, 256 էջ (A-5):

Հայ ականավոր էթնոհոգեբանը հետազոտել է ազգածագման և ծուլման հոգեբանական կողմերը: Պատմական, ազգագրական և այլ բնույթի նյութերի վերլուծման հիման վրա, հեղինակը բացահայտում է էթնոսների ծագման ու զարգացման, միաձուլման, անկման ու ասպարեզից հեռացման մի շարք մեխանիզմներ և ռազմավարություններ:

■ Կարինե Նալչաջյան, «Երեք ակնարկ էթնիկական հոգեբանությունից»: «Ձանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2002, 56 էջ (A-5):

Ուսումնասիրվել են էթնիկական ինքնագիտակցության դրսևորման օրինակներում և օտար միջավայրում: Հարցերի վերլուծումը կատարվել է էթնիկ հոգեբանության տեսական և փորձարարական նյութի համադրումով:



■ Մարգար Շարապխանեան, «Դարձ Դեպի Հայրենիք»: Հայաստանի գրողների միության հրատարակչություն, Երևան, 2003, 334 էջ (A-5):

Հեղինակը՝ սփյուռքահայ ծանոթ մանկավարժն ու հրապարակագիրը, հուշագրությունների տեսքով փոխանցում է սփյուռքահայի ապրումներն ու խոհերը հայրենի հողին վրա: Հեղինակը հայության փրկությունն ու գոյատևումը տես-

նուն է միայն Հայրենիքում, իսկ հայրենի պետության նեցուկ կանգնելը համարում յուրաքանչյուր հայի առաջնահերթ պարտավորությունը:

Գիրքը խմբագրել է ՀԳՍ նախագահ Լևոն Անանյանը:



■ Կարինե Նալչաջյան, «Էթնիկական ինքնագիտակցություն»: «Ձանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2003, 216 էջ (A-5):

Ուսումնասիրվել են այն մեխանիզմներն ու օրինաչափությունները, որոնք ընկած են ազգի հավաքական ինքնագիտակցության հիմքում: Փորձարարական ճանապարհով հետազոտվել և բացահայտվել է հայերի ազգային ինքնագիտակցության նկարագիրը: Աշխատանքում քննարկվել են նաև էթնիկական ինքնանույնացման, լուսանցքայնացման, էթնոկենտրոնության և մի շարք հարակից հարցեր, մշակվել և ներկայացվել են գործնական հանձնարարականներ՝ ուղղված էթնոսի ինքնագիտակցության ամրապնդմանն ու մենք-համակարգի կայունացմանը:

Գիրքը հրատարակության է երաշխավորել Երևանի Բ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գիտական խորհուրդը:

■ Գրիգոր Ջոհրապ, «Երկերի ժողովածու», հատոր Ե, գիրք Ա: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, Երևան, 2004, 560 էջ (A-5):



Հատորը պարունակում է 1891, 1893 և 1908-1910 թվականներին Գրիգոր Ջոհրապի այլևայլ ելույթները, զեկույցները, կազմած օրինագծերն ու հիշատակագրերը, որոնք ներկայացվում են առաջին անգամ: Գիրքն ունի առաջաբան, ծանոթագրություններ և համապատասխան բառարաններ:

Տպագրվել է ԱՄՆ-ի Արևելյան թեմի Առաջնորդարանի հոգածությամբ՝ Դոլորես Լիպման-Ջոհրապի կտակի համաձայն:



■ Հաննա Սինա, «Կեռաս բերան»: «Մուղնի» հրատարակչություն, Երևան, 2004, էջ (A-5):

Սիրիացի արաբ արձակագրի՝ պատմական հենքի վրա գրած վեպը 1930-40-ական թվականներին Քեսապի հայության հակաֆրանսիական պայքարի մասին է:

Արաբերենից թարգմանել է Գևորգ Յազըճյանը: Գիրքը լույս է տեսել սիրիահայ մի խումբ առաջադեմ մտավորականների մեկենասությամբ:


■ Արտեմ Օհանջանյան, «Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի դերը Հայկական հարցում» (գերմաներեն): «Նահապետ» հրատարակչություն, Երևան, 2003, 54 էջ (A-5):



Վիեննաբնակ ցեղասպանագետն իր հերթական աշխատասիրության մեջ նորից քննարկում է գերմանախոս երկու կայսրությունների մեղսակցության խնդիրը Հայկական ցեղասպանության մեջ:

Գրքույկը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ ցեղասպանության թան-


գարան-ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ:




■ Թորոս Թորանյան, «Տիեզերքի խուճարկուն Սուրիոյ Մէջ»: «Ձանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2003, 184 էջ (A-5):

Գիրքը ներկայացնում է 2000թ. ակադեմիկոս Գրիգոր Գուրգարյանի Սիրիա կատարած այցելությունը, շրջապատույտները՝ հայաշատ քաղաքներում և պատմական հնավայրերում, նաև մեծահամբավ գիտնականի դասախոսությունները՝ հայկական և արաբական շրջանակներում:

■ Թորոս Թորանյան, «Զրոյցներ Կարախի Սուրենեանի Հետ»: «Ձանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2003, 168 էջ (A-5):



Հայրենաբնակ ականավոր գրող ու թարգմանիչ Կ. Սուրենյանի հետ զրույցները գրառվել են 1994թ.՝ Սիրիա և Լիբանան եռամսյա շրջագայության ընթացքում: Զրույցներում շոշափվում են ամենատարբեր հարցեր՝ սփյուռքի խնդիրներ, Հայրենիք-սփյուռք հարաբերություններ, հայկական ու համաշխարհային մշակույթի առնչություններ և այլն: Զրուցակիցները՝ երկուսն էլ Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության (ՄԿՀ) շրջանավարտներ, գրուցում են նաև ՄԿՀ-ի առաքելության ու դպրոցի գլխին կախված վտանգների մասին:




■ Թորոս Թորանյան, «Սիմոն Սիմոնեան Երեւոյթը»: Լուս Անճելըսի «Նոր Կեանք» շաբաթաթերթի մատենաշար թիւ 38, Հալեպ, 2004, 240 էջ (17x24 սմ):

Գրքում տեղ են գտել սփյուռքահայ վաստակաշատ մանկավարժ, խմբագիր, հրապարակագիր, հրատարակիչ Ս. Սիմոնյանի երկերի գրախոսություններ, հուշեր և հեղինակի հետ Ս. Սիմոնյանի փոխանակած նամակներ:

Լույս է տեսել Սիմոնյանի բարեկամ սփյուռքահայերի քաջալերանքով, Հովհաննես Մկրյանի նյութական օժանդակությամբ:

■ Աշոտ Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»: Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2003, 1237 էջ (A-4):



Բառարանը պարունակում է արդի հայերենի արևելահայ և արևմտահայ գրական լեզուների 130 հազար բառ և դարձվածքային միավոր: Բացատրվում են հոմանիշների բոլոր շարքերի ընդհանուր և մասնավոր իմաստները, տրվում են նաև առանձին հոմանիշների նրբնաստային տարբերությունները:

Հրատարակությունը հովանավորել է Գալուստ Գյուլբենկյան հիմնարկությունը:

Գիրքը կարելի է ձեռք բերել ԵՊՀ հրատարակչությունում (Երևան, Ալ. Մանուկյան 1, հեռ.՝ 55-28-84):

Խմբագրությունը պատրաստ է այս սյունակում տեղադրել հայությանն առնչվող կարևոր նոր հրատարակությունների հրատարակչական մատենագիտական տվյալները:

գ) Դպրոցի փակումը խախտում է Կառավարության Մեղգոնյանի կտակը (1925).

դ) Կիպրոսի կառավարությունը ցանկանում է, որ ՄԿՅ-ն մնա Կիպրոսում, և արդեն հայտնել է իր պատրաստակամությունը՝ կրկնապատկել դպրոցին հատկացվող արդեն իսկ մշանակալից դրամաշնորհը.

ե) Կիպրոսը, 2004 թվականի մայիսի 1-ից դառնալով Եվրամիության անդամ, ՄԿՅ-ին կտա շատ ավելի նպաստավոր առավելություններ, քան որևէ այլ առաջարկված տարբերակ:

Այսպիսով՝ մենք՝ աշխարհի Մեղգոնյանի շրջանավարտների միությունների համադաշնությունը, կոչ ենք անում համայն հայ ազգին և յուրաքանչյուր հայ մարդու՝ իրենց ուժերի ներածին չափով (թե՛ ֆինանսապես և թե՛ գործնականորեն) օգնելու մեզ մեր պայքարում՝ ուղղված մշակութային եղեռնի դեմ, որ ՀԲԸՄ ԿԿ-ն պատրաստվում է ոճրագործել:

Մենք կոչ ենք անում սփյուռքի յուրաքանչյուր կազմակերպության՝ ամեն կերպ դեմ կանգնել ՀԲԸՄ որոշման իրագործմանը:

Մենք կոչ ենք անում յուրաքանչյուր հայկական թերթի, ամսագրի, կայքէջի, յուրաքանչյուր ռադիոկայանի և հեռուստաընկերության՝ լուսաբանել և տարածել տեղեկություն այն աղետի մասին, որ ՀԲԸՄ ղեկավարությունը մտադրվել է իրագործել:

Մենք կոչ ենք անում յուրաքանչյուր ազդեցիկ հայ գործարարի և քաղաքա-

կան գործչի՝ օգնելու մեզ՝ կանգնեցնելու ՀԲԸՄ ԿԿ-ին և կան աջակցելու մեր գործին՝ ֆինանսապես և գործնականորեն:

Մենք կոչ ենք անում յուրաքանչյուր հայ մարդու՝ աջակցել մեզ հնարավոր բոլոր ձևերով. տեղեկացնել բոլորին իրենց համայնքում այս խնդրի ծալքերի մասին, օգնել՝ բարձրացնելու խնդրի իրագնականությունը և, որտեղ հնարավոր է, Մեղգոնյանցի ինտերնացիոնալի կամ իրենց տեղական Մեղգոնյանի շրջանավարտների միության անունից հանգանակություն կազմակերպել: Ամեն մերդրում՝ ֆինանսական թե բարոյական, սակավ չի կարող լինել:

Մենք ձեռնարկել ենք դրամահավաքի գործընթաց «Մեղգոնյանցի ինտերնացիոնալ հիմնադրամ» անվամբ՝ գումար հավաքելու նպատակով: Բոլոր նվիրատվությունները ծառայելու են դպրոցը մերկայիս վիճակում պահպանելու ցանքերին: Ամեն մի ցեղատարածում, և մենք կոչ ենք անում, որ յուրաքանչյուր հայ մարդ, ով ցանկանում է կանգնեցնել այս նոր սպիտակ եղեռնը, կատարի նվիրատվություն: Դուք կարող եք կատարել ձեր նվիրատվությունը ինտերնետով, բանկային փոխանցումով կամ իրականացնել ամսական կամ շաբաթական վճարներ: Հաշվի համարի տվյալները և նվիրատվության մասին տեղեկություններ կարող եք գտնել մեր կայքէջում՝ www.SaveMelkonian.org:

Անկախ այն բանից, թե ձեր նվիրատը-

վությունը 5, 20 թե 10.000 ԱՄՆ դոլար է, նամակ կան հեռախոսազանգ է հնարավոր դրամատուի կամ կազմակերպության, հեռուստատեսային կամ ռադիոհաղորդում է, հայտարարություն է թեր-



թում կան մեր հարցի բարձրացումն է ձեր կայքէջում, մեր պատասառն է կան թերթիկը հայկական կենտրոններում կամ նամակ՝ ուղղված ՀԲԸՄ ԿԿ-ին, հանգանակություն է ՄԻ-ի հիմնադրամի համար: Ձեր ներդրումը մեր պայքարին կզնահատվի և կմոտեցնի մեզ այս համահայկական դպրոցը փրկելու առաքելության իրականացմանը:

Խնդրում ենք տարածել այս բաց նամակը: Մենք կարող ենք և կփրկենք Մեղգոնյանը: Խնդրում ենք՝ մի՛ ամտեսեք այս կոչը: Արթնացե՛ք և պայքարե՛ք:

Հարգանքներով՝
Մեղգոնյանցի ինտերնացիոնալ
Համակարգող համծնախումբ
www.SaveMelkonian.org
Էլ. փոստ՝ admin@SaveMelkonian.org

ՄԵՆՔ ԵՐԲԵՔ ՉԵՆՔ ՀՈԳՆԻ Սա արդեն համահայկական հարց է

ՀԲԸՄ նախագահ, ՄԿՅ-ի գործարքի գլխավոր ճարտարապետներից Պերճ Սեդրակյանն ապրիլի սկզբին մի քանի օրով հյուրընկալվեց ՀՀ-ում, հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահի, Ամենայն հայոց կաթողիկոսի և այլ պատասխանատուների հետ: ՀՀ նախագահի աշխատակազմի և Մայր Աթոռի դիվանի տարածած հաղորդագրություններում ասվում է, որ Պ. Սեդրակյանը հիշյալ այրերին տեղեկացրել է ՄԿՅ-ի առնչությամբ ՀԲԸՄ կենտրոնական վարչության որոշման մասին: Ինչ-որ տեղ այն միամիտ պատրանքն ունեինք, թե Ռ. Քոչարյանն ու Գարեգին Բ-ը պահանջած կլինեին Պ. Սեդրակյանից վերանայել այս, շատ մեղմ ասած, սխալ որոշումը կամ, առնվազն, մտահոգություն կհայտնեին նման որոշման համար: Բայց ոչ... Ծախու ղեկավարների պատճառով չարագործական միության վերածված ՀԲԸՄ-ից ակնկալվող դոլարների երազը շատ ավելի ծանր է կշռում, քան հայեցի կրթության կարևորագույն հիմնասյուներից մեկի՝ ՄԿՅ-ի փակումը: Ահա թե ինչպիսի «ազգային» աշխարհիկ ու հոգևոր առաջնորդներով է զինված հայությունն այսօր...

ՀՀ այցելության ավարտին իր տված մամուլի ասուլիսում Պերճ Սեդրակյանը փորձեց խույս տալ ՄԿՅ-ի վերաբերյալ հարցումներից և հայաստանցի լրագրողներին ապուշ կարծելով՝ ինքը հայտնվեց հիմար վիճակում:

Մյուս կողմից՝ ՌԱԿ Կենտրոնական վարչությունը Բոստոնում լույս ընծայած իր հաղորդագրությամբ մեղսակից է դառնում ՀԲԸՄ ղեկավարության դավադրությանը: ՌԱԿ ԿԿ դիրքորոշումը լույս տեսավ ՌԱԿ Բեյրութի «Զարթոնք» օրաթերթի

ապրիլի 7-ի համարի առաջին էջի կենտրոնում՝ «Մեր խօսքը. Մեղգոնյանը անցաւ պատմութեան»՝ մեկնաբանության չկարող ստոր վերնագրով: Ավելին՝ ըստ մեր հավաստի աղբյուրների՝ ՌԱԿ-ի համաշխարհային ղեկավարությունը, ավելի ստույգ՝ ՌԱԿ «գորշ կարդինալ», ԱՄՆ Պետական քարտուղարության հետ ամենասերտ կապեր ունեցող Էդմոն Գոդալազյան - երվանդ Ազատյանը իրահանգել է ՌԱԿ-ի աշխարհասփյուռ մամուլին՝ ոչինչ չհրապարակել ՄԿՅ-ն փակել կամ վաճառելու մասին ՀԲԸՄ ԿԿ որոշման դեմ: Սրա հիման վրա «Զարթոնքը» մերժել է հրապարակել իր մնայուն հեղինակներից, լիբանանահայ ծանոթ գործարար ու բարերար Արմեն Հարությունյանի հերթական գրությունը, ուր նա ՄԿՅ-ի հարցով անհաճո սլաքներ էր ուղղել ՀԲԸՄ ղեկավարությանը: Այդ հրապարակումը լույս տեսավ ՄԿՅ Բեյրութի «Արարատ» թերթում: Նույն թերթում լույս տեսավ նաև նույն հարցի մասին ՄԿՅ և ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ, ՌԱԿ անդամ Արմեն Ուրնեշյանի «Ցաւ ի սիրտ - Տխուր խոհեր» քննադատական հոդվածը:

ՌԱԿ դիրքորոշումը և այս «ժողովրդավար» կուսակցության մեջ բացախոսության արգելումը տխուր խոհեր են ծնում, մասնավորաբար՝ ՌԱԿ Լիբանանի շրջանակի և ՀՌԱԿ-ի հերթական պառակտման պայմաններում:

Այրենք և տեսնենք, թե ո՛վ է անցնելու պատմության գիրկը՝ ՄԿ հաստատությունը, թե՞ այն դեռևս չմահացած թաղած-պրծած ՌԱԿ ու ՀԲԸՄ այսօրվա ղեկավարությունները...

«Շրջադարձ»

Ռասել Մինս. «ՉԵՄ ԿԱՐԾՈՒՄ ԱՄՆ-Ը ԵՐԲԵՎԷ ԿԸՆԴՈՒՄԻՆԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

2004 թվականի ապրիլի 7-ին ԱՄՆ Կոլորադո նահանգի Արապահո համայնքային քուլեջում հյուրընկալվել էր Ամերիկայի հնդկացիական շարժման հիմնադիրներից և ղեկավարներից մեկը՝ հոլիվուդյան հանրահայտ «Վերջին մոհիկանը» գեղարվեստական կինոնկարի գլխավոր հերոսի դերակատար Ռասել Մինսը, որին «Վաշինգտոն փոստ» ամսվան էլ «20-րդ դարի ամենամեծ, ամենավառ, ամենաջղային, ամենահայտնի հնդկացի ակտիվիստներից»:

Ռասել Մինսի ելույթը վերնագրված էր «Ամերիկա. ճի՞շտ, թե՞ սխալ», որն ամփոփում էր մի հսկա ժամանակաշրջանի քաղաքական և հոգևոր վերլուծություն՝ սկսած Ամերիկայի «հայտնաբերումից» մինչև Իրաքյան պատերազմ: Հպարտ հնդկացին կարծում է, որ Ամերիկայի փրկությունը մայրիշխանության մեջ է, և որ «Մայր երկիրը [մոլորակը] առանց մարդկության էլ գոյատևել է միլիոնավոր տարիներ»: Անդրադառնալով Իրաքյան պատերազմին՝ 1988 թվականի մախագահի թեկնածու Ռասել Մինսն ասաց. «Մենք երբեք չենք հաղթի այս պատերազմը, և չենք էլ հաղթում. մեծ ստի վրա հիմնված պայքարը դատապարտված է մահվան»: Հետաքրքիր էր նաև հյուրի այն կարծիքը, որ այլ ռասայի կամ ազգի հանդեպ եղած ատելությունը, վախն ու անհանդուրժողականությունը գալիս են այն բանից, որ, պարզապես, այդ «այլոց» չեն ճանաչում, չգիտեն նրանց պատմությունը և սովորությունները:

Իր ելույթից հետո 1974 թվականին ՄԱԿ-ում հնդկացիական միջազգային խորհուրդի հիմնադրած պարոն Մինսն ուրախությամբ համաձայնեց պատասխանել ԱՄՆ-ի՝ Հայոց ցեղասպանության պաշտոնապես ճանաչմանը վերաբերող հարցերի:

«Չեմ կարծում, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները երբևէ

կճանաչի [Հայոց ցեղասպանությունը]... Միակ և միակ բանը, որով շարժվում է Միացյալ Նահանգները, փողոց է: Ուստի, եթե հայերը երբևէ ցանկանում են գրավել Միացյալ Նահանգների ուշադրությունը... Ամերիկան ինքն է ցեղասպան երկիր: Նա չի ճանաչում հնդկացիների ցեղասպանությունը... Երբ նրանք ոչնչացնում էին հնդկացիներին, այդ գործողություններն անվանում էին «ճակատամարտեր»...», - մեկ միտքը չավարտած՝ մյուսին անցնելով՝ ասում էր Ռասել Մինսը: Շարունակելով իր միտքը՝ նա ասաց. «Ճանաչել Հայոց ցեղասպանությունը որպես ցեղասպանություն՝ կնշանակի ֆինանսապես պարտավորեցնել միջազգային հանրությանը... Նույնը՝ Ռուսոյի ցեղասպանության վերաբերյալ»:

Իմ այն հարցին, թե ինչ խորհուրդ կտա Ամերիկայի հայ համայնքին ստիպելու համար կառավարությանը՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, պարոն Մինսը պատասխանեց. «Ես կսկսեի բոլորտել... Եվ ես գիտեմ, որ երկրի որոշ տարածքներում հայկական մեծ շրջանակներ կան՝ ինչպես Գլենդեյլում, Հարավային Կալիֆոռնիայում և այլ վայրերում... Հիշեք, որ 1960-ական թթ. Ամերիկայի սևամորթներն արժանացան հանրության ուշադրությանը տնտեսական բոլորտի շնորհիվ: Կարծում եմ՝ հայերը պետք է նույն կերպ վարվեն: Եվ դուք ունեք գործիքները: Ես գիտեմ, որ հայերն աշխատասեր և կրթված մարդիկ են: Այսպիսով՝ դա մեծ հարված կլինեք...»:

«Բայց երբ ընտրեք բոլորտը, ուշադիր եղեք, թե ո՞ւմ եք բոլորտելու և ինչո՞ւ», - եզրափակեց «հնդկացիների Մարտին Լուիթեր Քինգ» Ռասել Մինսը:

**Միոն Սաղաթյան
Դենվեր, Կոլորադո, ԱՄՆ**

← **Էջ 7** մվիրվածության մասին: Մի դրվագ եմ ուզում հիշել: Շուշիի գործողության ժամանակ ես գլխավորում էի այն խումբը, որը պիտի շրջանցեր բերդաքաղաքը, և շուրջ 20 ժամ պիտի քայլեինք՝ անցնելով սարեր, ձորեր: Ճանապարհից առաջ շարել էի մարտիկներին, բացատրում էի մեր անելիքը: Ասացի, որ դժվարություններ պիտի հաղթահարենք առաջիկա ժամերի ընթացքում, ովքեր առողջական դժվարություններ ունեն, խնդրում եմ դուրս գան շարքից, ամոթ չէ: Բացատրում էի, որ վիրավորներին բռնվազն վեց-յոթ ժամվա ընթացքում հազիվ կարողանալու ենք հասցնել դաշտային հիվանդանոց: Չէր բացառվում, որ նույնիսկ թեթև վիրավորը մահանար:

Այս բոլոր բացատրությունները նրա համար էին, որ անակնկալի չգան. ֆիզիկական տկարություն ունեցողները ծանրացնելու էին իրավիճակը: Պատկերացրեք՝ 170 հոգուց ոչ ոք շարքից դուրս չեկավ: Այսինքն՝ ամեն ինչ չէ, որ պայմանավորված է տեխնիկայով: Բերենք Միջին Արևելքի օրինակը: Իսրայելի բանակը հնարավորություն ունի որևէ մի ճակատից ընդամենը չորս ռոպեի ընթացքում իր վիրավոր զինվորներին դուրս բերել մարտի դաշտից: Բայց այսօր ես համոզված եմ, որ իսրայելցիները պարտվելու են: Իսրայելցի զինվորը քաջ չէ, կասեի՝ վախկոտ է. ոգի չկա Իսրայելի բանակում: Իրենց տեխնիկայի և կազմակերպվածության շնորհիվ ժամանակավորապես կարո-

ղանում են լուծել իրենց խնդիրները: Ամբողջական լուծում տալ չեն կարողանա, որովհետև պաղեստինցիները ոգի կրող ժողովուրդ են, իսկ նրանց ոգին անընդհատ հզորանում է՝ մշտապես զարմացնելով բոլորիս:

Մենք չպետք է ընկճվենք այն բանից, թե մեր հակառակորդը մի օր կարող է լինել այնպիսի մի երկիր, որի բանակը հազեցած լինի գերժամանակակից տեխնիկայով, իսկ մենք զիջենք նրան: Դրանք երկրորդական են: Կարևորը ոգին է: Եվ ինչ-որ անում ես, պետք է հավատասա հաղթանակիդ, համոզված լինես, որ արդար է քո գործը: Ուժը դրա մեջ է:

Հասմիկ Գուլակյան

← **Էջ 22** Հայ եկեղեցու միջև կնքված 2001թ. հուլիսի համաձայն՝ Հայ եկեղեցուն բացառիկ իրավունք է վերապահված՝ մասնակցելու ՀՀ-ում հանրակրթության կազմակերպմանն ու նրա խնդիրների լուծմանը: Դրանից հետո պե՞տք է, արդյոք, զարմանալ, թե Կրթակարգի նախագծում՝ կրթության առարկաների շարքում էի, բացակայում է «Հայ եկեղեցու պատմությունը», առարկա, որը ներդրվեց միայն այս ուսումնական տարում: Այս բացթողումը մատնանշելիս՝ Կրթակարգը մշակողները, իրենց հերթին,

ցույց են տալիս Կրթակարգի այն դրույթը, թե ՀՀ դպրոցներում աշակերտները դաստիարակվելու են նաև քրիստոնեական արժեքներով: Ի՞նչ «քրիստոնեական արժեքների» մասին է խոսքը: Չէ՞ որ եհովայականները, մորմոնները, հոգեզալստականներն ու այլազան աղանդների մեծ մասն իրեն հայտարարում է ոչ միայն քրիստոնեական, այլև միակ, իսկական քրիստոնեականը...
«Հանրակրթության պետական կրթակարգը» ենթակա չէ վերախմբագրման, փոփոխության, թերությունների ու սը-

խալների վերացման և նման աճապարտությունների: Այն՝ որպես հայոց ազգային անվտանգությանն ու ՀՀ պետական անվտանգությանը լրջորեն սպառնացող փաստաթուղթ, պետք է հանգրվանի միայն... պատմության աղբամոցում:

Հարկավոր է կազմել նոր նախագիծ՝ հիմնված միայն և միայն ազգային արժեքների վրա, ինչո՞ւ չէ՝ հաշվի առնելով արտասահմանյան, այդ թվում՝ նաև սփյուռքահայ տարբեր կրթօջախների առողջ փորձը:

Վևորգ Յազըճյան

«ԱՐԾԻՒ»-Ի ՃԱԽՐԱՆՔԻ ՏԱՄՆԱՄԵԱԿԸ



Այս տարուան մարտ ամսուն, լիբանանահայ «Արժիւ» գրական, մշակութային, կրօնական եւ ընկերային շաբաթ-թերթը բոլորեց իր տասնամեակը: Թէեւ «շաբաթաթերթ», պարբերականը լոյս կը տեսնէ ամսական պարբերականու-թեանը, Ա-3 չափի 16 էջ ծաւալով: Թերթի արտօնատէրն է Սեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան, Կիլ-րոսի թեմի Կաթողիկոսական Փոխանորդ, Լիբանանի Հանրապետութեան քաղաքացի Վարուժան (աշխարհական անունով՝ Պօղոս) Արք. Հերկէլեանը: «Արժիւ»-ը իր էջերուն մէջ լայն տեղ կը յատկացնէ հայրենի գրողներուն, մանաւանդ նոր անուն-ներուն: «Արժիւ»-ի փայլը, սակայն, անոր հրապարակագրութիւնն է: Յատկապէս նշելի է Արա Արծրունիի կուռ, խիստ, բայց անաչառ հրապարակագրութիւնը:

«Շրջադարձ»-ը ջերմօրէն կ'ողջունէ իր գործընկեր «Արժիւ»-ը՝ տասնամեակին առթիւ, ու անոր մաղթելով արծիւային աւե-լի՝ բարձր ճախրանք, յարատեւութիւն, անոր Մարտ 2004-ի թիւէն կ'արտատպէ երկու գրութիւն, որոնք պատկերացուն կու տան «Արժիւ»-ի հրապարակագրութեան մասին:

Առաջին գրութիւնը կը պատկանի Արա Արծրունիի գրիչին: Ան հայրն է Արցախի շրջաններու վերաբնակեցման նպատակը հետապնդող «Երկիր» միութեան ղեկավար, Մարտակերտի շրջանի վարչակազմի երբեմնի ղեկավար Սեւակ Արծրունիի եւ «Դրօ»-ի գործով քաւութեան նոխազ դարձուած, ՀՀ-ի մէջ ցմահ բանտարկութեան դատապարտուած Արսէն Արծրունիի:

Երկրորդ հրապարակման հեղինակն է Վարդան Թաշճեանը: Ան եղած է ԼՂՀ երբեմնի պաշտպանութեան նախարար եւ բա-նակի հրամանատար Սամուէլ Բաբայեանի ամենամօտիկ անձերէն մէկը, եւ ամբաստանուելով ԼՂՀ նախագահ Արքատի Դու-կասեանի դէմ 11 Մարտ 2000-ի մահափորձի մեղսակցութեան մէջ, ժամանակ մը ազատազրկուելէ ետք արտաքսուած-աք-սորուած է Լիբանան, ուր ներկայիս կը զբաղի ուսուցչութեամբ Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարանին մէջ, խմբագրելով դպրոցի «Մեսրոպեան Լրաբեր» պարբերաթերթը:

«Շրջադարձ»

Կիրակի, 22 Փետրուար, 2004:
Առաւօտեան ժամը վեց:

Զխանգարելու համար տնեցիներու կիրակնօրեայ հանգիստը՝ անձայն կը

մտնեն հիւ-րասենեակ ու պատու-հանից ապակիին ետեւէն կը

դիտեն դուրս: Փոթորիկը կ'ալեկոծէ Մի-ջերկրականի լիբանանեան ծովը ու ծա-ռերու ճիւղերը ենթարկուած են փոթորի-կի ծաղերուն: Սոխրագոյն երկինք-տխուր առաւօտ:

Բնութիւն. Աստուած. դիպուած:
Լաւ է անջատուիմ այս անլոյծ մտա-ծումներէն ու միտքս փոխադրեմ ուրիշ տեղ:

Հեռատեսիլ. «Հայլուր». հետաքրքրա-կան յայտագիր. Թիֆլիսի հայ գաղութի անցեալի պատմութիւնը... եւ ներկան:

Տխո՛ւր..., տխո՛ւր...:
Թիֆլիսի հայ գաղութի փառահեղ ան-ցեալէն մնացեր է միայն պատմութիւն...:
Մնացեր են գերեզմաններ, որոնց վրայ կան անուններ..., անցեալի փառ-քե՛ր:

Եւ տակաւին կան ճամբաներ, որոնց տեղը կային գերեզմաններ...:
Եւ հայապատկան պատմական առեւ-

տրական շէնքեր, որոնք այսօր աւեր-ւած են, կամ՝ կիսաւեր, կամ... անյա-տացած...:

Եւ եկեղեցիներ՝ պարպուած...:

քաղաքական դէմք մը: Չորցած ար-մա՛տ...:

«Ես հայ եմ» ռուսերէնով կ'ըսէ ան-ցորդ կին մը: Անցո՛րդ...:

« Ն ա տ ի - ան..., Յով-հաննէս Թու-մ ա ն ե ա ն ի թոռնուհին..., կը բնակի հոն,

ԱՐԴԵՕՔ ՄՆԱՔ ԲԱՐԵԱՒ... ՍՓԻՒՈՔ «ԱՐԴԵՕՔ ԶՈՒԼԱՐԱՆ Է ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ»

Բազմատասնեակ դպրոցներէն կը գործեն միայն երկուքը...:

Եւ Թիֆլիսի հայ թատրոնները, ուր Սունդուկեան, Շիրվանզադէ, Սելուն-եան, Պռոշեան, Փափագեան եւ ուրիշ-ներ Հայ Թատրոնի փառքը հիւսեցին..., չկա՛ն, չկա՛ն...: Կայ հայ թատրոն մը, որու պատասխանատուն... ռուսերէնով կը պատասխանէ «Հայլուր»-ի հարցում-ներուն...:

Եւ Թիֆլիսի անցեալի գրական կեան-քը..., «Վերնատուն», Թումանեան, Ա-ղայեան, Իսահակեան, Դեմիրճեան, Լեօ, Նար-Դոս, Շանթ...: Այժմ ոչինչ, ոչինչ...: Ո՛ւր են անոնց ժառանգորդները...:

Խոշոր գերեզմանատուն մըն է Թիֆլի-սի հայ գաղութը, ուր՝ տապանաքարե-րու միջեւ՝ կը շրջագային ու կը հիծին հայուն վերջին ժառանգորդները..., խօ-սելով ռուսերէն ու վրացերէն...:
«Արմատներս հայ են» ըսած է վրացի

վերը...»: Նատիա՛ն...: Իսկ վե՛րջը...:

Թիֆլիս անցեալին ուներ մօտ կէս մի-լիոն հայ բնակիչ: Այժմ, յիսուն-վաթսուն հազար..., մեծամասնութեամբ ռուսա-խօս կամ վրացախօս...: Ո՛ւր գացին միւս հայերը..., Հայաստա՛ն...: Ո՛չ, անոնք գացին դէպի օտար ափեր, դէպի ձուլում...:

Թիֆլիսը՝ այսպէս...:
Պաքուն՝ չորս հարիւր հազար հայե-րով..., այնպէ՛ս...:

Գահիրե՛՛ երեսուն հազար հայ..., Թեհ-րան՝ երկու հարիւր հազար հայ..., Հա-լէպ՝ հարիւր հազար հայ..., Պէրլուք՝ եր-կու հարիւր հազար հայ..., Իրաք..., Թուրքիա..., Պալքանեան երկիրներ..., գացի՛ն, գացի՛ն, գացի՛ն ու ինկան Մի-ացեալ Նահանգներ..., Գանատայի եւ Աւստրալիայի հսկայ ձուլարաններու կաթսաներուն մէջ...:
Վերոյիշեալ տկարացող գաղութներն

ալ՝ իրենց կարգին վերածուեցան ձուլարաններու կաթսայի...:

Լուս Անճելոսի, Մոնթբելի, Նիւ Եորքի, Թորոնթոյի, Սիտնիի ու այլ օտար ձուլարաններու մէջ «հայապահպանում» կը խաղանք...: Կեղծիք, կեղծիք...: Մէկ սերունդ... մէկ ու կէս սերունդ...: Տխուր կատակերգութիւն մը, որ դատապարտուած է ողբերգական վերջի...:

Ո՛ր է հնդկական անցեալի բարգաւաճ ու հարուստ գաղութը...: Ի՞նչ մնաց անկէ...: Ոչինչ, ոչինչ...:

Մնաք բարեա՛ւ...: Այս պահուս չեմ գիտեր, թէ ո՞վ է «մնաք բարեալ» ըսողը: Ե՞ս՝ Սփիւռքին, թէ ոչ կաթսային մէջ ձուլուող Սփիւռքը՝ Հայաստանին...:

Մնաք բարեա՛ւ... Հայաստան կամ հնդկահայ «Սփիւռք»...:

Մնաք բարեա՛ւ... Հայաստան կամ վրացահայ «Սփիւռք»...:

Եւ շուտով, դուք՝ պարսկահայ, սուրիահայ, եգիպտահայ, լիբանանահայ հին ու շէն գաղութներ...:

Եւ տակաւին, ոչ թէ մենք՝ այլ Սփիւռքն է, որ կ'ըսէ. «Մնաք բարեալ, Հայաստան...: Մնաք բարեալ հայութիւն...»: Եւ տակաւին՝

«Ողջոյն» քեզ, ձուլարան...: «Ողջոյն» քեզ, ողբերգութիւն...:

Եւ տակաւին... տակաւին...:

Ինչպէ՞ս հանդուրժել, ինչպէ՞ս չտագնապիլ, ինչպէ՞ս չընդվզիլ... երբ վերջին տասնըջորս տարիներուն, աւելի քան մէկ միլիոն հայեր մեկնած են Հայաստանէն դէպի օտար ափեր..., դէպի Ձուլարան...:

Կ'արիւնի սիրտս ու հարց կու տամ յուզումով.

«Արդեօք Ձուլարան է մեր հայրենիքը»:

Հայ Սփիւռքը ինքզինքը չարդարացուց: Ոչ ալ՝ Հայաստանը:

Հայութեան վերջին հարիւրամեակի պայքարը չպատկարարուեցաւ յաղթանակով եւ հայրենադարձով:

Ո՛չ, թուրքը չէ հայուն մեծ թշնամին:

Ազերիին չէ հայուն մեծ թշնամին:

Օտարի քաղաքականութիւնը չէ հայուն մեծ թշնամին:

Հայր, հայր, ես ու դուն, մեր հայրերը, մեր պապերը, մեր կղերն ու ղեկավարներն են հայուն Մեծ թշնամին:

Միշտ դէպի դուրս. միշտ դէպի օտար ափեր, ուր կայ մամոնայ, կայ տաքուկ տուն, «ծափ-ծափ», հայրենասիրական երգ, հայկական խորոված, աթոռապայքար, պերճանք, խարտեաշահեր կին...:

Այս է այսօրուայ հայկական Սփիւռքը: Այս է նաեւ Հայաստանէն մեկնած մէկ միլիոն հայերու «երազը»..., եսակեդրոն «երազը»...:

Այս է խորքը, իրականութիւնը:

«Հայրենասիրութիւն»..., «Հայապահպանում»..., «Ազգասիրութիւն»..., «Ո՛վ հայրենիք, կը սիրեմ քեզ»..., ..., կեղծիք..., վարագոյր..., կեղծիք...:

Հսկայ հոսք՝ դէպի մեծ ձուլարաններ...:

Պէտք է թիավարել հոսանքին դէմ: Դէպի Հայրենիք:

Հայրս ծնաւ Վասպուրականի Վան քաղաքին մէջ, ու թաղուեցաւ Հալէպ: Աւա՛ղ...: Եւ նաեւ՝ պարտութիւն:

Մայրս ծնաւ Հայկական Բարձրաւանդակի Կարին քաղաքին մէջ, ու թաղուեցաւ Պէյրութ: Աւա՛ղ...: Եւ նաեւ՝ պարտութիւն...:

Ես՝ ո՞ր...:

Ո՛չ, թողնելու պիտի ապրին Հայաստանի մէջ: Հոգ չէ թէ հոն քիչ է հացը. ցուրտ է բնութիւնը. ցած է կենսամակարդակը...: Բայց, բայց հոն կայ հող, հայրենի հող, հող, որ կը տաքցնէ էութիւնը...: Հոն կայ իրա՛ւ հայ մշակոյթ, իրա՛ւ հայ երգ: Հոն կայ ժայռ, լէռ, կայ Արարա՛տ... թէկուզ գրաւեալ... Եւ հոն կայ գրաւեալ Արարատի տազնապը...: Հոն կան հայկական իրա՛ւ սահմաններ, իրա՛ւ ազատամարտիկներ...: Հոն կայ ազգային վերականգնումի հարց, որ կ'իմաստաւորէ հայու գոյութիւնը...: Հոն կայ վեհ պայքար՝ իր Ղարաբաղեան հարցով, Նախիջեւանով, Ջաւախքով... ու հոն կայ մնայուն ճակատ թուրքին դէմ՝ Արեւմտահայաստանի պահանջատիրութեամբը:

Թողնելու պիտի ապրին Հայաստանի մէջ:

Թողնելու պիտի ապրիք Հայաստանի մէջ:

Այս է կտակը: Ժառանգը:

Տեսլականը: Ահագա՛նգ թէ մահագանգ... Արդեօ՞ք, մնաք բարեալ, Սփիւռք...:

Իրա՛ւ ու ճշմարիտ հայրենասիրութիւնը՝ հայրենադարձութիւնն է հարկաւ:

Արա Արծրունի

ԾՆՄԵՆՈՒ ԶՄԱՅՈՒ ՅԱՆ, ԻՅՈՒ ՅԱՆ ԵՕԾ.

Գ իտեմ բազմաթիւ ընտանիքներ, Արցախի թէ Հայաստանի մէջ, որոնք անցած 10-12 տարիներուն իրենց յարկերուն տակ ծնած արու գաւակները կոչեցին Ժիրո՝ ի պատիւ Արցախեան Ազատամարտի ամենավաւերական հրամանատարներէն Ժիրայր Սեֆիլեանին:

Գ իտեմ ու տեսած են շատեր. երիտասարդ թէ ծեր՝ Արցախի թէ Հայաստանի մէջ, ովքեր հաւաստիացում մը ամենաորոշակիութեամբ կնքելու համար երդուած են «Ժիրոյի արեւով», այդ անունին մէջ դնելով Ժիրայր Սեֆիլեանի հանդէպ ունեցած սիրոյ ամբողջ արեւը:

Վ կայ եմ այն տարիներուն, 1991-ի Արցախեան բռնկումէն մինչեւ 94-ի զինադադարը, ու անկէ ետք՝ 97-98-ի խաղաղ բանակակառուցման շրջանը, երբ Ժիրայր Սեֆիլեանը՝ իր ղեկավարած Շուշիի գումարտակով ու անկէ սերած Արցախեան 6-րդ ամենատազնապոտ պաշտպանական շրջանի սպայական կազմով, մեր ազգի ռազմական նորագոյն փորձառութեան մէջ հաստատեց հրամանատարի ինքնուրոյն չափանիշներ՝ թէ՛ ճակատամարտի ղեկավարման, թէ՛ պատերազմելու բարոյականին, թէ՛ իր զինուորին, իր ազգակիցին ու իր թշնամիին հետ վարուելակերպին, եւ թէ՛ բանակ կառուցելու հոգեմաշ առաքելութեան ու այդ բոլորը՝ դաշնակցական (այժմ՝ անկուսակցական - խմբ.) անկեղծ զինուորի քաջութեամբ, ազնուութեամբ, հայրենասիրութեամբ եւ հաւատքով:

Ա կայն ես տակաւին չլսեցի, որ որեւէ հայ ընտանիք իր նորածին տղան «Ռոպերթ» կոչած ըլլայ՝ ի յարգանս Քո-

չարեանին, կամ որեւէ ալեհեր երդնու «ներկայ նախագահի արեւով», կամ հայ-ազերիական որեւէ թէկուզ ամենամանջան զինեալ բախումի մասին, որ անցած ըլլայ հրամանատարութեան տակ Ռոպերթ Քոչարեանին:

Ի սկ հիմա Սեֆիլեանը Հայաստանի քաղաքացիութեան իր դիմումին մէջ Հայաստանէն մերժուածն է, ու նախագահը (Քոչարեան)՝ Հայաստանի անունով մերժողը: Որովհետեւ օրէնքը այդպէս կ'ըսէ՝ «Յանուն Հայաստանի Հանրապետութեան՝ նորոնմանը ղեկավար Հանրապետութեան շնորհում են Մետրոպ Մաշտոցի բարձրագոյն շքանշան, իսկ Ժիրոն թող աչքիս չէրեալ» (ընդգծումը մերն է - խմբ.): Այսպէս, նախագահը միայն քայլով մը եւս կ'օտարանայ իր երկրէն, իր ժողովուրդէն, երկրէն ու ժողովուրդէն անոնց հարազատ գաւակը օտարացնելու այս ահաւոր քայլով: Այստեղ ամենամեծ հարուածը ուղղուած է Հայաստանի մէջ «իրաւական պետութեան» երազին, Հայաստան-Սփիւռք իրական, ոչ խորհրդաժողովական միասնութեան գաղափարին, Արցախեան ազատամարտի նպատակներուն, մէկ խօսքով՝ ազգի բարոյականին:

Ժիրայր Սեֆիլեանը որպէս անհատ, ի վերջոյ կորսնցուցած բան չունի նախագահի ուրացումին մէջ: Շահողը (ինչպէս միշտ)՝ դարձեալ նախագահն է, եւ ինչպէս յատկապէս վերջերս՝ շահածը սեւ կէտ մը եւս դժբախտաբար, զոր մաքրաջրելու առիթը, բարեբախտաբար, Աստուծոյ կողմէ միշտ բաց կը մնայ իր առջեւ...

Վարդան Թաշճեան

ՀԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

Հաղորդ... Համանուն շրջանի վարչական կենտրոնն է 1923 թվականից: «Հաղորդ» նշանակում է գետամեջ. բնակավայրը գտնվում է Դիզափայտ լեռնաճյուղերից սկիզբ առնող երկու գետակների միախառնման վայրում: Արցախի հնագույն բնակավայրերից է: Հաղորդում պահպանվել են հեթանոսական և վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի բազմաթիվ քարե հուշարձաններ: Ավանի կենտրոնում՝ աղբյուրի մոտ, հպարտ կանգնած է Արցախի ամենատարեց սուսիներից մեկը՝ շուրջ 800 տարեկան: Այս ծառին, ինչպես Մխտորաշենի երկհազարամյա սոսուն, արցախցիները վերաբերվում են իբրև սրբության: Այդ գողտրիկ բնակավայրի անունը, տարիների ընթացքում բերանից բերան զարկվելով, փոփոխվելով պահել ու պահպանել է իր նկարագիրը: Նրա բնակիչների մի մասը, ըստ Մակար Եպս. Բարխուդարյանցի, բնիկներ են, մյուս մասի նախնիներն էլ գաղթել են Ղազանչիից (Գողթան գավառից), Բարգուշատից, Ղարադաղից, Թիֆլիսից: Թիֆլիսից են գաղթել նաև իմ ակնարկի հերոս Ռոբերտ Արտյոմի Դավթյանի նախնիները...

ԱՅՍ ՏԱՆԸ 1862-1917 ԹԹ. ԱՊՐԵԼ Ե ԼՆՎԱՆԻ ՀԵՂՎՈՒՄԱԿԱՆ ՇՄԱԿՈՆ ԴԱՎԹԻ ԴԱՎԹՅԱՆԸ



Պատմական տան այսօրվա տեսքերը

Ավանդապաշտ, պատվախնդիր ու հյուրասեր, ինչպես օջախի, այնպես էլ Դավթյան գերդաստանի ողջ պատմությանը քաջատեղյակ են շատ հաղորդագրեր: Նման մի հնարավորություն էլ, թերևս, տալիս ենք մեր ընթերցողին:

Դավթյան գերդաստան-տոհմածառի առաջին ճյուղը Թիֆլիսում, Պարսկաստանում և Շուշիում հայտնի առևտրական խոջա Ստեփանն է՝ ծնված 1726 թ.: Երբ առաջին անգամ գործի բերումով այցելում է Հաղորդ, գալիս ու մնում է: Հաղորդը և շրջակա բնությունը նրան շատ են դուր գալիս: Ամուսնանում է: Ունենում է 9 զավակ՝ Բաղա, Միքայել, Սահակ, Գափի, Օհանջան...., իսկ մեծ տղան՝ Աթանը, էլ իր հերթին՝ 5 տղա՝ Արամ, Արտյոմ (Ռոբերտի հայրը), Շնավոն, Աբրահամ...

Հաղորդի կեսը խոջա Ստեփանի տղաներն ու թոռներն են լինում: Նրանք էլ, հոր ձեռնարկն ընդարձակելով, օգնելով մարդկանց՝ հաստատվում են Հաղորդում և այնքան մեծ սեր ու հարգանք վաստակում, որ խոջա Ստեփանը մահից հետո արժանանում է Հաղորդի եկեղեցու բակում թաղվելու պատվին: Ասում են, չէ՞, որքան զավակ՝ այնքան էլ՝ դարդ ու ցավ... Գնականագիրը նրա թոռների համար բարեհաճ չէր: 1917թ. Եվլախում դավադրաբար սպանվում է Արամը, իսկ Աբրահամը, Շուշիում ուսանելու ժամանակ՝ հայ-թուրքական պատերազմի ընթացքում, երկար մնալով խրամատներում, թոքերից հիվանդանում ու մահանում է:

Անխռով չանցավ նաև Շնավոնի կյանքը: Նիկոլայ ցարի օրոք էր: Ծառայում էր բանակում: Կուսակցության անդամ էր, այնուհետև՝ Հաղորդի կուսակցության ղեկավար: Բոլշևիկ-մենչևիկյան սադրանքի զոհ է դառնում եղբոր՝ Արտյոմի (Ռոբերտի հոր) հարսանիքի օրը: Սադրիչները նրա դին հենել են պատին ու շուրջպար բռնել: Այսօր նրա կիսանդրին դրված է Արթուր Մկրտչյանի անվան թանգարանում:

Այդպես մեկիկ-մեկիկ ճղակոտոր է լինում Հաղորդում հայտնի այդ գերդաստանի տոհմածառը, որից մնացել էր միայն Արտյոմը: Ռոբերտի հորը՝ Արտյոմին էլ բաժին է հասնում 1937թ. աքսորը: 1942թ. 22-ամյա Ռոբերտը կամավոր մեկնում է ռազմաճակատ, կռվում մինչև վերջ, հասնում Բեռլին: Զո-

րացրվում է 1946թ.: «Սև թուղթն» իրենից շուտ է հասնում, բայց ճակատագիրն այս անգամ բարեհաճ է գտնվում: Ու ճիշտ է՝ երկրորդ կարգի հաշմանդամ, բայց վերադառնում է ինը տարի անց: Երբ որդին գնում է հորը տեսության, ճանաչում է միայն այրված ձեռքից: Վերադառնում է, որպեսզի իր հոր ու հորեղբոր՝ Շնավոնի տան դուռը փակ չմնա: Եվ այսօր էլ իր տիկնոջ՝ արդեն կես դար այդ օջախի հլու-հնազանդ հարս տիկնոջ Աշխենի հետ իրենց տուն մտնողներին, թոռներին, ծանոթ-անծանոթին պատմում այդ պատերի ներսում շուրջ մեկուկես դար շարունակ տեղի ունեցող իրադարձությունների մասին: Պատմում են դեպք առ դեպք, մեկը մյուսին լրացնելով, իսկ այդ առեղծվածային պատմության վերջակետը դրվեց այս տան նկուղում, որտեղից 6 մ երկարությամբ և 4 մ լայնությամբ մի գաղտնարանի դուռ է բացվում ճանապարհի տակ: Գաղտնարանը հայտնաբերվել է շենքի վերակառուցման ժամանակ: Այն սկսել են կառուցել 1862թ., և տևել է շուրջ 14 տարի: Թե ինչ նպատակով է կառուցվել գաղտնարանը, մինչև հիմա հայտնի չէ անգամ այնտեղ ապրողներին, բայց որ արցախյան գոյամարտի ժամանակ փրկություն է եղել ինչպես Ռոբերտի ընտանիքի, այնպես էլ հարևանների և շատ հաղորդագրերի համար, գիտեն շատ շատերը:

Թշնամու արկն ընկել է շենքի վրա, կիսով ավերել այն, բայց գաղտնարանում ապաստանած մարդիկ ողջ և առողջ են մնացել:

Ամենակն դժվար չէ կռահել, թե 1800-ական թվականներին կառուցված այս տան հիմքում ինչ նպատակով է կառուցվել գաղտնարանը: Թերևս հարկ է հիշել Աղբյուր Սերոբի՝ «Սուլ-



Զոհված ազատամարտիկների հուշակոթողը Հաղորդի շրջանի Բանաձոր գյուղում

թանի երկրում առանց հացի մնացե՞ք, առանց զենք մի՛ մնացե՞ք» հորդորը: Ասել է թե՛ շան հետ ընկերություն արա, բայց մահակո վայր մի՛ դիր... Իսկ թե ինչ է եղել, երբ մահակո վայր ենք դրել կամ էլ փեշի տակ զենք ունեցել, պատմությունից մեզ հասած շատ օրինակներ կան: Այս

ՀԱՅ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐԻԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՆՉԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ



Ս. Իսկանդարյան
Ք. Գ. Ք., դոցենտ

Ազգային և համաշխարհային գրականությունը գտնվում են դիալեկտիկական սերտ կապի մեջ՝ ներկայացնելով ընդհանուրի և մասնավորի այնպիսի փոխհարաբերություն, որտեղ մասնավորը՝ առանձինը, գոյություն չունի այլ կերպ, քան այն կապակցության մեջ, որը տանում է դեպի ընդհանուրը, իսկ վերջինս գոյություն չունի այլ կերպ, քան մասնավորի մեջ, մասնավորի միջոցով:

«Համաշխարհային գրականություն» եզրույթն առաջին անգամ օգտագործել է 1791թ. գերմանացի գրականագետ Փետրոզ Ֆորստերը: Սակայն հասկանալի է, որ համաշխարհային գրականությունը՝ որպես գրական գործընթաց, ձևավորվել է դեռ վաղնջական ժամանակներում: Բայց եթե մի որոշ ժամանակ այդ գործընթացը փակ, ազգային բընույթ էր կրում, ապա բուրժուական դարաշրջանում, տնտեսական ու մշակութային կապերի զարգացման ու ընդլայնման հետ, բազմաթիվ ազգային ու տեղական գրականություններից կազմավորվում է համաշխարհային գրականությունը: 1827թ. էքերմանի հետ զբոլայցներից մեկում Գյոթեն շեշտում է. «Ազգային գրականությունն այժմ մեծ նշանակություն չունի. հիմա համաշխարհային գրականության դարաշրջան է, և յուրաքանչյուրը պետք է նպաստի այդ դարաշրջանի արագ հայտնմանը»:

Համաշխարհային գրականության բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ ուրիշ ազգերի ստեղծած գրական հուշարձաններին մենք ծանոթանում ենք թարգմանությունների միջոցով, և հենց այդ պատճառով է այն համաշխարհային գրականություն, որ դուրս է գալիս ազգային լեզուների շրջանակից և իր գաղափարական բովանդակությամբ հասկանալի դառնում բոլորին:

Իսկ ի՞նչ է նշանակում այստեղ «աշխարհի» բառը: Արդյո՞ք այն նկատի է առնում գրականության տարածականությունը կամ կարելի՞ է ասել, թե համաշխարհային գրականությունն ազգային գրականությունների գումարն է: Իհարկե՞ ոչ: Համաշխարհային է կոչվում այն գրականությունը, որն արտացոլում է աշխարհի զարգացման պատկերը, այսինքն՝ մարդու, մարդկանց միջև եղած հարաբերությունների և շրջապատող աշխարհի նկատմամբ նրանց վերաբերմունքը՝ բացելով խոշորագույն հիմնախնդիրներ: Այս առումով

ամեն գրող ու գրականություն չէ, որ մտնում է համաշխարհային գրականության մեջ: Բանն այն է, որ վերջինս, ներառելով մարդկության ողջ պատմության ընթացքում այս բնագավառում ստեղծված լավ ու լավագույնը, ունի իր օբյեկտիվ, խիստ չափանիշները, և գրողի ցանկությունը կամ գրականագետի կամքը որևէ նշանակություն չունեն: Բնորոշ է ռուս գրող Նիկոլայ Գոգոլի «դեպքը», որի «Մեռած հոգիները» ժամանակի քննադատներից ոմանք «Իլիականին» հավասար գործ էին համարում և թույլ տալիս նրա կողքին դնել միայն Հոմերոսի և Շեքսպիրի անունները: Հանդես գալով խիստ հողվածով Վիսարիոն Բելինսկին շտապեց ցրել նրանց պատրանքները՝ ասելով. «Ոչ ոք չի կարող բարձր լինել դարից ու երկրից, ոչ մի պոետ (այսինքն՝ գրող - Ս. Ի.) չի յուրացնի բովանդակություն, եթե այն չի պատրաստել և մշակել պատմությունը: Պուշկինի երկերից շատ քչերը կարող են վերարտադրվել օտար լեզվով՝ իրենց ձևի հետ չկորցնելով սուբստանցիոնալ արժանիքները, բայց Գոգոլից հազիվ թե որևէ բան կարելի լինի փոխադրել... «Մեռած հոգիներն» «Իլիական» արժեն, բայց միայն Ռուսաստանի համար, իսկ մնացած բոլոր երկրների համար նրա նշանակությունը մեռած է և անհասկանալի»:

Խորհրդածելով այն հարցի շուրջ, թե ինչն է գրողին բարձրացնում իր գրչակիցներից և հնարավորություն տալիս մտնել համաշխարհային գրականության Պառնաս, Բելինսկին տալիս է հստակ չափորոշիչներ: «Մեծ գրողը, նկատել է նա, երկու բաղադրիչ կողմ ունի՝ տաղանդ և ոգի կամ բովանդակություն: Հենց այդ բովանդակությունն էլ չափանիշ պետք է լինի մեկ պոետին մյուսի հետ համեմատելու համար: Միայն բովանդակությունն է պոետին դարձնում համաշխարհային. հենց դա է պոետական փառքի բարձրագույն կետը, գեներիթ... Համաշխարհային պոետը չի կարող մեծ պոետ չլինել. սակայն մեծ պոետը կարող է դեռևս համաշխարհային պոետ չլինել»:

Հարցը որոշակիացնելով հայ գրականության վերաբերյալ՝ տեսնենք, թե մեր գրականությունն ինչպես է հարաբերվում համաշխարհայինի հետ, բավարարո՞ւմ է, արդյոք, վերոհիշյալ բարձր չափանիշները, թե՞ այն արժեք է ներկայացնում սոսկ պատմության առումով: Դրանով իսկ պատասխանած կլինենք նաև հետևյալ կարևորագույն

հարցին՝ մենք՝ հայերս, նպաստե՞լ ենք համաշխարհային փորձի հարստացմանը, որքանո՞վ են այն ընդունում և զ ն ա հ ա տ ու մ մյուսները, թե՞ պարզապես եղել ենք խելացի աշակերտի դերում:

Ինքնատիպ երևալու ձգտումը չէ, որ մեզ ստիպում է արժանագրել այն հանգամանքը, թե ինչպես մեզ մոտ՝ Հայաստանում, այնպես էլ արտասահմանում ընդունված պատկերացումը համաշխարհային գրականության գարգացման ընթացքի մասին, այնքան էլ ճիշտ չէ և չի համապատասխանում օբյեկտիվ իրականությանը: Ահա թե ինչու:

Ինչպես առհասարակ մարդկության պատմությունը, այնպես էլ, մասնավորապես, համաշխարհային գրականության պատմությունը, պարբերացվելով բաժանվում է երեք մեծ փուլերի՝ անտիկ կամ հին, միջնադարի ու վերածնության դարաշրջանի և նոր շրջանի գրականության: Բայց եթե երկրորդ և երրորդ փուլերի կապն օրգանական է, նույնը չի կարելի ասել առաջին և երկրորդ փուլերի կապի մասին, քանի որ ուսումնասիրողները միախառնում պնդում են, թե անտիկ շրջանի հունա-հռոմեական գրականության անկմամբ կտրվում է զարգացման շղթան, և գալիս է համատարած «անպտղության» մի ժամանակաշրջան, որը տևում է շուրջ երկու հազար տարի, լավագույն դեպքում մինչև վերածննդի դարաշրջանը: Այսպես՝ ֆրանսիացի բանաստեղծ Արթյուր Ռեմբոն 1871թ. մայիսի 15-ին Պոլ Ղեմենին ուղղված նամակում գրել է. «Ողջ անտիկ պոեզիան վերջանում է հունական պոեզիայով, ի՞նչ ներդաշնակ կյանք: Հունաստանից մինչև ռոմանտիկական շարժումը, միջնադարը, տառակերների, ոտանավոր սարքողների դարաշրջանն է: Էնդիուսից մինչև Թերոլոյուս, Թերոլոյուսից մինչև Կազիմիր Դըլավիյն՝ ողջ հանգավոր արձակ է, խաղ, թարգմանություն և անհաշվելի տխմարների սերունդների մի փառապասկ... Երկու հազար տարի տևեց այդ բանը»: Գրականության պատմաբանների կարծիքը շրջանաբաժանման հարցում և այդ մեծ ընդհատման մասին այնքան էլ չի տարբերվում Ռեմբոյի տեսակետից:

Հիրավի Հռոմեական կայսրության

անկումից հետո Եվրոպան մի տեսակ բարբարոսացավ, հայտնվեց վայրենության մեջ: Ընդհուպ մինչև XI-XII դարերը դիտվում են իբրև Եվրոպական նոր ժողովուրդների և լեզուների կազմավորման շրջան: Բայց մի՞թե աշխարհը Եվրոպայից էր սկսվում և Եվրոպայով վերջանում, մի՞թե բոլոր ճանապարհներն իրոք դեպի Յոնն են տանում: Այս շրջանում չէ՞ր, արդյոք, որ հայ հոգևոր մշակույթը թևակոխեց իր Ոսկեդարը՝ պահպանելով ու զարգացնելով գրականության և մշակույթի ավանդները: «Եվրոպայի վայրենացման դարերին,- իրավացիորեն նկատել է Նիկողայոս Մառը,- հայ ազգը իր թարգմանություններով հունարենից՝ անփոխարինելի ծառայություն է մատուցանում Եվրոպական համամարդկային քաղաքակրթությանը, ոչ միայն պահելով դասական գրականության հիշատակարաններն, այլև հունագիտության ամենաեռանդուն ախտյան հանդիսանալով և նպաստելով այն լեզվի (հունարենի - Ս. Ի.) ուսումնասիրությանը Արևելքում և մինչև անգամ Յունաստանում»: Ավելին՝ Մառի կարծիքով հայերը ոչ միայն հարստացրել են համաշխարհային մշակույթը իրենց «գուտ ցեղային» մշակութային տարրերով, այլև ապահովել են մարդկության նոր առաջադիմությունը՝ իրենց վրա վերցնելով միջնադարյան խավարի մեջ թաղված բարբարոսության դաստիարակման գործը: «Յարևան և մինչև անգամ հեռու ընկած ազգերից ո՞րն է,- հարցնում է նա,- որ օգտված չլիներ հայոց ազգի կուլտուրական բարենասնություններից, վիպասաններից եկող և աշուղներին հասած երգերից, նրա ճարտա-

յագետ Էդուարդ Դեյլուրեն: «Չորրորդ դարից սկսած մինչև մեր օրերը հայկական գրական հուշարձանների ստեղծումը շարունակվում է առանց ընդհատումների, ոսկե շրթայով կապում անտիկ աշխարհի և այսօրվա ստեղծագործությունները,- գրել է նա:- Դայ հեղինակները լավագույն առաջնորդներն են, նրանք միակն են Արևելքում, որոնց գործերի շնորհիվ հնարավոր է ուսումնասիրել այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան Արևմտյան Ասիայում այն ժամանակաշրջանում, երբ երկիրը ենթարկված էր Սասանյանների տիրակալությանը»:

Թող մեծամտություն կան ազգային սնամփառություն չթվա մեր ասածը, բայց կարծում ենք, որ հունա-լատինական Եվրոպեիզմի բացարձակացումը խանգարել և խանգարում է հենց Եվրոպացիներին՝ ճիշտ ընկալելու պատմության ընթացքի եությունն ու զարգացման օրինաչափությունը: Բնորոշ է նրանցից մեկի՝ լիտվացի բանաստեղծ Էդուարդաս Մեծելայտիսի խոստովանությունը. «Ես կարծում եմ՝ իսկական դժբախտություն է եղել այն, որ ժ ա - մ ա - ն ա - կ ի ն բ ո - լ ո թ հաշ-

ժամանակ թաքնված է եղել մեր աչքերից: Եվ հենց այդ մարդկային մտքի և գործունեության Ատլանտիդայում էլ կարևոր և կենտրոնական տեղերից մեկը բաժին է ընկնում Դայաստանին»:

Մեծելայտիսն անձամբ իր համար մեծ երջանկություն է համարում, որ, թեկուզ ուշացումով, իրեն հաջողվեց հայտնագործել Դայաստանը: Խորանալով հայ մշակույթի ուսումնասիրության մեջ և մոտիկից ճանաչելով հայ հանճարի ստեղծագործությունները՝ խանդավառված բանաստեղծը գրել է. «Եթե Դայաստանը ոչինչ անգամ չունենա ա ղ մեծն Ե ա - ր Ե կ ա - ցուց բացի, այդ էլ բ ա վ ա - կան էր՝



Հովհաննես Թումանյան

ընդունելու համար նրա վիթխարի ավանդը համամարդկային մշակույթի ասպարեզում: Բայց Նարեկացուց բացի Դայաստանն իր փառա-



Չորջ Բայրոն

վարկները մշակույթի բնագավառում

պանծ անցյալում այնքան է ունեցել, որ դժվար է կշռել և հաշվեկշռել նրա ավանդը համաշխարհային մշակույթում»:

Կարելի է բազմաթիվ ուրիշ կարծիքներ էլ հիշել, որոնցում արժեքավորվում է հայ հոգևոր մշակույթը, բայց դա չէ կարևորը: Դրա անհրաժեշտությունը չկա: Խնդիրն այն է, թե համաշխարհային մշակույթի, մասնավորապես գրականության ասպարեզում հայերիս ներդրած ավանդը որքանով է կենսական և որքանով է մասնակցում այլոց հոգևոր աշխարհի ձևավորմանը: Շարքային հայ ընթերցողը կարողում, դպրոցականը և ուսանողը ուսումնասիրում են Շեքսպիրի ու Դանթեի, Գյոթեի ու Յյուզոյի, Պուլկինի ու Մարկեսի, համաշխարհային գրականության մյուս մեծերի ստեղծագործությունները, որոնք, ամշուշտ, իրենց կարևոր դերն են կատարում նրանց աշխարհայացքի կազմավորման, ներաշխարհի ձևավորման գործում: Իսկ հայ հին ու նոր ժամանակների գրողները արդյո՞ք նույնքան դեր ու կշիռ ունեն վերոհիշյալ հեղինակների հայրենիքներում, արդյո՞ք նույնապիսի փառք ու հարգանք են վայելում նրանց մոտ... Տեղին չէ՞ր, արդյոք,



Վիլյամ Շեքսպիր

ր ա պ ե - տական անմասն գարգացած արվեստից»:



Յոհան Վոլֆգանգ Գյոթե

առաջ են եկել հունա-լատինական Եվրոպեիզմի իդեալականացումից... Այդ Եվրոպականացված երևույթը հիպոստացրել և երկար ժամանակ պարուրել էր մեզ: Գիտատեխնիկական հեղափոխությունը, մեր գիտակցության մեջ «հարաբերականության տեսության» ուսմունքի ներթափանցումը և այդ տեսությունից բխող դիմամիկայի, ատոմային ֆիզիկայի սրընթաց զարգացումը և մարդու՝ իկարյան հետնորդի տիեզերական ընդարձակումը արթնացրեց մարդկային միտքը ընդհանրապես և մասնավորապես: Մարդկային միտքը սկսեց գործել: Եվ հանկարծ մենք գտանք այն, ինչի մասին բավականին աղոտ պատկերացում ունեինք: Այժմ մեզ իր զաղտնիքն է բացում ողջ մշակութային Ատլանտիդան, որն այնքան



Գրիգոր Նարեկացի

Պատմական անցյալի նկատմամբ կանխակալ կարծիքից զերծ լայնախոհ հայացքը ցույց է տալիս, որ համաշխարհային մշակույթի, մասնավորապես գրականության պատմության մեջ ոչ մի ընդհատում էլ չի եղել: Այդպիսի հայացք է ունեցել նաև ֆրանսիացի հա-

մեր մյուս հանճարի՝ մեծն թունանյանի դժգոհությունն այն առթիվ, որ իր հեքիաթները (և ոչ միայն), պատշաճ գնահատականի չեն արժանացել, մինչդեռ եվրոպական գրականության մեջ էլ դրանք պետք է դիտվեին իբրև նոր գեղարվեստական արժեքներ: 1922թ. հունիսի 22-ին Պողոս Մակինցյանին գրած նամակում թունանյանն իրավացիորեն գանգատվում է, որ ամբողջ աշխարհը գիտե և գնահատում է Գրիմմի «Անվախ դերձակը», բայց տեղյակ չէ իր գրվածքներին, մանավանդ՝ «Քաջ Նազարին»: «Չամարձակություն ունեն էպես ասելու,- գրել է նա,- թող ամբողջ գրական աշխարհի քննությանը առաջարկվի «Քաջ Նազարը» և Գրիմմի «Անվախ դերձակը», որ թարգմանված է ամեն լեզվով և գովված ու հռչակված ամեն լեզվով»: Թունանյանի մեծ վստահության հիմքն, անկասկած, այն գիտակցությունն էր, որ ինքը, գեղարվեստորեն մշակելով հայկական ժողովրդական հեքիաթը, հանձին իր կերտած գրական կերպարի մարդկային այնպիսի հավերժական տիպ է հայտնաբերել, ինչպիսիք են՝ Չամլետը, Ֆաուստը, Դոն Կիխոտը, Դոն ժուանը և մյուսները:

Այն ամենը, ինչ ստեղծել և ստեղծում է մարդկային հանճարը, պատկանում է ողջ մարդկությանը և պետք է սպասավորի նրան: Այստեղ մեծ կամ փոքր ազգի ներկայացուցիչ լինելու հանգամանքը ոչ մի դեր չի խաղում. կարևորը գեղարվեստական արժեքն է և այն շրջանառության մեջ դնելը: Իրավացի էր լիտվացի մեր բարեկամ բանաստեղծը, երբ գրում էր. «Սյնպիսի բանաստեղծ, ինչպիսին Նարեկացին է, պատկանում է ողջ աշխարհին, և թեև ուշացումով, բայց արդեն ժամանակն է, որ մարդկությունն իմանա նրա մասին, առնչվի նրա հանճարին, ժամանակն է, որ Նարեկա-

ցին դառնա աշխարհի մեծագույն բանաստեղծներից մեկը: Այսօր զարմանալ կարելի է, որ «Մատյան ողբերգության» պոեմը գրվել է շատ ավելի շուտ, քան մեծ Դանթեի «Աստվածային կատակերգությունը»»:

Սխալը գիտակցելը և ուղղելը երբեք էլ ուշ չէ: Կարծում ենք՝ ժամանակն է՝ ինչ-ինչ ճշգրտումներ անելու համաշխարհային գրականության և, առհասարակ, մշակույթի պատմության ըմբռն-



Հովհաննես Շիրազը և Վիլյամ Սարոյանը

ման մեջ՝ հայկականը դիտելով համաշխարհային ծիրում և ոչ թե նրանից կտրված կամ, լավագույն դեպքում, նրան զուգահեռ ընթացող մի երևույթ: Ինչ վերաբերում է մասնավորապես գրականության պատմությանը, պատկերն առավել ամբողջական կլինի, եթե տեղը դրվի շենքի պատի պակասող աղյուսը, այսինքն՝ անտիկ գրականությունից հետո ներկայացվի և արժևորվի հայ հին և միջնադարյան գրականությունը՝ որպես անտիկ և վերածնության գրականությունները կապող օղակ, և վերածնության դարաշրջանի գրականության սկիզբ համարվի ոչ թե Դանթեի, այլ Նարեկացու ստեղծագործությունը: Այս վերջին մոտեցումն ամենևին չի նսեմացնում իտալական հանճարի գործի մեծությունն ու արժեքը: Ուշ միջնադարի կամ վերածնության գրակա-

նության մեջ էլ պետք է արժանին հատուցվի Քուչակի հայրեններին ու Սալաթ-Նովայի սիրերգությանը՝ որպես գրականության մեջ աշխարհիկ ոգու հաղթանակի առիավատյա: Ինչ վերաբերում է XIX և XX դարերի հայ գրականությանը, ապա այս դեպքում էլ պետք է հաշվի առնվի հայ գրողների մասնակցությունը դարաշրջանի հիմնախնդիրների բացահայտմանն ու արժարժանին, մշակութային արժեքների ստեղծմանը՝ միջազգային մակարդակով, որի շնորհիվ էլ պարզ կդառնա այն, թե ինչով է հայ ժողովուրդը նպաստել համաշխարհային փորձի հարստացմանը: Եվ այս ամենը պետք է արտացոլվեն «Չամաշխարհային գրականության պատմության» դասընթացի դպրոցական ու բուհական ծրագրերում ինչպես մեզ մոտ՝ Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Ի դեպ, մեր՝ «Գլաձոր» համալսարանի ծրագիրը տողերիս հեղինակը կազմել է հենց այս դի-

տարկումների հիման վրա: Համաշխարհային գրականության պատմության՝ որպես ամբողջական գործընթացի ըմբռնումը հնարավորություն կտա, որ հայկական մշակութային արժեքները գեղարվեստորեն գործեն նաև մյուս ազգերի ու ժողովուրդների շրջանում, քանզի համոզված ենք, որ Վալերի Բյուսոլի՝ 1916թ. արած դիտարկումը միայն մեզ՝ հայերիս չէ, որ ուղղված է. «Հայ քնարերգության հետ ծանոթությունը պարտադիր է յուրաքանչյուր կրթված մարդու համար, ինչպես որ պարտադիր է ծանոթությունը հին հունական ողբերգակներին, Դանթեի կատակերգությանը, Շեքսպիրի դրամաներին, Վիկտոր Հյուգոյի պոեմներին»:

Թող լինի այդպես ...

← **Էջ 34** պատմությունն էլ, թերևս, բացառություն չէ...

Հաղորդի շրջանի թաղասեր գյուղը հիմնադրվել է 1600-ական թվականներին... Գտնվում է Հաղորդից 7 կմ հեռավորության վրա և համարվում է հին բնակավայրերից մեկը, որից այսօր միայն Ս. Աստվածածին եկեղեցու (17-րդ դար) փլատակները, հին բնակատեղիների հետքերն ու գերեզմանների ավերակներն են պահպանվել:

1700-ական թվականներին մեծ գյուղ է եղել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ հարսանիքի ժամանակ գյուղ են մտել թուրքերն ու ողջ գյուղը սրի քաշել: Այդ օրվանից գյուղի փրկված բնակիչները, պաշտպանվելու նպատակով, տեղափոխվել են և Հաղորդից 1.5 կմ հեռավորությամբ հիմնել նոր գյուղ՝ Թաղասեր: Այն կարծես Հաղորդի մի թաղամասը լինի. Հաղորդից դուրս չեկած՝ հայտնվում են Թաղասերում, որտեղից էլ յուրաքանչյուր անձանոթի մատնացույց են անում հին գյուղի տեղը:

Թաղասերն այսօր 140 տնտեսությամբ, ավելի քան 500

բնակիչ ունեցող գյուղ է՝ իր ութնամյա դպրոցով, բուժկետով, ակումբով, գրադարանով: Հուսադրողն այն է, որ գյուղը ծերացող չէ: Ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ հիմա, ոչ մի մարդ չի լքել գյուղը...

Ասում են՝ պատմությունը կրկնվում է... Այն, այնպես կուզենայի, որ այդպես չլիներ, որ Հաղորդի շրջանի հնաբնակ գյուղերից մեկի՝ Առաքյալի մասին պատմող իմ պատմությունն էլ ուրիշ երանգ ունենար...

Ստիպված են ցավով միայն արձանագրել, որ այն, ինչ 1700-ական թվականներին կատարվեց թաղասեր գյուղի հետ, 1991թ. արցախյան գոյամարտում պատուհասեց ոչ միայն Առաքյալին, այլև ենթաշրջանի տասներեք գյուղի, որոնք ավերվեցին հիմնահատակ: Եվ նոր Առաքյալն այսօր կառուցվում է հին Առաքյալից 300 մետր դեպի հյուսիսարևելք:

Այդ մասին՝ մեկ այլ անգամ...

ՄԶԾՕՐԻ ԶՕՔՍԻՆ՝ ՏԾԾԶԻՔՊԱԾԻ !

Հայ ժողովուրդը բոլոր ժամանակներում ըստ արժանվույն է մեծարել իր հանճարեղ զավակներին: Իր հոգու աչքերով է կարդացել Գրիգոր Նարեկացու «Մատյանը» և սրտի լարերով զգացել նրա խորին խորհուրդը: Ստերմիկ «Նարեկ» է կոչել այս հոգեհարազատ գիրքը՝ պահելով ու փայփայելով որպես Սուրբ Գիրք՝ հավատալով, որ այն մարդու հոգեկան ու մարմնական ցավերը բուժելու հատկություն ունի. հաճախ էին դնում նորածնի, նորապսակի, հիվանդի բարձի տակ՝ համարելով հոգեփրկիչ և բժիշկ, պահապան և կենսատու:

Ժողովուրդը հրաշագործ է համարել նաև «Նարեկն» ստեղծողին, նրա անվան շուրջ հյուսել հրաշապատումներ, որոնք սերնդե սերունդ բանավոր փոխանցվել են՝ մինչև գրի կառնեին երախտավոր բանահավաքներ Գարեգին Սրվանձոտյանցը, Երվանդ Լալայանը, Գարեգին Հովսեփյանցը և ուրիշներ: Բանագետ Արամ Ղանալանյանն իր «Ավանդապատումում» ներկայացնում է նրանց հավաքած գրույցների մեծ մասը:


Ավանդագրույցներում Գրիգոր Նարեկացին պատկերված է իբրև սուրբ, ժողովրդի բարերար, որի գլխավոր հոգսը մշակին, հովվին, կամուրջ կապող վարպետին, աղքատ ընտանիքին, անգավակ ծնողին նեցուկ լինելն է և հակառակը՝ շահամոլ տանուտիրոջը, բամբասասեր ու չարախոս թշնամիներին պատժելը, խրատելը:

«Յայսմաւորք»-ը մի շարք գրույցներ է պատմում Նարեկացու մասին, որոնցից մեկում նա իր վրա է վերցնում Խարզիթ գյուղի մեռած հովվի պարտականությունը՝ իմանալով, որ վերջինս յոթ որբ է թողել իր այրուն: «Սուրբն տաներ զոչխարսն արածեր վեր գեղին, ոչխարքն ելնէին ի սարն, արածէին յամենայն ավուր և նա ի խնձորի ծառի տակն աղօթէր. և որչափ գայլ և գազան տեսանէին զոչխարսն և փախէին»: Ահա այսպես, արածեցնելով գյուղի ոչխարներին մինչ աշուն, հովվի Նարեկացին ահագին հաց է վաստակում ու տալիս որբերին, որոնք այդ հացն ուտում են յոթ տարի (Ավանդապատում, այսուհետ՝ Ավանդ., 774, Թ):

Նրա հովվության մասին մեկ այլ գրույցում, որ գրի է առել Սենեքերիմ Շալջյանը 1915թ., պատմվում է, թե ինչպես «Նարեկացին ժամանակով աղքատի տղա էր, էլեր էր խոտադ: Յոթ տարի խոտաղութին էրաց»: Միշտ ինքը հոտաղներից ջուկվում, աղոթք էր անում: Մի օր, երբ հոտաղներն անոթի էին, գնաց մի բուռ քակոր ժողովեց, բերեց, Աստծո անունը տվեց, խաչակնքեց, աղոթեց, քակորները դարձան «քաժա լոշ»: Հարազատները շատ են զարմանում, խնդրում են՝ ասել, թե որտեղից է բերում նոր թխած տաք լավաշը, բայց Նարեկացին զաղտնիքը չի բացում (Ավանդ., 774, Ժ):

Այս գրույցին համահունչ է մեկ ուրիշը, որում վանքի առուն փորող մշակները չէին կարողանում ջարդել և ճանապարհից հեռացնել վեճ քարը: Վարդապետը մասնակցություն ուղարկում է «մի հնար» անելու: Առժամանակ հետո գնում ու տեսնում է, որ Գրիգոր «չոքեալ էր ի վերա ծնկաց իւրոյ առաջի քարին և զձեռսն իւր տարածեալ աղաչէր զԱստուած, եւ

խաչակնքեալ ի վերայ քարին առ ժամոյն պատառեցաւ քարն և ջուրն ի վանքն երեք» (Ավանդ., 774, ԺԲ): Ապառաժն աղոթքով և Աստծո զորությամբ ջարդելուց հետո մանուկ Գրիգորը գնում է Ռշտունյաց երկիր, «մօտ իւր քեռին Անանիա Շիրակվանեցին, որ էր առաջնորդ վանացն»: Միջարկելով մշենք, որ Անանիա Շիրակացուն որպես Գր. Նարեկացու քեռի ներկայացնելն, անշուշտ, անճշտություն է, որպիսիք երբեմն հատուկ են ժողովրդական պատումներին: Ժողովրդական պատումներում, առհասարակ, բոլոր մեծերը միմյանց հետ



շաղկապված են ներկայացվում: Այստեղ խոսքն Անանիա Նարեկացու մասին է: Վերջինս գործի է դնում Գրիգորին՝ «արի որդի հաց տար մշակներուն յարտն ցորենոյ»: Հացը տանում է: Մշակներն սկսում են ուտել՝ նրան մույնպես հրավիրելով: Մանուկ Գրիգորն ասում է, որ իր «ճաշածամը չէ» և խնդրում, որ իրեն բաժինը պահեն: Մշակները նրան բաժին չեն թողնում, ավելին՝ ջրի են ուղարկում նրան և ուտելիքի փոխարեն փթիր (աթար) են դնում: Նստելով սեղանի առջև՝ Գրիգորն աղոթում ու խաչակնքում է, և, ի մեծ զարմանս մշակների, փթիրը հաց է դառնում: Նրանք «անկան յոտս սրբոյն Գրիգորի. եւ թողին զգործ քաղացն եկին առ վարդապետն և պատմեցին նմա զաքանչելիսն զոր արար Գրիգոր» (Ավանդ., 774, ԺԲ):

Հետաքրքիր է, որ մանուկ Գրիգորի վարքը հասուն մարդու նման է, և նա չի նեղանում մշակների կատակից: Հասուն տարիքում, ընդհակառակն, հեզաբարո է, մանուկի պես պատրաստակամ և օտարի, մույնիսկ անծանոթ անդամալույծի, կամքը կատարող:

Դեռ փոքր տարիքում նա ճամփորդում էր և ինքնագլուխ գնում տարբեր տեղեր: Երբ գաղտնի գնում է Բզնունյաց երկրի Արծկեի ներքին Գագոխ գյուղը, հանդիպում է մի մարդու, որն աղքատ էր և «պարտական»: այնքան շատ պարտք ուներ, որ մշակ կամ հոտաղ բանացնելիս վարձ չէր կարողանում վճարել, որովհետև հազիվ պարտքերն էր մարում: Նա մանուկ Գրիգորին ասում է. «Եկ ինձ մօտ հօտաղ, քեզ տարին 10 դուռուշ կտամ», որին Գրիգորը պատասխանում է՝ «դրանով ոչ լինիմ քեզ մշակ, դու ինձ յանձն կ'առնես, որ յաւուրն երիս անգամ գալ եկեղեցի և աղօթել, առանց վարձու ես քեզ մշակութիւն առնեմ»: Տակավին մանուկ՝ Գրիգորն աստվածապաշտություն է սովորեցնում գյուղացուն, որն իր և Գրիգորի աղոթքների շնորհիվ հարստանում է, դառնում գութանի, ոչխարի, տավարի, ձիու տեր ու ազատվում պարտքերից (Ավանդ., 774, ԺԳ):

Ճամփորդելիս՝ Մծբին գնալիս՝ «ի գերեզման սրբոյն Յակոբայ Սծբնայ հայրապետին», երբ հասնում է Տիգրիսի կամրջին, անցնելիս թողություն է խնդրում կամուրջ շինող վարպետի մեղքերին: Տիրոջ հրեշտակն է երևում նրան և ասում, որ կամուրջ կապողը կռապաշտ էր, մեռել է, և հոգին դժոխքում է: «Իսկ եթէ կամիս, որ Աստուած նորա արքայութիւն տայ, կենդանացո՞ր զմեռեալն»: Գրիգորը կամրջի մոտ հայտնաբերում է նրա գերեզմանը, աղոթքով վերակենդանացնում «հողացեալ» մարմինը, խոստովանել տալիս և «երկիր պագանել Աստուծոյ», մկրտում է կամրջակապ վարպետին և դարձյալ խաչակնքելով, հող դարձնում նրա մարմինն ու հոգին ուղարկում դրախտ (Ավանդ., 774, ԺԴ):

Երբ Սուրբ Գրիգոր Նարեկացուն նստեցնում են վանքի առաջնորդի աթոռին, ըստ ժողովրդական պատումի՝ «Գորգն

տանուտերը ոչ գայր եկեղեցին ի տերի աղօթքին», պատճառաբանելով, որ շատ մշակ ունի և նրանց կիրակի օրն էլ է բանացնում. եթե ինքը գա եկեղեցի, նրանք գործ չեն անի: Եվ Սուրբ Նարեկացին ասում է շահամոլ տանուտերին. **«Եթե տաս բանացնել կիրակի, դու բաժին լինիս սատանայի»:** Հիշաչար տանուտերը երկու քուրդ է բերում, որոնք էլ վարդապետին շղթայով կախում են եկեղեցում: Գլխիվայր կախված սուրբն աղոթում է, և... **«Ժճճիլն հալեցաւ»:** Քրդերն այս տեսնելով՝ թողնում, գնում են իրենց եկած ճանապարհով, իսկ Գորգը մի քանի օրից **«անհաղորդ մեռաւ ի գիշերի»:** Վարդապետը, երբ լսում է այս լուրը, ասում է. **«Հողըն մուտ չտայ մեռելին»:** Տանուտերին թաղում են, բայց հողը դուրս է մղում հանգուցյալին: Երեք օր շարունակ նույնը կրկնվում է: Ի վերջո ընտանիքն ու ժողովուրդը **«զնացին լալով և անկան յոտս վարդապետին»:** Գրիգորն աղոթում է մեռելի վրա: Սա հարություն է առնում, երեք անգամ մեղա գալիս Աստծուն, ապա նորից է մեռնում, և այս անգամ հողն ընդունում է նրան (Ավանդ., 774, ԺԸ):

Գրիգոր Նարեկացու կենսագրությունից հայտնի է, որ բիրտ ու տգետ մարդիկ լուր են տարածում, թե աղանդավոր է (մեղադրում էին թոնդրակյան շարժման հետ կապերի մեջ): Նպատակադրվում են հրապարակավ հանդիմանել նրան և ապա՝ պատուհասել՝ քարտեղելով որպես հերձվածող: Ավանդագրույցը պատմում է, թե **«հաղաչկոտ»** (նախանձ) և **«սուպո»** (բիրտ) մարդիկ ժողովում են եպիսկոպոսներին ու իշխաններին, որպեսզի դատեն Նարեկացուն: Սուրբն ընդունում է հրավիրակներին, որ եկել էին նրան տանելու, և իմանալով նրանց գալու նպատակը՝ **«կամեցաւ յանդիմանել զանմտութիւն նոցա»:** Նա երկու աղավնի խորովել տվեց և հացի հրավիրեց հրավիրակներին: Օրն ուրբաք է լինում, պաս, և հրավիրակներն ասում են. **«Վարդապետ, ո՞չ է օրս ուրբաք»:** Եվ սուրբն իբր մոռացել է, թե պաս է, մերուրություն է խնդրում և ասում, որ հյուրերը հրաման տան աղավնիներին թռչելու: Ոչ ոք, իհարկե, չի կարողանում դա անել: Այնժամ ինքը՝ Նարեկացին, հրամայում է, և աղավնիները վերակենդանանալով՝ թև են առնում ու թռչում: Եկողներն այս տեսնելով՝ թողություն են խնդրում, և ամբաստանությունը խափանվում է: **«Եւ զնացեալ պատմեցին զհրաշն որ եղեւ... և անուանեցին զնա երկրորդ Լուսաւորիչ և երկրորդ սքանչելագործ»** (Ավանդ., 774, Զ): Բոլոր հրաշքներն Աստծո գորույթամբ կատարելով՝ Նարեկացին թե՛ օգնելով, թե՛ պատժելով կամ խրատելով, հաճախ էլ դաս տալով՝ բարի գործ է անում և ազնվացնում շրջապատի մարդկանց:

Մշակը գալիս է Սուրբ Գրիգոր վարդապետի դուռն ու ասում՝ գոմեշը սատկեց գութանի մոտ: Վարդապետը գնում է, տեսնում՝ գոմեշն արդեն մորթել են: Վերցնում է հողը և խաչակնքելով՝ տանում, լցնում գոմեշի վրա: **«Յայնժամ զենեալ գոմեշն յարեալ ի մեջ արտին»**, և երկու գյուղից եկած մարդիկ, որոնք պիտի տանեին միսն ու կաշին, տեսան գոմեշին գութան վարելիս: Ամենքը սուրբ վարդապետից «աջ առին», և արտի անունը դրեցին Աջ արտ (Ավանդ., 128):

Նույնանուն են հավատեր կնոջ և հավատեր քրդի մասին գրույցները: Կինը գնում է կիթ անելու, տեսնում է՝ նոր թուխս նստած հավի ճտերը կան, թուխսը չկա: Շատ փնտրելուց հետո սատկած թուխսն ու ճտերը լցնում է փեշն ու գնում Գրիգորի մոտ: Գրիգորը սատկած հավի վրա աղոթք է անում, խաչակնքում, ու հավը գրռոք-գրռոք՝ ոտքի է կանգնում: Հավատեր կինը համբուրում է Գրիգորի ոտքերն ու գոհ տուն գնում (Ավանդ., 774, Բ):

Քրդի մասին գրույցում ճտերն էլ են սատկում, և այն կինը, որը թուխս էր դրել, Նարեկավանքի շրջանում տիրող քրդից ահաբեկ, սատկած թռչուններին տանում է, դնում Սուրբ Գրիգորի գերեզմանին: Աստծուն ու Գրիգորին աղոթելով ու աղաչելով՝ մի ժամ անց տեսնում է հավն իր ձագերով կենդանացած: Փառք է տալիս թե՛ Աստծուն, թե՛ Սուրբ Գրիգորին (Ավանդ., 774, Ա):

Հրաշապատում ավանդագրույցների մեծ մասի գործողության վայրերն իրական են: Դրանք այն վայրերն են, որտեղ ծնվել, մեծացել, ուսանել և ստեղծագործել է Գրիգոր Նարեկացին՝ Նարեկավանք, Ս. Կարապետի վանք, Վան, Մուշ, Վարագ, Ախթամար, Արճեշ, Խարգիթ, Արտոնք, Բելու և այլն: Կան նաև որոշ անճշտություններ, ինչպես, օրինակ, այն հիշատակությունները, որոնց համաձայն Նարեկացին եղել է Խոսրովի որդին և Շիրակացու քեռորդին կամ որ մանուկ հասակում աշակերտել է Եղիշե վարդապետին և այլն: Ըստ մի գրույցի՝ **«Գրիգոր Նարեկացին քեռորդի էր Անանիա Շիրակվանեցոյն, որդի Խոսրովու: Սա մինչ մանուկ էր եաւթն տարու, ետուն զնա յաշակերտութեան Եղիշէի սրբոյն վարդապետին յերկիրն Մոկաց, զի նա առաջնորդէր Կոչողաց սրբոյն Աստուածածնին»:** Այնտեղ նա առաջադիմում էր իմացության և աստվածային առաքինության մեջ, և մանկուց սքանչելի մեծագործություններ էր անում: Մյուս սարկավազները մի օր եղիշե վարդապետին պատմում են, որ բոլորը զարմացած են մանուկ Գրիգորի սքանչելագործություններից: Վարդապետը կաննում է փորձել Գրիգորին: Այդ ժամանակ վանքի եզերից մեկը քարից ընկնում ու սատկում է: Եղիշեն Գրիգորին ասում է, թե եզն այսինչ տեղն է, զնա բեր: Տղան գնում տեսնում է եզը մեռած, խաչակնքում է, Աստ-

ծո անունն է տալիս, և եզը կենդանանում է, և նա բերում է կենդանուն վարդապետին (Ավանդ., 774, Գ):

Մյուս ավանդության համաձայն՝ Սուրբ Գրիգորն իր քեռուց գաղտնի գնում է Մշո երկիր, Արտոնք գյուղ, այնտեղ նախիր է արածեցնում երկու տարի և իր աշխատանքի վարձը տալիս աղքատներին: Մի օր կենդանիներից մեկը սատկում է դաշտում: Տերը պախարակում է Գրիգորին, իսկ նա խոնարհությամբ ասում է. **«Վասն է՞ր զիս կու անարգես. ես երթամ քո տաւարն սող բերեմ քեզ. եթէ ոչ բերեմ, իմ տարւոյ վարձու քեզ լինի»:** Եվ նա տիրոջն է բերում կյանքի կոչած եզանը (Ավանդ., 774, Դ):

Հրաշագործ է ու սուրբ ոչ միայն Նարեկացին ինքը, այլև նրա շիրիմը, աղոթատեղին, քարերը, որոնց վրա նստել է, ճիպտը, որով հովվություն է արել և այլ իրեր ու առարկաներ, որոնք նույնպես սրտացավ գործերով ծառայում են մարդկանց:

Նարեկացու աղոթատեղին Վասպուրականի Նարեկ գյուղի մոտ է: Դա մի ճգնարան է, որի հատակի քարերը տեղտեղ մարդու ոտքի մեծության փոսեր ունեն: Ասում են, թե դրանք Գրիգոր Նարեկացու ոտնահետքերն են (Ավանդ., 846): Տարբեր վայրերում կան Նարեկացու քարեր: Վասպուրականի Խարգիթ գյուղի մոտ գտնվող քարերի մասին պատմում են, որ Նարեկացին հովիվ է եղել մինչև կրոնավոր դառնալը, և երբ թշնամիները հարձակվել են նրա վրա՝ փորձելով ծեծել, թաքնվել է վեմ քարի ետևում, որը, զոգավոր ձև ընդունելով, թաքցրել է նրան, և թշնամին անցել է՝ նրան չնկատելով (Ավանդ., 190, Ա):

Նարեկավանքի մոտակայքում նույնպես կան քարեր, որոնց վրա նստել է Նարեկացին և հրաշքներ գործել: Տեղացիներն այդ քարերով զուշակություններ են արել (Ավանդ., 190, Բ):

Նարեկացու ճիպտի մասին պատմում են, որ այդ բարակ ճիպտով յոթ տարի արածեցրել է տիրոջ եզներին՝ առանց նրանց մեկ հատիկ վատ խոսք ասելու ու ծեծելու: Ջկիկ գյուղի մեջտեղ բուսած կանաչ ու փարթամ գիհի ծառը, որը շուք է անում շուրջբոլորը, հոտաղ Նարեկացու ճիպտն է, որն, իհարկե, նա ժամանակին տնկել է այդտեղ (Ավանդ., 116, 322, Գ):

Ժողովրդական այս գողտրիկ պատմումները (որոնք, իհարկե, այսքանով չեն սպառվում) գալիս են լրացնելու Նարեկացի հանճարի արդեն իսկ սուրբ և հրաշափառ կերպարը՝ ևս մի երանգ հաղորդելով նրա ժողովրդասեր կենսափիլիսոփայությանն ու աստվածահաճո ապրելակերպին:

**Գոհար Վարդույան
ազգագրագետ, դիցաբան,
պատմ. գիտ. թեկնածու**

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՂԱՐԱԲԱՂԱՑՈՒՄ, ԹԵ՞ ԹՐՔԱՑՈՒՄ...

1999թ. Մոսկվայի «Այրո-XX» հրատարակչությունը Ֆրիդրիխ Նաումանի ֆոնդի հովանավորությամբ լույս է ընծայել «Ազգային պատմությունները խորհրդային և հետխորհրդային պետություններում» խորագրով հոդվածների ռուսերեն ժողովածուն: Այն վերահրատարակվել է 2003թ.:

Սույն ժողովածուում տեղ է գտել նաև հեղինակման պահին Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ղեկան, ներկայումս ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Զարությունյանի և ՋԼՄ-ների կոմպլասյան ինստիտուտի (Երևան) փոխտնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանի համահեղինակած «Հայաստան. Ազգային պատմության «ղարաբաղացունը»» հոդվածը:

Ստորև ներկայացնում ենք միջազգային հարաբերությունների մասնագետ, «Անամիա Շիրակացի» համալսարանի դասախոս Լևոն Մելիք-Շահնազարյանի գրախոսությունը: «Շրջադարձի» հաջորդ համարում կներկայացնենք Մոսկվայի պետական համալսարանի դասախոս, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Գրիգորյանի գրախոսության տեսությունը, ապա՝ «Շրջադարձի» խմբագրակազմի անդամ, պատմական գիտությունների թեկնածու Գևորգ Յազըճյանի տեսակետները՝ տվյալ հոդվածի առնչությամբ:

«ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ» ԱՐԳԵԼՔՆ ՈՒ ՏՈՏԵՍԸ

Պատմությունը ճշգրիտ գիտություն է և սկզբունքորեն չպետք է ծառայի քաղաքական նպատակների: Այսուհանդերձ, վերջին տարիներին հաճախ հրատարակվում են այս կամ այն քաղաքական առաջադրանքների լուծմանն ուղղված պատմագիտական աշխատանքներ: Դժվար է ասել, թե որքան է բարելավում պատմագիտական աշխատանքների որակը նրանց անսթոյ կապվածությունը, սակայն այն, որ պետական քաղաքականությունը հաճախ տուժում է դրանից, կարող են հաստատել, ինչպես ասում են՝ առձեռն փաստերով: Քաղաքական թեքումով նման պատմական հետազոտություններից է վերջերս իմ աչքին ընկած՝ Ալեքսանդր Իսկանդարյանի և Բաբկեն Զարությունյանի «Հայաստան. Ազգային պատմության «ղարաբաղացունը»» հոդվածը, որը լույս է տեսել 1999թ. Մոսկվայում, «Ազգային պատմությունները խորհրդային և հետխորհրդային պետություններում» նյութերի ժողովածուում:

Ո՞ւմ ջրաղացին են ջուր լցնում մի քանի հայ պատմաբաններ ...



Բ. Զարությունյան

Ամմիջապես ասենք, որ հիշյալ աշխատանքում քաղաքականությունը նույնիսկ ավելի շատ է, քան պատմությունը (միայն վերնագիրն ինչ ասես չարժե): Այդ պատճառով էլ սկսեցի գրախոսել այն՝ հակառակ «վաղեմության ժամկետին», մասնավորապես որ իմ համոզմունքներին նողկանք են առաջացնում հոդվածի շատ քաղաքական եզրակացություններ: Օրինակ՝ մեր հեղինակները գրում են, որ «... հիմնական հակասությունը (խոսքն ազգային շարժման սկզբնական փուլի մասին է - Լ. Մ. Շ.) անցնում էր ոչ թե Երևան-Մոսկվա, այլ Երևան-Բաքու կամ նույնիսկ՝ Երևան-Ստեփանակերտ-Բաքու առանցքով»: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես նրբորեն շրջանցվում է անցյալ դարի 80-ական թվականների գլխավոր հակասությունը՝ Ստեփանակերտ-Բաքուն, և թե ինչքան զգուշ ներշնչվում է վասն Լեռնային Ղարաբաղի Երևանի ու Բաքվի հակամարտության միտքը: Այսպիսով՝ 1991թ. սեպտեմբերի 2-ին Ղարաբաղցիների իրագործած ինքնորոշման իրավունքը փոխարինվում է Հայաստանի՝ Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություններով, անհասկանալի թանկ նվեր՝ ադրբեջանցի քաղաքական գործիչներին, ովքեր իրենց քարոզչությունը կառուցում են հենց այդ դրույթի վրա: Բարեբախտաբար

Ղարաբաղյան շարժումն ունի անբասիր իրավական հիմք, որը հնարավորություն է տալիս մեր քաղաքագետներին՝ արժանի ձևով վերջ տալ հարևանների քարոզչությանը: Սակայն դժվար թե վերոբերյալի նման հատվածները թույլ տան մեզ առաջադրանքներ դնել Բաքվի առաջ:

Սակայն երանի թե խոսքը միայն մեկ գրության մասին լիներ: Ծավալով ոչ մեծ հոդվածն այնքան առատորեն համեմատված է նմանատիպ քաղաքական կարծրատիպերով, որ

ստիպված ենք մտածել համակարգի կամ կանխամտածման մասին: Օրինակ՝ Արևմտյան Հայաստանի տարածքը ներկայացվում է որպես «մինչև ցեղասպանությունը հայերով բնակեցված» հողեր, իսկ իրենք՝ հայերը, ամբաստանվում են «հայ մշակույթի ձևի ու տեղի գերարժուրմամբ (հիպերոլիզացիա)»: Ես պատմաբան չեմ, բայց կարող եմ հենց այնպես թվարկել հայ մշակույթի և գիտության տասնյակ գործիչների անուններ, ովքեր համաշխարհային ճանաչում ունեն: Կարծում եմ՝ նույնը, բայց ավելի արդյունավետ, կարող են անել նաև հեղինակները, սակայն նրանք նախընտրել են այլ ճանապարհ:

Ընդհանրապես այդ հոդվածը ռուսաստանցի ընթերցողի համար կարող է տպավորություն ստեղծել, թե 20-րդ դարի 20-ական թվականներին հայ ժողովուրդը փաստորեն գոյություն չուներ, և միայն մեր երկրի խորհրդայնացումից հետո սկսվեց «հայոց լեզվի վերածննդի գործընթացը», երևաց «հայալեզու մամուլը», իսկ «փոխադարձ անհասկանալի» հայերենի բարբառները, ի վերջո, միասնական գրական լեզու ունեցան: Դժվար է հավատալ, որ հայ պատմաբաններին ծանոթ չէ Հակոբ Մեղապարտի անունը, թե նրանք իրազեկ չեն 19-րդ դարի տասնյակներով պարբերական հրատարակություններին (չխոսելով 1794-96 թթ. հրատարակված «Ազդարար» ամսաթերթի մասին), նրանք երբևէ չեն կարդացել 19-րդ դարի հայ բանաստեղծների հիասքանչ ստեղծագործությունները: Իսկ եթե գիտեն ու ծանոթ են, ապա պետք է եզրակացնել, որ հոդվածը պատվիրել են և այն էլ՝ հայ ժողովրդի բարին չկամեցողները:

Եթե հավատ ընծայենք հոդվածի դրույթներին, ապա հայ ժողովուրդը արհեստականորեն ծնված մի ազգ է, որը գրա-

կանուբյուրից փոխ է առել «վաղուց մոռացված հին հայկական անունները» և նույնքան արհեստականորեն վերածնել է իր լեզուն՝ ինչպես երբայերենը՝ Իսրայելում (հենց այդ օրինակն է բերված հոդվածում - Լ. Մ.-Շ.):

Մեր հեղինակների ևս մեկ դիտարկում. «Պատմությունն ու պատմաբանները «կոչվեցին» ազգային պայքարի օրինականացման գործին»: Ինչպե՞ս բացատրեն հեղինակներին, որ ազգային պայքարի օրինականությունը հաստատված ու հաստատագրված է արցախ-

Ընդհանրապես այդ հոդվածը ռուսաստանցի ընթերցողի համար կարող է տպավորություն ստեղծել, թե 20-րդ դարի 20-ական թվականներին հայ ժողովուրդը փաստորեն գոյություն չուներ ...

ցիների բազմաթիվ սերունդների կյանքով, իսկ դարաբաղցիների (ինչպես և ամեն ժողովրդի) ինքնորոշման իրավունքը հռչակված է միջազգային իրավունքի տասնյակ դրույթներով:

Իսկ ինչպե՞ս է հայոց գիտակցության մեջ ստեղծվել թուրքիայի կերպարը՝ որպես թշնամու: Պարզվում է, որ դա եղել է ոչ թե մեր Հայրենիքի զավթման և ոչ թե բազմադարյան անտանելի լծի հետևանքով, նույնիսկ ոչ թե թուրքիայում Հայոց ցեղասպանության հետևանքով՝ որպես հակադարձություն: «Արդեն գոյություն ունեցող «տառապալի բարդույթի» պայմաններում (ԽՍՀՄ-ի հայերի մեջ - Լ. Մ.-Շ.), առաջ քաշվեց այդ ժամանակների թուրքիայում հայերի անպաշտպան լինելու և հայ ժողովրդի փրկության մեջ Ռուսաստանի դրական դերի թեման... Հայոց զանգվածային գիտակցության մեջ խորապես հաստատվեց ռուսամետ կողմնորոշմանն այլընտրանք չլինելու դրույթը... Տվյալ դեպքում՝ պատմությունը խեղաթյուրվեց գիտակցաբար, որի հետևանքով զանգվածային գիտակցության մեջ ձևավորվեց թշնամու կերպար՝ ի դեմս թուրքիայի...»

Միևնույն ժամանակ Բ. Հարությունյանն ու Ալ. Իսկանդարյանը հավաստում են, որ «պարզապես արգելք (տաբու) էր դրված հայ քաղաքական մտքի այն մասի հետազոտության վրա, որը գոյություն է ունեցել մինչև 1915թ. ցեղասպանությունը և կողմնորոշվել էր թուրքիայի ուղղությամբ (ի դեպ, այդ արգելքը ինչ-որ չափով գոյություն ունի նաև այսօր)»: Եիշտն ասած՝ նույնիսկ նվազագույն չափով ձևավորված և որպես մի տեսակ տոտեմի՝ թուրքիայի ուղղությամբ կողմնորոշված հայկական քաղաքական միտք ինձ հայտնի չէ: Բայց, ահա, գրախոսվող հոդվածը հենց ինքն է ապացուցում խնդրո առարկա թեմայի վրա որևէ արգելքի չգոյությունը:

Բերեն ևս մեկ օրինակ՝ ոչ վաղ անցյալի հայ իրականության նկատմամբ հեղինակային զուգի մոտեցումից. «Մինչև 1988 թվականը գոյություն ունեին պատմության երեք տարբերակներ՝ «պաշտոնականը», «սփյուռքյանը» և «ժողովրդայինը»: Բոլոր երեքն էլ չափազանց առասպելականացված էին և հենվում էին հայոց «հնության», «քաղաքակրթվածության» և «տառապալության» վրա: Բոլոր երեք տարբերակներն էլ հատկանշվում էին «թթնկենտրոնությամբ» և «ցեղասպանության բարդույթով»: Տվյալ դեպքում, ես ուզում եմ հասկանալ հետևյալը. ա) եթե հայոց պատմության երեք «տարբերակներն» էլ այդքան նման են իրար, ապա ո՞րն է դրանց տարբերությունը, բ) ինչպե՞ս է ծագումով հայ Ալեքսանդր Իսկանդարյանին ու Բաբկեն Հարությունյանին հաջողվում խուսափել հայկական պատմական «առասպելների» համայնակուլ ազդեցությունից և վերազգային դիրքո-

րոշում որդեգրել, և, ի վերջո, գ) ինչպե՞ս կարելի է սարսափելի ցեղասպանության ու կորուսյալ Հայրենիքի հիշողությունը փոխարինել ինչ-որ առանց պատճառի ծագած «ցեղասպանության բարդույթով»: Եվ այս բոլորը՝ օտար ընթերցողի համար գրված հոդվածում...

Հետաքրքրական է, որ Օսմանյան կայսրության մեջ Հայոց ցեղասպանության ժողովրդային հիշողությանը հեղինակները մոտենում են վատ քողարկված հեզմանքով: Այսպես՝ «Բարձրացված հուշարձանի (Ծիծեռնակաբերդի - Լ. Մ.-Շ.) վայրը սիրված տեղ դարձավ ամենամյա ... ցույցերի համար»: Հեղինակները նույն հեզմանքով են վերաբերվում նաև 1918-20 թվականների Հայաստանի Հանրապետությանը՝ այն անվանելով «այսպես կոչված Առաջին Հանրապետություն»:

Կարդավով հոդվածը՝ չես դադարում զարմանալուց, թե իրո՞ք մեզ մոտ այդքան վատ է: «Օրինակ՝ Ղարաբաղում, որտեղ շատ-շատ են ավերածությունները, իսկ սոցիալական պայմանները՝ սարսափելի, առաջին հերթին եկեղեցիներն են վերականգնվում: Բնակչությունը դա ընկալում է որպես... Ղարաբաղի նկատմամբ իրավունքի օրինականացում: Պատմական հուշարձանները զանգվածային գիտակցության մեջ ևս մեկ ապացույց են այդ տարածքներում հայերի «տեղաբնիկության» մասին» (չակերտները հոդվածի հեղինակներին են - Լ. Մ.-Շ.): Ստիպված ենք կարծել, որ հեղինակները կամ չեն եղել Արցախում, կամ, եթե նույնիսկ եղել են, ապա տեսել են միայն այն, ինչ ցանկացել են տեսնել: Կարող են վկայել, որ Ստեփանակերտում ամբողջովին վերակառուցված է: Ավելին՝ քաղաքն առավել գեղեցիկ ու հարմարավետ դարձավ, քան էր մինչև պատերազմը: ԼՂՀ-ում, այլոց շարքում, մինչև հիմա չի նորոգվել I-IV դարերում հիմնված Դադիվանքը: Բայց չէ՞ որ, եթե հետևենք հեղինակների տրամաբանությանը, հենց նրանից պետք է սկսեր Արցախում հայոց տեղաբնիկության «ապացուցումը»: Ղարաբաղցի, ինչպես և շիրակցի, լոռեցի, սյունեցի և բոլոր հայերը կարիքը չունեն Հայրենիքի հետ ծագումնաբանորեն զգացվող կապի նյութական հաստատումների:

Ընդհանուր առմամբ՝ հոդվածի հեղինակները Ղարաբաղի նկատմամբ հատուկ մոտեցում ունեն. մինչև իսկ հորինել են եզրույթ՝ «Հայոց պատմության «ղարաբաղացումը»»: Ստացվում է, որ իբր բոլոր հայ պատմաբանները լծվել են Արցախը Հայաստանին պատկանելության ապացուցման գործին: Ու թեև նման թեման պահանջարկ ուներ, նրանք (հայ պատմաբանները - «Շրջադարձ») դրանում ոչ մի մասնակցություն չունեցան, չենթարկվեցին ժամանակների իրադրությանը: Այստեղ արժե ասել՝ «եվ փա՛ռք Աստոծ»: Սակայն ականա մեր հիշողությանն են գալիս հայ պատմաբանների բազմաթիվ աշխատությունները՝ սկսած վաթսու-



Ա. Իսկանդարյան

Եթե հավատ ընծայենք հոդվածի դրույթներին, ապա հայ ժողովուրդը արհեստականորեն ծնված մի ազգ է ...

նական թվականներից, ովքեր առանց հոգնելու մերկացնում էին ադրբեջանցի պատմաբան-քարոզիչների ցնդաբանությունները: Նրանցից շատերը դեռ ողջ են, և մեզ վայել չէ նրանց երախտագիտության արժանի գործերը մոռացության տալ:

Հոդվածի հեղինակների արևմտամետ տրամադրություններն զգացվում են համարյա բոլոր պարբերություններում:

Կարելի էր դրան ուշադրություն չդարձնել՝ կամքի ուժ դրսևորելով, եթե տվյալ քարոզչությանը ժամանակ առ ժամ

Ղարաբաղցի, ինչպես և չիրակցի, լռոնցի, սյունեցի և բոլոր հայերը կարիքը չունեն Ղայրենիքի հետ ծագումնաբանորեն զգացվող կապի նյութական հաստատումների:

մանակ չավելացվեին բացահայտ ստի առատ չափաբաժիններ: Օրինակ՝ պարզվում է, որ Լ. Տեր-Պետրոսյանի նախագահության տարիներին Ղայաստանում «պարտվածի բարդույթի փոխարեն ստեղծվեց հաղթականի բարդույթը...»: Նաև՝ «... նախագահների փոփոխությունը հանգեցրեց ցեղասպանության թեմայի վերստին արդիականացմանը, ընդ որում՝ արտաքին քաղաքականության ոլորտում»:

Տարօրինակ է, որ հողվածի հեղինակները «մոռացել են» Տեր-Պետրոսյանի հրաժարականի հանգամանքներն ու գլխավոր (եթե ոչ միակ) պատճառը: Ղայ ժողովուրդը դիմացավ պատերազմի տարիներին Լ. Տեր-Պետրոսյանի վարչախմբի ստեղծած բոլոր հնարավոր ու անհիմն դժվարություններին և դրանք կրեց հենց այն պատճառով, որ պատրաստ էր ամեն ինչ դնել հաղթանակի զոհասեղանի վրա: Սակայն երբ «հաղթանակի բարդույթ ստեղծող» Տեր-Պետրոսյանն սկսեց պարտվողական գաղափարներ քարոզել, երբ սկսեց հայ ժողովրդին սարսափեցնել Ադրբեջանի հզորությամբ, որի վկայությունն է նրա «Պատերազմ, թե՛ խաղաղություն» «հռչակավոր» հոդվածը, ժողովուրդը երես թեքեց նրանից: Չկասկածե՛ք՝ «մեզ լավ ծանոթ ուժերից» մեկնումեկը կորոշե՛ր նրա պաշտոնագրությունը, եթե Տեր-Պետրոսյանի թիկունքին լիներ ժողովրդի նեցուկը: Ընդհակառակն, արտաքին քաղաքականության մեջ Ռ. Քոչարյանի կարևորագույն նվաճումներից համարվող Ղայոց ցեղասպանության ճանաչման հարցի արդիականացումն ամբողջ աշխարհում՝ թաքուն կերպով ներկայացվում է որպես զանգըրվածների գիտակցության վրա քաղաքականության ժխտական օրինակ: Արդյո՞ք այդքան դժվար է նկատել, որ արտա-

քին քաղաքական ճակատում ամեն քիչ թե շատ լուրջ հաղթանակը ոգեշնչում է ժողովրդին, նրան մղում նորանոր սխրանքների:

Բայց դա ինչո՞ւ է նս պետք է ասեն: Չէ՞ որ Ղարությունյան - Իսկանդարյան գույզը չի խորշում հայկական պետության անկախության տարիները անվանել «անցումային ժամանակաշրջանի տասը տարիներ»: Անկեղծ ասած՝ տվյալ արտահայտության իմաստը հասկանալի չէ: Կամ այն է, որ այստեղ գտնվում ենք «անցումային» վիճակում և շուտով պիտի լքենք երկիրը, կամ էլ մեր երկիրն ապրում է մի «անցումային ժամանակ», որն անկախություն է կոչվում, ինչը ենթադրում է մոտակա ժամանակներում նրա ենթարկումը մշտապես գոյություն ունեցող պետություններից մեկն ու մեկին:

Ղամոզված են, որ հայ ժողովուրդը այդ բավականությունը որևէ մեկին չի պարզելու: Ո՛չ նրանց, ովքեր նման «գիտական աշխատանքներ» են պատվիրում, ո՛չ էլ նրանց, ովքեր պատրաստակամորեն շարադրում են դրանք:

Լևոն Մելիք-Շահնազարյան

(հոդվածը գրվել է «Ղե Ֆակտո» տեղեկատվական-վերլուծական գործակալության համար, ռուսերեն - խմբ.)

Յ. Գ. - Բ. Ղարությունյանը սույն թվականի ապրիլի 21-23-ը դասախոսություններով հանդես եկավ Ղայելում՝ «Գերմանիկ-Վասպուրական» միության սրահում: Բացահայտելու համար սույն պարոնի պատեհապաշտ նկարագիրը, «Շրջադարձի» խմբադասությունը այս հրապարակումը, Ալեքսանդր Գրիգորյանի գրախոսության տեսությունն ու Գևորգ Յազըճյանի նկատողությունները ցրվեց Ղայելում, ինչպես նաև ընդառաջելով Բեյրութի «Արարատ» շաբաթաթերթի խմբագրության խնդրանքին, այս բոլոր նյութերը տրամադրեց «Արարատին», որոնք լույս տեսան թերթի ապրիլի 23-29-ի ապրիլյան բացառիկ համարում:

«Շրջադարձ»

ԱՆԴՐԿՈՎԿԱՊՄ, ԹԵ՞ ՂԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ



Մի քանի տարի առաջ քաղաքական բառապաշարում հայտնվեցին «նոր» տեղանուններ՝ «Ղարավային Կովկաս» և «Կենտրոնական Ասիա»: Այս անվանումները հեղինակեցին ԱՄՆ-ի քաղաքագետները՝ իրենց կազմակերպած (և անցկացվելիք) միջազգային համաժողովներում: «Նորածին» տեղանուններն աստիճանաբար սկսեցին գործածվել նաև տեղերում:

«Նոր» տեղանունները քաղաքական իմաստ ունեն:

«Ղարավային Կովկասն» ընդգրկում է ԽՍՀՄ նախկին երեք հանրապետությունների՝ Ղայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի տարածքը, որն անվանվում էր Անդրկովկաս: «Կենտրոնական Ասիան» ընդգրկում

է ԽՍՀՄ նախկին հինգ հանրապետության՝ Ղազախստանի, Ղազբեկստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Թուրքմենստանի տարածքը, որը նախկինում անվանվում էր Միջին Ասիա:

Ինչո՞ւ են «նոր» տեղանունները քաղաքական: Պատասխանը նախ և առաջ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի երկրների՝ նշված տարածաշրջաններում հետապնդած շահերի մեջ է: Ղետամուտ լինելով այս տարածաշրջաններն իր ծրագրած (և կառուցվող) անվտանգության համակարգերի մեջ ընդգրկելուն՝ ԱՄՆ-ի քաղաքագետներն առաջին հերթին հորջորջեցին «նոր» տեղանունները՝ «Ղարավային Կովկաս» և «Կենտրոնական Ասիա»: Անվտանգության նոր համակարգերի ստեղծումն այս տարածաշրջաններում, հին տեղանուններով, կարող էր բարդացնել ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի փոխհարաբերությունները՝ Ռուսաստանի Դաշնության հետ: ԽՍՀՄ տարիներին այս տարածաշրջաններն ընդգրկված էին անվը-

տանգության համակարգում՝ հետևյալ անվանումներով՝ Ղարավային ուղղություն՝ Անդրկովկաս և Արևելյան ուղղություն՝ Միջին Ասիա:

Քաղաքագետներն ու միջազգային կազմակերպությունները խնդիր էին դրել միջազգային ասպարեզում առավել հաճախ օգտագործել «Ղարավային Կովկաս» և «Կենտրոնական Ասիա» տեղանունները և այնքան ժամանակ, մինչև նշված տարածաշրջանների բնակչությունը և երկրների ղեկավարներն սկսեն «ընկալել» այն:

Այսօր կարելի է նշել միայն, որ «գործընթացը» շատ «հաջող» է ընթանում: Ավելին՝ «նոր» տեղանունները շրջանառության մեջ դնելուն զուգընթաց սկսել են իրագործվել ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի շահերը պաշտպանող անվըտանգության համակարգերի կառուցման գործընթացները:

Ռոզա Գաբրիելյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ...

Փետրվարի 20-ին ֆրանսիական «**Լը Մոնդո**» օրաթերթը բացահայտեց, որ «**Մեծ Միջին Արևելք**» ամերիկյան նախագծի հեղինակները մտադիր են ԱՄՆ-ի Ֆլորիդա քաղաքում առաջիկայում տեղի ունենալիք զարգացած Մեծ յոթնյակի գազաթնաժողովում հաստատել այդ «ծրագիրը» և ներկայացնել Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին: Վաշինգտոնը վերջիններից, նախագիծն իրականացնելու համար, տնտեսական, դիվանագիտական և ռազմական աջակցություն է պահանջելու:



Այս հրապարակումը խիստ դժգոհության ալիք բարձրացրեց խնդրո առարկա տարածաշրջանի երկրներում, մասնավորապես՝ Իրանում, Եգիպտոսում, Սիրիայում և Սաուդյան Արաբիայում:

Արևմտյան փորձագետները պնդում են, որ այդ նախագիծը հիմնականում ուղղված է միջազգային ահաբեկչության վերացմանը, որը, ըստ նրանց, գլխավորապես հենց տվյալ տարածաշրջանի երկրներում է ծնունդ առել և արմատավորվել՝ թիրախ դարձնելով Արևմուտքը: Սակայն, քաղաքական մեկնաբաններից շատերի կարծիքով՝ «**Մեծ Միջին Արևելք**» նախագծի իրագործումը կհանգեցնի Արևմուտքի և իսլամական աշխարհի տարանջատման խորացմանը:

Նշենք, որ Միջին Արևելքի և ընդհանրապես արաբական աշխարհի ժողովրդավարացման խնդիրը ԱՄՆ-ն իր համար օրակարգային է դարձրել: 2003 թվականից, ամերիկացի բարձրաստիճան պաշտոնատարները տարբեր առիթներով շեշտում են դրա անհրաժեշտությունը: Ջորջ Բուշ կրտսերի վարչակազմին մոտ կանգնած Դեյվիդ Սինգրըրը դեռևս 2003թ. ապրիլի 9-ին հայտնել էր, որ իրաքյան պատերազմը Վաշինգտոնի՝ առավել հեռուն գնացող ռազմավարության լոկ առաջին քայլն է, որի նպատակներն են տարածաշրջանում ժողովրդավարության հաստատումն ու ահաբեկչության դեմ պայքարը (RFI ռադիոկայան, 9 ապրիլի, 2003թ.): 2003թ. մայիսին մեկօրյա այցով Դամասկոս ժամանած ԱՄՆ պետքարտու-

ղար Քոլին Փաուելը հայտարարեց, որ վերափոխվող Միջին Արևելքում հին քաղաքականություններն այլևս տեղ չունեն: Այս ռազմավարական նպատակի համատեքստում, Վաշինգտոնը խրախուսում է այդ երկրներում ժողովրդավարական ամեն բարեփոխում, այդ թվում՝ Մարոկկոյի արքա Մոհամեդ 6-րդի 2003թ. հոկտեմբերի 11-ի ներկայացրած բարեփոխումների ծրագիրը, Սիրիայի նախագահ Բաշշար Ասադի ժողովրդավարական բարեփոխումները և Սաուդյան Արաբիայում ընթացիկ տարում առաջին անգամ ընտրություններ անցկացնելու մասին որոշումն ու մամուլի սահմանափակ ազատությունը, որն այդ երկրում մեկ տարի առաջ լիովին բացակայում էր: Փորձագետների միահամուռ կարծիքով՝ արաբական բոլոր երկրների ղեկավարներն իշխանությունը պահելու խնդիր ունեն: Ըստ նրանց, թեև արաբական երկրներում իշխող վարչակարգերը հաճախ բռնապետական բնույթ ունեն և ապականված են, սակայն համուն իշխանության պահպանման պատրաստ են բարեփոխումների ուղղությամբ քայլեր կատարել, ինչը թերևս իրենց համար խիստ ցավազին կլինի:

Սակայն արաբական վարչակարգերը հազիվ թե լուրջ քայլեր ձեռնարկեն ընդդեմ հասարակության կառուցվածքի և ազգային ու կրոնական ավանդույթների, քանզի բացառված չէ, որ դրանք ուղի կհանեն իշխանություններից դժգոհ, առավելապես հակամերիկյան տրամադրությամբ բնակչությանը: Մինչդեռ Վաշինգտոնն ընդգծում է, որ «**Մեծ Միջին Արևելք**» նախագծի իրականացմամբ ցանկանում է տարածաշրջանում ժողովրդավարություն հաստատել, ազատականացնել տնտեսությունը, բարեփոխել կրթական համակարգը և հասարակության մեջ բարձրացնել կնոջ դիրքն ու դերը: Առավել կարևոր նշանակություն ունեն վերջին երկու ոլորտներում փոփոխությունները, որոնք ուղղակիորեն առնչվում են ավանդապահ արաբ ժողովրդի բարոյափոխմանը: Գլխավորապես սրանով պետք է պատճառաբանել նշյալ տարածաշրջանի իսլամական երկրների ընդդիմադիր կեցվածքը այդ փոփոխություններին:

Մարտի 3-ին Կահիրեում տեղի ունեցավ Արաբական լիգայի ԱԳ նախարարների արտահերթ համաժողովը, որտեղ

մշակվեց և հաստատվեց «Համատեղ փաստաթուղթ» անունը կրող նախագիծը: Արաբական առավել նշանակալից և միաժամանակ առավել մտահոգ երկրները՝ Եգիպտոսը, Սիրիան և Սաուդյան Արաբիան, որոշել են ԱՄՆ նախագծի դեմ՝ մշակել սեփականը՝ համապատասխան այդ երկրների հասարակությունների կառուցվածքի: Այս քայլով, արաբները ցանկանում են ասել, թե Վաշինգտոնի պարտադրած ժողովրդավարացման նախագիծն անվերապահ տուրք չեն տալիս: Արևմտյան մեկնաբանները շեշտում են հիշյալ համաժողովի քննարկումների հետևյալ առանցքային հարցերը.

ա) ժողովրդավարացումն անհրաժեշտ է և պետք է ընդունել, սակայն այդ գործընթացում հարկավոր է հաշվի առնել նաև տվյալ երկրի պայմաններն ու առանձնահատկությունները: Օրինակ՝ Սաուդյան Արաբիայում ժողովրդավարացումը պետք է իրականացվի փուլ առ փուլ. այլապես՝ որևէ լուրջ և կտրուկ փոփոխություն կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Եգիպտոսի նախագահ Զուսեյն Մուբարաքը շեշտում է այն տեսակետը, թե սրընթաց բարեփոխումների իրականացումը կհանգեցնի արաբական վարչակարգերի կործանմանը և հասարակությունների քայքայմանը:

բ) ԱՄՆ-ի գործադրած ճնշումները որոշ չափով վերաբերում են Իսրայել-Պաղեստինյան ինքնավարություն (ՊԻ) հիմնահարցին: Արաբ ԱԳ նախարարները, քննարկելով այդ հարցը, վերահաստատեցին Սաուդյան Արաբիայի ներկայացրած նախագիծը: 2002թ. փետրվարի 20-ին, Սաուդյան Արաբիայի թագաժառանգ Աբդուլլա բին Աբդուլ-Ազիզը միջինարևելյան հիմնահարցում առաջացած խոր ճգնաժամից դուրս գալու ելք առաջարկեց, որն ակնհայտորեն դրական արձագանք գտավ ԱՄՆ-ում, արաբական աշխարհում, որոշ բացառություններով՝ նաև Եվրամիությունում: Այդ առաջարկության հիմքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 338-րդ և 242-րդ բանաձևերն էին. ըստ Աբդուլլայի նախագծի՝ Իսրայելն իր գործերը դուրս է բերում 1967թ. արաբա-իսրայելական վեցօրյա պատերազմի ընթացքում գրաված տարածքներից, որի դիմաց արաբական երկրները պաշտոնապես ճանաչում են Իսրայելի պետությունը՝ բնականոն հարաբերություններ հաստատելով նրա

հետ: Այլ կերպ՝ կյանքի երկու կողմերը «հող՝ խաղաղության դիմաց» սկզբունքը, որը 1991թ. մարտի 1-ին համաժողովի և 1993թ. Օսլոյի պայմանագրի հիմքն է և որն առ այսօր մնում է թղթի վրա, քանզի թեև Ավիվը մտադիր չէ իրականացնել ո՛չ ՄԱԿ-ի բանաձևերը և ո՛չ էլ իր պայմանագրային պարտավորությունները:

Արաբական լիգայի անդամ երկրների ԱԳ նախարարների արտահերթ համաժողովը լրացուցիչ հաստատեց նաև Իսրայել-ՊԻ հիմնահարցի շուրջ մի խումբ իսրայելացի և պաղեստինցի չափավորական քաղաքական գործիչների ու մտավորականների մշակած և 2003թ. դեկտեմբերի 1-ին ստորագրած «Ժնևյան նախագիծը», որն զգալի ընդհանրություններ ունի Աբուլլայի նա-

խագծի հետ: Համաձայն դրա՝ ՊԻ-ն պաշտոնապես ճանաչում է Իսրայելի պետությունը, վերջինս նահանջում է 1967թ. սահմանները՝ բացառությամբ որոշ հատվածներից, որոնց խնդիրը լուծվում է տարածքների փոխանակությամբ: Ժնևյան նախագծով՝ պաղեստինցի փախստականների միայն որոշակի մասն է վերադառնալու Իսրայել, Երուսաղեմը դառնալու է երկու երկրների մայրաքաղաքը՝ Արևելյանը՝ Պաղեստինի, իսկ Արևմտյանը՝ Իսրայելի:

Արաբական լիգայի ԱԳ նախարարների մարտի 3-ի համաժողովի հաստատած փաստաթուղթը պետք է քննարկվեր արաբ ղեկավարների գագաթնաժողովում, որը նախատեսվում էր մարտի 29-ին, Թունիսում: Սակայն անդամ երկրների ԱԳ նախարարներին չհաջող-

վեց համաձայնության գալ գագաթնաժողովի օրակարգի շուրջ, ուստի գագաթնաժողովն անորոշ ժամանակով հետաձգվեց: Տարածայնությունները գլխավորապես վերաբերվում էին ո՞ր հարցին առաջնահերթություն տալուն՝ Միջին Արևելքի խաղաղության գործընթաց, թե՞ արաբական աշխարհի ժողովրդավարացում: Գագաթնաժողովի հետաձգմանը խիստ դեմ էր Եգիպտոսը, որը պնդում է, թե գլխավոր հարցը պետք է երկրորդը լինի, մինչդեռ Սիրիան կարևորում է միջինարևելյան հիմնախնդիրը: Կահիրեն ԱԳ նախարարների միջև ծագած տարածայնությունները բնական համարելով հանդերձ, դրանք բավարար հիմք չի նկատել գագաթնաժողովը հետաձգելու համար:



Միջին Արևելքի սահմանների փոփոխության անհրաժեշտությունը՝ ըստ Բեռնար Լուիսի

ԱՄՆ-ի նոր ազգայնաբանության նախագծի բաղկացուցիչ մասը կազմող Միջին Արևելքի սահմանների փոփո-

խության գաղափարը շրջանառության մեջ է մտել դեռևս 1992թ. աշնանը, երբ ամերիկյան «Ֆորեյն աֆֆերզ» (Foreign Affairs) պարբերականի համարներից մեկում հրապարակվեց Փրինստոն համալսարանի Միջին Արևելքի հետազոտությունների բաժնի պրոֆեսոր, հայտնի իսլամագետ (*ի դեպ՝ Հայկական ցեղասպանության հարցում թուրքական պաշտոնական տեսակետի մունետիկ - խմբ.*) Բեռնար Լուիսի «Միջին Արևելքը հիմնովին փոխվել է» ծավալուն հոդվածը: Հեղինակը բացատրում է Միջին Արևելքի սահմանների ընդարձակման անհրաժեշտությունը, այդ տարածաշրջանում ընդգրկելով նաև Միջին Ասիայի նորանկախ հանրապետություններն ու Ադրբեջանը (այդ խնդրին նվիրված համաժողովներ գումարվեցին, այդ թվում՝ Իսրայելում՝ 1998թ. ամռանը, որին մասնակցել է նաև ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Հովհաննիսյանը):

Լուիսը Միջին Արևելքում փոփոխությունների անհրաժեշտությունը բխեցրել է տարածաշրջանային և միջազգային մակարդակով տեղի ունեցած երկու խոշոր իրադարձություններից՝ Քուվեյթ-Իրաք պատերազմից և «սառը պատերազմի» ավարտից (ԽՍՀՄ-ի փլուզումից): Նա շեշտել է, որ կարևոր իրադարձությունները արագորեն պատմության գիրկն են անցնում, սակայն դրանց

հետևանքով ստեղծված փոփոխությունները հասկանալու համար ավելի երկար ժամանակ է անհրաժեշտ (այսօր ակնհայտ է, որ Միջին Արևելքում շատ մեծ փոփոխություններ են տեղի ունեցել - Է. Բ.): Լուիսն իբրև Քուվեյթ-Իրաք պատերազմի հստակ հետևանք է գնահատել պանարաբիզմի պարտությունը, որն արաբական աշխարհի պարտությունն է՝ որպես քաղաքական իրականություն, և ընդգծել է, որ իբրև արաբական աշխարհի միասնական քաղաքականություն ձևավորող ուժի այդ գաղափարախոսության անկումը կարելի է ստուգել այդ երկրների՝ պաղեստինցիներին հովանավորության չափանիշով: Նա հավելել է, որ 1948թ. արաբական աշխարհը միահանուր և ողջ ուժով դեմ էր Պաղեստինը երկու մասի բաժանելուն և Իսրայելի պետության ստեղծմանը, մինչդեռ 1982թ., երբ Իսրայելը ներխուժեց Բեյրութ և Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը ջախջախիչ հարված կրեց, արաբական աշխարհի արձագանքը բավական մեղմ եղավ: Նա մեղմ է բնութագրել նաև Իրան-Իրաք պատերազմի նկատմամբ արաբների վերաբերմունքը:

Լուիսի վերջին տեսակետին կարելի է չհամաձայնել, քանզի, բացառությամբ Սիրիայի, ողջ արաբական աշխարհը հովանավորում էր Իրաքին՝ ի դեմս Սադդամ Հուսեյնի տեսնելով իրանական իսլամական հեղափոխության արտածմանը դիմակայող գլխավոր պատուհնը: Ավելին՝ այդ պատերազմը թափ հաղորդեց պանարաբիզմին:

Բեռնար Լուիսը Քուվեյթ-Իրաք պատերազմը բնութագրել է իբրև պատերազմ՝ արաբական երկրների միջև, շեշտել, որ ԱՄՆ-ը հարկադրաբար ներքաշվեց դրա մեջ՝ հանուն «ազատ աշխարհի ընդհանուր շահերի» (իսկ թե

նով հրահրեց, ինչպե՞ս բռնկվեց, ո՞ւմ էր ձեռնտու այդ պատերազմը, նա լռում է - Է. Բ.): Նա նշել է, որ չափազանցություն կլինի ասել, թե վախճանվել է համաարաբական գաղափարը, սակայն այսօր այդ գաղափարի կրողները արաբական աշխարհից դուրս ապրող մտավորականների փոքր խմբեր են. պանարաբիզմը այլևս ո՛չ միջազգային քաղաքականության, ո՛չ միջարաբական, ո՛չ անգամ արաբական երկրների ներքին քաղաքականության ոլորտում կարևոր գործոն չէ:

Ըստ Լուիսի՝ պատերազմի ընթացքում նավթի զների կայունությունը ապացուցել է, որ նավթը, որպես քաղաքական գործոն, կորցրել է իր երբեմնի նշանակությունը: Լուիսը սա գնահատել է այս պատերազմի իբրև երկրորդ կարևոր ու հիմնական փոփոխությունը:

Լուիսը միաժամանակ շեշտել է, որ «սառը պատերազմի» ավարտի ու ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով ընդհանուր փոփոխությունների մեջ ամենակնհայտը, ամմիջականը և, հավանաբար, ամենակայունը տարածաշրջանային փոփոխությունն է, «Միջին Արևելքի» նոր սահմանումը: Այս եզրույթը 20-րդ դարի սկզբին շրջանառության մեջ դրեց Արևմուտքը: Մինչ այդ «Միջին Արևելք» հասկացությունն ընդգրկում էր միայն Պարսից ծոցի շուրջ գտնվող երկրները: Հետագայում թեև այս տարածքի սահմանները հարավից, արևելքից և արևմուտքից լուրջ հավելումներ կրեցին, սակայն հյուսիսային սահմանը, որը «միշտ էլ արհեստական, սոփեստական և անբնական է եղել», Ռուսաստան-ԽՍՀՄ-ի հետ էր և կայուն: 1991թ., վերջինիս փլուզումից հետո, վերացել է այդ տարածաշրջանային գիծը: Լուիսն ընդգծել է, թե եվրոպական վերջին կայսրության փլուզումով

և ԽՍՀՄ-ի հարավային հանրապետությունների անկախացմամբ Միջին Արևելքը գտավ իր պատմական սահմանները: Այս վեց հանրապետությունների (Ադրբեջան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ղրղզստան և Ղազախստան) բնակչության մեծամասնությունը մահմեդականներ են և սահմանակից Միջին Արևելքում ապրող, նույն լեզուն և նույն կրոնն ունեցող ժողովուրդներին:

Ըստ Լուիսի՝ փոփոխված նոր պայմաններում խիստ կարևորվում է նաև արաբա-իսրայելյան հակամարտությունների կարգավորման հարցը. իր հարևան երկրների հետ խաղաղության մեջ գտնվող Իսրայելը կարող է նպաստել տարածաշրջանում կայուն վիճակ ստեղծելուն: Լուիսի կարծիքով՝ արաբներից շատերը հասկացել են, որ Իսրայելը նրանց ամենահրատապ խնդիրը չէ, ոչ էլ ամենալուրջ վտանգը:

Սակայն, ի հեճուկս Լուիսի ու նրա համախոհների, խաղաղության բանակցություններն արդյունավետ դարձնելու նպատակով ԱՄՆ ճնշումներն առ այսօր ի դերն ելան: Իսրայելը տևական սպառնալիք է շրջանի խաղաղությանը, մինչդեռ այժմ, երբ ԱՄՆ-ն արաբական աշխարհի ժողովրդավարացման խնդիր է առաջ քաշում, դարձյալ կարևոր դեր է վերապահում Իսրայելին:



Գործնական քայլեր՝ «Մեծ Միջին Արևելք» նախագծի իրագործման ուղղությամբ

րը պարտադրել այդ երկրներին: Ինչ էլ լինեն քողածածկույթները, ակնհայտ է, որ **«Մեծ Միջին Արևելք»** ամերիկյան նախագծի նպատակը տարածաշրջանում ԱՄՆ-ի գերակայող դիրքերի և ազդեցության ամրապնդումն է և տարածաշրջանի տնտեսության ու բնական պաշարների վրա գերակայության հաստատումը: Այլ կերպ նախագծի բուն նպատակը ամրագրումն է գաղութատիրական նոր հարաբերությունների, որոնց շրջանակներում խարխվելու են ազգային ավանդույթների ու արժեքների հիմքերը: Ազգային ինքնիշխանության իրավունքը միջազգային մակարդակով այլևս հարգված սկզբունք չէ, ինչպիսին էր ոչ հեռու անցյալում, երբ զարգացող երկրների իշխանությունները, թերևս սահմանափակ, բայց և այնպես երկիրն անկախ ղեկավարելու հնարավորություն ունեին, որից զրկվելու են դրսից թելադրված «ժողովրդավարության» պայմաններում: Նախագծի շուտափույթ իրագործման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև տարածաշրջանի երկրներում, մասնավորապես արաբական աշխարհում շեշտված հակամերիկյան տրամադրություններով, որոնք մասամբ ուղղված են նաև տվյալ երկրների ամերիկամետ վարչակարգերի դեմ: Այդ ամենը կհանգեցնեն այդ վարչակարգերի փլուզմանը և հակամերիկյան, թերևս ազգային-կրոնական վարչակարգերի հաս-

տատմանը, որոնք խիստ վտանգավոր և անցանկալի են ԱՄՆ-ի ու նրա անվերապահ հովանավորությունը վայելող Իսրայելի համար:

Արևմտյան վերլուծաբաններն ու նախագահ Բուշի վարչակազմը պնդում են, թե **«Մեծ Միջին Արևելք»** նախագծի իրագործումը, հետևաբար՝ տարածաշրջանի ժողովրդավարացումը, կնրպաստի ահաբեկչության վերացմանը: Իրաք ներխուժումը ապացուցեց, որ բռնապետական վարչակարգերը որևէ առնչություն չունեն ահաբեկչության հետ: Սադդամ Հուսեյնի իշխանության օրոք Իրաքում ահաբեկչական դեպքեր չէին արձանագրվում, եթե չհաշվենք վարչակարգի հակառակորդների ոչնչացմանն ուղղված իշխանությունների գործողությունները: Մինչդեռ Իրաքի «ժողովրդավարացման» մեկամյա ժամանակահատվածում այդ երկիրը վերածվեց միջազգային ահաբեկչության կենտրոնի: Ավելին՝ այդ նախագծի գլխավոր փորձադաշտ Իրաքում տիրող իրավիճակը պարարտ հող է ստեղծել կրոնական բախումների համար, որի կողմնակիցները քիչ չեն մեծ տերություններում: Նման բախումների աղետալի հետևանքներից մեծապես տուժելու են Հայաստանի Հանրապետությունն ու հայ ժողովուրդը:

**Էմմա Բեգիջանյան
5 ապրիլի, 2004թ.**

Համեմատելով Բեռնար Լուիսի թրվարկած փոփոխությունները իրաքյան վերջին պատերազմից հետո տեղի ունեցածների հետ՝ նկատում ենք նույն փոփոխությունների խորացված տարբերակները: Ըստ երևույթին հենց դրանով էլ պայմանավորված է Միջին Արևելքի սահմանների առավել ընդարձակումը արևմուտքից ու արևելքից՝ հաշվի առնելով իսլամական գործոնը: Սակայն եթե 1992թ. տարածաշրջանի դեպի հյուսիս ընդարձակումն արաբական երկրներն ընդունեցին ի գիտություն և ոչ ուրախությամբ, ապա այս դեպքում, երբ նախատեսվում է նաև այդ տարածաշրջանի ժողովրդավարացումը, խիստ դժգոհություն է առաջացել արաբական աշխարհում: ԱՄՆ պետքարտուղարության երրորդ դեմքը՝ Մարկ Ռոսմանը, մարտի 5-ին Բյուրսել էր ժամանել՝ Եվրամիության և ՆԱՏՕ-ի պաշտոնատարներին **«Մեծ Միջին Արևելք»** նախագծի նպատակներն ու էությունը բացատրելու և նրանցից դրա իրագործման նեցուկ ապահովելու նպատակով: Սակայն Ֆրանսիան ու Գերմանիան ԱՄՆ-ից պահանջեցին մշակել լրացուցիչ նախագիծ, որտեղ առանցքային կլինի միջինարևելյան հիմնահարցի լուծումը (RFI ռադիոկայան, 5 մարտի, 2004թ.):

«Մեծ Միջին Արևելք» նախագծի նկատմամբ արաբական աշխարհի հակադրությունը մեղմելու նպատակով Վաշինգտոնը որոշ քայլեր է կատարում: Մարտի 20-ին պետքարտուղար Քոլին Փաուելը Քուվեյթում հայտարարեց, որ Միջին Արևելքում ժողովրդավարական բարեփոխումները պետք է կատարվեն տարածաշրջանի երկրների ներսից, շեշտելով, որ ԱՄՆ-ը նպատակամղված չէ այդ փոփոխությունները

ԱՄՆ-ում լույս տեսնող «Պալեստինյան քրոնիքլ» շաբաթաթերթի 2004թ. մայիսի 13-ի համարում լույս է տեսել Սառա Հոուլենի «Մի երեկո Բեռնարդ Լուիսի հետ. ահաբեկիչներ, թեյ և աստվություն» հոդվածը՝ Նյու Օռլեանի հրեա համայնքի հետ Լուիսի հանդիպման մասին: Հանդիպման ընթացքում Լուիսն ահաբեկիչ է անվանել շարիաթի կանոններով առաջնորդվող բոլոր մուսուլմաններին: **«Միակ լուծումն արաբական աշխարհի արևմտյան վերագաղութացումն է, որն սկսվել է Իրաքով»**, հայտարարել է նա ու ավելացրել. **«Ամերիկա-հրեական-օսմանյան կայսրությունն սպասում է»**: Նկատի ունենալով խանդավառված ունկնդիրներին, «որոնցից շատերը Հոլոքոստի զոհերի ու վերապրողների սերունդներ են», Հոուլենը հարց է տալիս. «Գիտե՞նք, որ ֆրանսիական դատարանը ժամանակին տուգանել է նրան [Բ. Լուիսին]՝ Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար: Արդյոք նրանք գիտե՞նք, որ այդ օրը՝ ապրիլի 24-ը, Հայոց ցեղասպանության 89-րդ տարելիցի օրն է»:

«Շրջադարձ»

SHRJADARDZ IN BRIEF

Editorial – What They and We Want?

The recently frequent facts of recognition of the Armenian Genocide are discussed and the “Armenian Cause” concept is defined. The “solution” of the latter by only recognizing the Armenian Genocide is declared a plot.

Hasmik Goulakyan, Heroic Battles of May 1918

The Sardarapat, Karakilissa and Bash-Aparan heroic battles are presented and their historical importance is assessed.

Colonel Nikolay Korganov’s Report to the Armenian Corps Commander

An eyewitness and participant report about Karakilissa heroic battle of May 1918.

Hasmik Goulakyan, The Victory of the Armenian Spirit

Interview with Jirair Sefilyan, a repatriate from Lebanon and the commander of Shoushi “Special” Battalion who took part in the liberation struggle of Artsakh. He represents and from moral-psychological perspective assesses the historical significance of the liberation of Shoushi city on May 8-9, 1992.

Souren Martikyan, Commander Vardan Mamikonyan

The young Major of RA Armed Forces makes a thorough strategic analysis of the military talent of the Armenian Sparapet of the 5th century. His analysis is particularly based on the example of Khaghkhagh battle (450 A. D.). The author proves that some of Vardan’s military methods were put into practice for the first time in the world history of Military Art.

Tariel Ghajoyan, The Mormons in our Home

The author thoroughly discusses the Mormons’ sectarian ideology and ascertains that the activity of this heterodoxy in RA constitutes threat to the Armenian State and the National Security.

“Arevik” Computer Courses in Armenian

A CD of lessons for Armenian children published in Aleppo, on the initiative and sponsorship of the Armenian Section of Galoust Gulbengyan Foundation is presented. It is stressed the importance of such CDs in the preservation of the Armenian Culture and Education in the Diaspora.

Artavazd Avagyan, Armenia: The Armenian Church and Clergy

The author, a USA citizen, criticizes the two Catholicos of the Armenian Church for renunciation of the Armenian national traditions by involvement in the Ecumenical Movement. He claims loyalty to the Armenian spiritual values.

Arshakouni, “The Highlight” of the Month – The Internal Political Situation is Aggravating...

The author analyses the strained internal political situation of RA and its development variants. He believes that the only way out is the constructive dialogue between the opposition and the authorities.

Mavr Danielyan, Authorities – Opposition: A Dialogue of the Deaf

The author satirically expresses his opinion that the RA authorities and the opposition are talking about almost the same, nevertheless they do not want to listen to each other.

Mavr Danielyan, Let’s Build the Triumph in Armenians’ Soul

The author calls to see the reality as it is. He induces to see also the good features besides the bad ones, and at any rate not to lose the faith in the bright future of the Armenians.

Silva Kaputikyan, Kocharyan Must Go

The famous Armenian poetess protests RA President Robert Kocharyan’s harsh methods towards the demonstrators on April 12-13 night. She declares that she has decided to turn back her “St. Mesrop Mashtots” order awarded by the RA President some years ago.

Gevorg Yazedjyan, Danger of Complete Denationalization of the Public Education in RA

The member of the journal’s Editorial Board indicates and thoroughly analyses the dangerous sides of the document called “Educational System State Project” in the education of new Armenian generations.

Hasmik Goulakyan, “We Must Try to Keep Our National Identity”

Interview with Rober Hattechyan, a well-known writer and the editor-in-chief of “Marmara” daily paper published in Constantinople, Turkey. The conversation is focused on the actual state of the Armenian language in the city and in general in Turkey along with the issues of the Armenian community of the country.

New Publications

Bibliographical data and annotations of new publications in RA and abroad related to the Armenian spiritual values.

Open Letter to All Armenians

Melkonyan Educational Institution (Cyprus) Alumni Associations’ Federation appeals to all Armenians in the world to support and help them in their struggle against the closure of MEI.

Simon Maghakyan, Russel Mins: “I don’t Think that USA Will Ever Recognize the Armenian Genocide”

According to the American-Indian leader, the USA, itself a criminal state, will never recognize the Armenian Genocide.

The “Artsiv” (“Eagle”) Soars for the Tenth Year

Congratulations to the Lebanese Armenian literary magazine and reprint of two articles from the March 2004 issue of the magazine concerning RA-Diaspora relations.

Amalya Edigaryan, Hadrout Short Stories

The genealogy, concerns and hopes of Davtyan family settled in Taghasser village near Hadrout city, NKR.

Samvel Iskandaryan, Relations of the Armenian and the World Literature

The author proves that the Armenian literature of the Golden and Middle Ages is the link thanks to which the world and the Armenian literature are not split. The author raises the problem of crucial importance of introducing foreign societies to the Armenian literature.

Gohar Vardoumyan, Narekatsi, the “Miracle-Maker”

The author-ethnographer introduces folk sayings and various narratives about St. Grigor Narekatsi, which confirm that not only Narekatsi was sanctified, but also his belongings and his grave.

Levon Melik-Shahnazaryan, Obstacle and the Totem of the “Transition Period”

The specialist in International Relations rigorously criticizes Babken Harutiunyan and Alexander Iskandaryan who have falsified the Armenian History in their article <Armenia: “The Karabakhization” of the National History> published in

Moscow in 1999 and 2003.

Rosa Gabrielyan, Transcaucasia or South Caucasus?

The author believes that the replacement of the concepts of “Transcaucasia” and “Middle Asia” by “South Caucasus” and “Central Asia” was made by the American politicians and is pursuing long-range interests of USA.

Emma Begjanyan, The Implementation of the American Democracy Model?

The author represents and analyses the “Great Middle East” American project and Bernard Luis’s viewpoints in this context. She concludes that the implementation of this project and the forced application of the Western model of democracy in the region are fraught with unpredictable consequences for the countries of the region as well as for the West and particularly for the USA.

Supplement – Armen Ayyazyan, Science and the Falsification can not Coexist

The author, a Candidate of Historical Sciences, responds to the bias criticisms to his address during and after the organized crackdown of his doctorate dissertation on Dec. 9, 2003.

КРАТКОЕ СОДЕРЖАНИЕ

От редакции Чего хотят они, и чего хотим мы?..

Обсуждено, ставшее за последнее время частым, признание факта Геноцида армян, утверждено понятие “Ай Дат” (Армянский вопрос), а приравнивание его решения лишь к признанию геноцида считается заговором.

Асмик Гулакян 1918 год. Майские героические сражения

Представлены героические битвы в Сардарапате, Баш-Апаране и Караклисе и дается их историческая оценка.

Доклад полковника Николая Корганова командующему Армянского корпуса

Отчет участника героических боев в Караклисе 1918г., который печатается в переводе с частичными сокращениями.

Асмик Гулакян Победа духа армянского

Интервью с репатриантом из Ливана, участником освободительной борьбы Арцаха, командующим шушинского батальона “Арандзнаки” – Жирайром Сефилянном, где с морально-психологической точки зрения оценивает историческое значение освобождения Шуши 8-9 мая 1992г.

Сурен Мартикян Полководец Вардан Мамиконян

Молодой майор вооруженных сил РА подвергает подробному стратегическому анализу военный талант армянского спарапета 5-го века, в частности на примере боя в Хагхаге в 450г. и показывает, что некоторые его военные уловки использованы

здесь впервые в истории мирового военного искусства.

Тариел Гаджоян Мормоны в нашем доме

Автор подробно обсуждает идеологию мормонской секты и доказывает, что ее деятельность в РА угрожает государственной и национальной безопасности РА.

“Аревик” - компьютерный курс на армянском языке

Представляется изданный в Алеппо (Сирия) по инициативе и при поддержке Армянского Отдела Фонда Галуста Гюлбеняна - первый для армянских детей курс-CD и оценивается его значение в деле сохранения армянского духа и национального воспитания.

Артавазд Авагян Армения: Армянская церковь и духовенство

Автор из США критикует двух католиковос Армянской церкви за отказ от армянских традиций из-за попадания под влияние экуменического движения. Он требует оставаться верными системе армянских духовных ценностей.

Аршакуни “Гвоздь” месяца. Обострение внутриполитической ситуации...

Автор анализирует напряженную внутриполитическую ситуацию в РА и возможные варианты ее разрешения. По мнению автора единственный выход - конструктивные переговоры между оппозицией и властью.

***Մաքր Դանիելյան* Власть-оппозиция - диалог глухих**

Автор в сатирическом стиле изъясняет мнение, что власти и оппозиция РА говорят об одном и том же, однако, в то же время, не хотят слушать друг друга.

***Մաքր Դանիելյան* Построим победу в душе армян**

Автор призывает видеть реальность такой, какая она есть. Он призывает видеть наряду со всеми плохими явлениями и хорошие, а во всех случаях - не терять надежды на яркую армянскую перспективу.

***Տիլվա Կապուտիկյան* Кочарян должен уйти**

Письмо протеста именитого поэта и общественного деятеля против беззакония и насилия со стороны президента РА и ее решение вернуть медаль “Св. Месроп Маштоц”, врученную в свое время ей президентом.

***Դեգորկ Կյեզեյան* В РА общееобразование стоит на пути полной денационализации**

В документе “Государственный проект системы образования” член редколлегии журнала указывает опасности в воспитании нового поколения.

***Ասմիկ Գուլակյան* Будем стараться сохранить нашу самобытность в своих домах**

Интервью с редактором Константинопольской газеты “Мармара” (Турция), известным писателем Робером Аттечяном, где наряду с проблемами колонии выдвигается проблема состояния армянского языка в самом Полисе и во всей Турции.

Новые издания

Представлены изданные в РА и за рубежом новые издания с библиографическими данными и краткими содержаниями.

Открытое письмо всем армянам

Обращение Объединенного общества выпускников учебного заведения Мелконян (Кипр) армянам всего мира всячески поддерживать их усилия - сохранить учебный центр.

***Տիմոն Մագակյան* Рассел Минс: “Не думаю, что США когда-либо признает Геноцид армян”**

Раздумья вождя американских индейцев о Геноциде армян. Согласно Минсу США, будучи сама страной, совершившей геноцид над индейцами, некогда не признает Геноцида армян.

Десятилетие полета “Арцива” (Орла)

Поздравления армянской общественной газете

“Арцив” в Ливане и переиздание двух публикаций оттуда об отношениях РА-диаспора.

***Ամալիա Էդիգարյան* Гадрутские миниатюры**

Генеалогическое древо, проблемы и надежды семьи Давтянов, устроившихся в селе Тахасер в пригороде города Гадрут НКР.

***Տամվել Իսկանդարյան* Вопросы отношений между армянской и мировой литературой**

Автор доказывает, что именно армянская литература Золотого века и средневековья была связующим звеном, благодаря которому и не прервалась связь между армянской и мировой цивилизацией. Автор поднимает вопрос важности значения ознакомления иностранцев с армянской литературой, видя его решение в общении с иностранными культурами на крепких национальных основах.

***Դոար Կարդումյան* Нарекаци - “чудотворец”**

Автор-этнограф представляет народные высказывания и легенды о Св. Григоре Нарекаци.

***Լեւոն Մելիկ-Մախնազարյան* Запрет и тотем “переходного периода”**

Политолог-преподаватель подвергает строгой критике “дуэт” из РА Бабкен Арутюнян-Александр Искандарян - за фальсификацию армянской истории в статье опубликованной в Москве - “Армения: “Карабахизация” национальной истории”.

***Րոզա Գաբրիելյան* Закавказье или Южный Кавказ?**

Автор считает, что замена названий “Закавказье” и “Средняя Азия” понятиями “Южный Кавказ” и “Центральная Азия” была проведена американскими политологами и преследует далеко идущие планы США.

***Ձմմա Բեգիդջանյան* Прививание американской модели демократии?..**

Автор представляет и анализирует американский проект “Большой Средний Восток” - с точки зрения Бернарда Луиса и заключает, что его реализация и насильное внедрение западной модели демократии в странах региона, чревато непредсказуемыми последствиями, как для стран региона, так и для Запада, в частности США.

Վկլաճիշ - *Արմեն Այվազյան* Наука и фальсификация несовместимы

Автор, канд. ист. наук, отвечает на несправедливые выступления в его адрес в связи преднамеренного провала защиты его докторской диссертации 9 декабря 2003г.

ՇՐՋԱԴԱՐԶ

Համահայկական ամսագիր

Լրատվական գործունեությունն
իրականացնող
«Վերածննդի համախմբում» ՍՊԸ

Հասցե՝ 375002, Երևան,
Լեոյի փող. 13, բն. 7
հեռ.՝ (3741) 57 84 97, 53 93 13
հեռապատճեն՝ (3741) 53 93 44

Գրանցման վկայական՝ 03Ա 061322,
տրված է 19. 08. 2003թ.

Տպաքանակը՝ 2000 օրինակ, 60 էջ

Խմբագրակազմ՝
Գևորգ Յազըճյան
(համարի պատասխանատու),
Հասմիկ Գուլակյան

Համագործակցությամբ՝ «Ազատ ծայն»
(Կիպրոս), «Հայաստան» (Հունաստան),
«Նոր հորիզոն» (Շվեդիա) և «Ափիլոք»
(Լիբանան) պարբերականների և
«Վերածննդի համախմբում»
հայրենասիրական հ/կ-ի (Երևան)

ШРДЖАДАРДЗ

Всеармянский журнал

Учредитель:

“Верацннди амахбум”
патриотическая общ. организация

Издатель:

ООО “Верадзннди амахбум”

Сотрудничество:

“Азат дзайн” (Кипр), “Айастан”
(Греция), “Нор оризон” (Швеция),
“Спюрк” (Ливан)

Адрес: 375002, Ереван,
ул. Лео 13, кв. 7

Тел. (3741) 57 84 97, 53 93 13,
факс: (3741) 53 93 44

Редакционная коллегия:

Գեորգ Կազեճյան

Ասմիկ Գուլակյան

SHRJADARDZ

All-Armenian Magazine

Founder:

Veradzndi Hamakhboun
Patriotic NGO

Publisher:

Veradzndi Hamakhboun Co. Ltd.

With the cooperation of the periodicals
Azat Dzayn (Cyprus), Hayastan (Greece),
Nor Horizon (Sweden) & Spurk (Lebanon)

Editorial Board:


Գեորգ Կազեճյան

Ասմիկ Գուլակյան

Address: 375002, Yerevan,

Leo str. 13, # 7

Tel.: (3741) 57 84 97, 53 93 13,



ՄԱՅԻՍԸ՝ ՀԱՅՈՑ ՈԳՈՒ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱՄԻՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրական

Ի՞նչ են ուզում, և ի՞նչ ենք ուզում	...1
1918 թվական. Մայիսյան հերոսամարտեր	...2
Գնդապետ Նիկոլայ Կորգանովի զեկույցը՝ Հայկական կորպուսի հրամանատարին	...3
Հայոց ոգու հաղթանակը	...6
Ջորավար Վարդան Մամիկոնյան	...8
Սորմոնները մեր տանը	...11
«Արելիկ» Հայերեն Համակարգչային Դասընթացը	...14
Հայաստան. Հայ եկեղեցին և հոգևորականությունը	...15
Ամսվա «մեխը»	...17
Ներքաղաքական իրադրությունը սրվում է Իշխանություն-ընդդիմություն՝ խուլերի երկխոսություն	...17
Հայության հոգում հաղթանակ կառուցենք	...18
Քոչարյանը պետք է հեռանա	...21
ՀՀ-ում հանրակրթությունն ամբողջական ապագայնացման վտանգի տակ է	...22
«Պիտի ջանանք մեր ինքնությունը պահել մեր տան մեջ»	...23
Նոր հրատարակություններ	...26
Բաց նամակ համայն հայությանը	...29
Ռասել Մինս. «Չեն կարծում՝ ԱՄՆ-ը երբևէ կընդունի Հայոց ցեղասպանությունը»	...31
«Արծիւ»-ի ճախրանքի Տասնամեակը	...32
Հաղորդյան մանրապատումներ	...34
Հայ և համաշխարհային գրականության առնչակցության հարցեր	...35
Նարեկացին՝ «հրաշագործ»	...38
«Անցումային ժամանակաշրջանի» արգելքն ու տոտենը	...40
Անդրկովկաս, թե՛ Հարավային Կովկաս	...42
Ամերիկյան ժողովրդավարության մոդելի պատվաստո՞ւմ	...43

Ներդիր՝

Արմեն Այվազյան, Գիտությունն ու կեղծիքն անհամատեղելի են

Տպագրությունը՝ «Սամարկ» ՍՊԸ: Ամսագրի նյութերից արտատպումներ
կատարելիս հղումը «Շրջադարձին» պարտադիր է:

**Գինը՝ ԳԳ-ԼԳԳ՝ 500 դ., Եվրոպա՝ 3 եվրո, ԱՄՆ-Կանադա՝ 5 ԱՄՆ դոլար,
ՌԴ՝ 50 ռ., Իրան՝ 1000 թուման, Լիբանան՝ 3000 ւ. դ., Սիրիա՝ 75 ս. դ.**